Բնակարանների հարկը որոշելու համար ամեն մի քաղաքում կազմւում է առանձին կոմի-



սիա, որին նախագահում է հարկային տեսուչը (податной инспекторъ), անդամները ընտրւում են քաղաքի տնատէրերից։

Տարին մի անգամ, ամեն մի տնատէր պարտաւոր է մինչև յունուարի 7 տեղեկութիւն տալ այդ կամիսիային իւր տան բնակարանների և ստացած քրէհի մասին։ Եթէ այս տեղեկութիւնները նա իւր ժամանակին չտայ, կամ թէ կեղծէ, նա կենթարկւի տուգանքի՝ ուշացնելու դէպքում 50 րուբլի, կեղծելիս՝ մինչև 300 րուբլի։

Վերոյիշեալ կոմիսիան մինչև մարտի 7 բոլոր բնակարանատէրերին յայտարարութիւններ է ուղարկում հարկերի քանակութեան մասին։ Դըժգոհները մի ամսւայ ընթացքում կարող են բողոքել «նահանգական վարչութեան»։

### Բնակարաններ հարկի չեն ենթարկւում

1) այն բոլոր տները, որտեղ մարդիկ չեն ապրում, ինչպէս՝ օր. բոլոր դպրոցական, պետական, հասարակական, հիւանդանոցները, վաճառանոցների համար յատկացրած շինութիւնները։ 2) Վանքերը, առաջնորդարանները, թատրոնները, պալատները, գրադարանները, ընթերցարանները, կլինիկանոցները, (բացի օֆիցերների բնակարաններից) բանուորների բնակարանները գործարանին կից, բարեգործական նպատակների ծառայող տները և այլն։

## Դատաստանական պրիստավների վարձատրությունը

1) Ծանուցագրերի չափը (повѣстка) և այլ թղթեր ըստ պատկանելույն յանձնելու համար 2000 րուբլիանոց պահանջագումարից—25 կոպ., մինչև 5000 ր. 50 կոպէկ, 5000 ր. աւելին 1 րուբլի, երբ գումարը յայտնի չէ—50 կ.։

2) Շարժական կայքերը ցուցակագրելու և գնահատելու համար, 25 ր. գումարից՝ 25 կոպ., 50 ր. գումարից՝ 50 կոպէկ, 100 ր.—1 ր., 200-ից—2 ր., 300-ից—3 ր., 400-ից—4 ր., 500-ից 5 ր., իսկ 500 ր. մինչև 5000 ր.—5 ր. և 50 կ. էլ իւրաքանչիւր 100 րուբլուց բացի առաջին 500րուբլուց։

3) Շարժական կայքերը ցուցակագրելիս մինչև 50 կտորը, իւրաքանչիւր կտորից 5 կոպէկ, մինչև 100 ր.—3 կ., 100-ից աւելին 4-ական կ.։

4) Անշարժ կայքերը ցուցակագրելիս մինչև 500 ր.—2 ր. 50 կոպ., 500—1000 ր.—5 րուբ., 1000 ր. 2000—6 ր. 2--3000 ր.—7 ր., 3—4000 ր.—8 ր. 4—5000 ր—9 ր. 5000-ից աւելին 9 ր. և էլի 50 կոպ. իւրաքանչիւր 1000 ր. համար, բացի առաջին 5000-ից։



## Երդ. հաւատարմատարների վարձատրութեան չափը

1) Քաղաքացիական գործերը երկու ինստանցիաներում վարելու համար 500—2000 ր. գումարի համար 10%, 2000—5000 ր. գումարին առաջին 2000-ից 200 ր., 8% մնացածից։ 5000—25,000 ր. գումարից 400 ր. առաջին 5000-ից, և 4% մնացածից։ 25.000—75,000 ր. գումարից 1740 ր. առաջին 50,000-ից և 1% մնացածից։ 75,000-ից աւելին՝ 1990 րուբլի և մնացած գումարից էլ $^1/_2$% իւրաքանչիւր րուբլուց։

Առաջին ինստանցիայում գործը վարելու համար հաւատարմատարը ստանում է վերոյիշեալ վարձատրութեան $^2/_3$-ը, իսկ երկրորդ ինստանցիայի համար $^1/_3$-ը։

Երբ վարած գործի գումարը որոշ չէ, դատաւորն ինքն է որոշում վարձատրութեան չափը 50—1200 ր.։

Երբ գործը հաշտութեամբ է վերջանում կամ թէ առանց օրինական պատճառի հեռացւում է հաւատարմատարը, նա իրաւունք ունի դատով իր հասանելիքը պահանջել։

Եթէ գործը դադարում է, նա իրաւունք ունի ստանալու միայն վարձատրութեան $^1/_4$-ը,

բայց այդ $^{1}/_{2}$-ը առաջին ինստանցիայի համար չի կարող 200 րուբլուց աւելի լինել, իսկ երկրորդին 100-ից։

---

## Նօտարների վարձատրութիւնը

1. Նօտարական արձանագրութիւններ «актъ» կազմելու համար պէտք է վճարել մինչև 500 ր. գումարը 2 ր., 501—1000 ր. 3 րուբլի, իսկ 1000-ից աւելին 4 րուբլի և բացի այդ՝ 10 կ. իւրաքանչիւր 100 ր.։

2. Մուրհակները վաւերացնելու և նրանց մասին բողոք գրելու համար մինչև 500 ր.՝ 50 կ., 500-ից աւելին՝ 1 րուբլի և 10 կոպ. իւրաքանչիւր 100 րուբլուց։

3. Պայմանագրեր վաւերացնելու համար. մինչև 500 ր.՝ 1 ր. մինչև 1000 ր. 1 ր. 50 կ., 1000 ր. աւելի գումարին 2 ր. և 10 կ. պայմանագրի գումարի իւրաքանչիւր 100 րուբլուց։

4. Պատճէնը վաւերացնելու համար առաջին թերթից 25 կ., միւս թերթերից իւրաքանչիւր 25 տողից 10 կոպէկ։

5. Ստորագրութիւնը վաւերացնելու համար 10 կոպ.։

6. Փաստաթղթերի ներկայացման ժամանակը վաւերացնելու համար—25 կոպ.։



7. Արձանագրութիւններ և պայմանագրեր կազմելու համար, եթէ նրանց արժէքը որոշուած չէ, պէտք է վճարել՝ որքան վճարում են 1000 ր. արժող արձանագրութիւն կազմելու համար։

8. Հաւատարմաթղթեր (довѣренность) և հաշտութեան թղթեր (мировая запись) և միջնորդական թղթեր (третейская запись) կազմելու կամ վաւերացնելու համար—1 թերթից 1 ր. իսկ հետևեալներից 50 ական կոպ.։

9. Ուրիշ վաւերացումների 1-ին թերթից 50 կոպ. հետևեալներից՝ 20-ական կոպ.։

10. Զանազան թղթեր նօտարական գրքի մէջ անցկացնելու համար իւրաքանչիւր տողից 2 կ.։

11. Մէկ կողմից միւսին գրաւոր յայտարարութիւն տալու և այդ մասին առաջինին վաւերաթուղթ տալու համար—պէտք է վճարել 50 կ.։

12. Նօտարին պահ տուած փաստաթղթերի (բացի դրամական) իւրաքանչիւրի համար պէտք է վճարել ամսական 25 կոպ. իսկ կնքուած ծրարների համար ամսական 50 կոպ.։

13. Արձանագրութիւն կազմելու կամ վաւերացնելու ժամանակն իմանալու, կամ այդ մասին թուղթ ստանալու համար պէտք է վճարել 50 կ.

14. Երկրորդ, երրորդ և այլ անգամ քաղուածքներ (выписъ) դուրս տալու համար իւրաքանչիւր տողին 1 կոպէկ։

15. Որքունի գանձարանից կենսաթոշակ ստացող անձնաւորութեան կենդանի լինելը վկայելու համար պէտք է վճարել.—տարեկան մինչև 30 ր. կենսաթոշակ ստացողին 3 կ. 30—300 ր. 10 կ. 300-ից աւելին 20 կոպ.։ Մնացած այլ դէպքերում բացի կենսաթոշակից 50 կոպէկ։

16. Նօտարիուսին իւր պաշտօնասենեակից (կօնտօրա) դուրս կատարած գործի համար, պէտք է վարձատրել բացի գործի համար որոշուած գնից, նաև, մայրաքաղաքներում—3 րուբլի, նահանգական քաղաքներում—2 ր., գաւառական քաղաքներում—1 ր.։

17. Նօտարիուսին քաղաքի սահմանից դուրս տանելու համար ճանապարհածախս գնալու և գալու համար պէտք է վճարել ամեն վերստին 10 կ. իսկ երկաթուղով գնալիս, պէտք է վճարել թէ գնալու և թէ գալու համար II կարգի տոմսակի գին։ Բացի սրանից ճանապարհին կորցրած ժամանակի համար պէտք է վճարել մայրաքաղաքներից 5 ր., նահանգական քաղաքներից 3 ռուբ., մնացած այլ տեղերից—2 ր. եթէ միայն գնալ գալը մի ամբողջ օրւանից (сутка) աւելի չէ տևել, հակառակ դէպքում ամեն օրւայ համար (ոչ ամբողջ օրն էլ օր է հաշւում) վերոյիշեալ գնի համեմատ պէտք է վարձատրել։

18. Նօտարիուսը կարող է հէնց սկզբից իրեն հասանելիք վարձը պահանջել, երբ նորան հրաւիրում են պաշտօնասենեակից դուրս գործեր կատարելու։



---

## ՓՈՍՏ

**Հասարակ փակ** նամակների քաշը պէտք է լինի՝ տեղականը 1 ֆունտից ոչ աւելի, օտար քաղաքներինը՝ 5 ֆունտից։ Այն նամակները, որոնք փոստային վարչութիւնը պէտք է յանձնէ միմիայն պահանջողին, վերան պէտք է գրած լինի (до востребованію) (ցպահանջ). այսպիսի նամակները փոստը պահում է մինչև 6 ամիս։ Երբ հասցէի փոխարէն թոյլ է տրւում նշանակել պայմանական գրեր կամ նշաններ։ Հասարակ նամակները օտար քաղաքներ ուղարկելու համար պէտք է կպցնել 7 կ. նամակադրոշմ, տեղականը—3 կոպ. մայրաքաղաքներում—5 կոպ., Այն նամակներն ու ծրարները, երբ ուղարկւում են ոչ պաշտօնական անձանց, կարելի է պակաս կամ առանց նամակադրոշմի ուղարկել, այդ դէպքում ստացողը պէտք է կրկնակին՝ օրինակ 7 կ. փոխարէն 14 կոպ. վճարէ ու ստանայ, կարող է և հրաժարւել ստանալուց։ Այսպիսի ծրարների վերայ փոստ. վարչութիւնը գրում է «доплатное»։

Փակ նամակներով կարելի է զանազան փաստաթղթեր, պատկերներ և այլն ուղարկել բացի փողից։

Փակ նամակները ապահոված ուղարկելու համար, պէտք է վերան գրել «заказное», և աւելի պէտք է վճարել 7 կոպ., արտասահմանին— 10 կ. այսպիսի նամակների կորած դէպքում փոստային վարչութիւնը վճարում է 10 ռուբ., միայն պէտք է ներկայացնել անդորրագրերը։

Թէ հասարակ և թէ փակ նամակների մէջ արգելւում է փող դնել. նկատելու դէպքում փոստային վարչ. իրաւունք ունի փողի 1/4 մասը վերցնել իբրև տուգանք։

**Բաց նամակները** լինում են երկու տեսակ, առանց պատասխանի—3 կոպ., պատասխանով—6 կոպ., արտասահմանինը—4 կոպ., պատասխանով—8 կոպ.։ Բաց նամակները ապահովելու համար պէտք է աւելի տալ 7 կոպ., իսկ արտասահմանինը 10 կոպ.։

**Փաթեթներ** (бандерольныя отправленія). Փաթեթներով կամ բաց ծրարներով կարելի է ուղարկել զանազան տպագրական գործեր՝ գիրք բլանկ, գործի թղթեր, փաստաթղթեր, արձանագրութիւններ և այլն, ձեռագիր հեղինակութիւններ, ապրանքների նմուշներ, որոնք գին չունին. հաշւեցուցակներ և առհասարակ տյնպի-



սի թղթեր, որոնք ընթացիկ նամակների կամ գրագրութիւնների բնաւորութիւն չունին։ Օտար քաղաքներ ուղարկելու համար պէտք է ամեն 4 լոտին վճարել 2 կոպ. տեղականը՝ տպագրական գործերին 1 կ. 1 լոտին, իսկ 1 լոտից աւելին — 2 կոպ. ամեն 8 լոտին։ Փաթեթի քաշը կարող է լինել ոչ աւել քան 4 ֆունտ, իսկ ապրանքների նմուշները 28 լոտ։ Փաթեթները ապահովելու համար պէտք է վճարել և 7 կոպ.։

**Ծանրոցներ** (Посылки) լինում են գնահատուած (цѣнная) և առանց գնահատութեան (безъ цѣны)։ Ծանրոցները պէտք է լինեն կամ արկղներով և կամ քաթանով կամ այլ պաստառով ամուր փաթաթուած ու կարած։ Վերան կապած պէտք է լինի խաչաձև թոկով, որոնց ծայրերը կնքւում են փոստատան կնքով։ Արգելւում է ծանրոցների մէջ փակ նամակներ կամ փող դնել. նամակների համար ամեն 1 լոտից 1 ռուբ. տուգանք է առնւում, իսկ փողից՝ 1/4 մասը։ Հասցէն չի կարելի գրել թղթի վերայ։ Չգնահատուած ծանրոցների համար փոստը ոչինչ չի վճարում գնահատուած ծանրոցները 20.000 ռուբլուց, քաշը 3 փութից աւել չի կարելի։

Ծանրոցներ ուղարկելու համար ամբողջ կայսրութիւնը բաժանուած է 3 գօտիի (մասի). 1) Եւրոպական Ռուսաստան՝ Անդրկովկասի հետ միասին. 2) Արևմտեան Սիբիրը, Թուրքեստանը և

կապւեան երկիրը. 3) Արեւելեան Սիբիր։

Ծանրոցները ըստ քաշի բաժանւում են՝ ա. մինչև 2 ֆ., բ. 2—7 ֆ., գ. 7—12 ֆ., գ. 12 ֆնտից աւելի։

Պէտք է վճարել հետևեալ չափով։

| Ծանրոցների քաշը | I գօտի | II գօտի | III գօտի | | Միւս գօտիներ | |
|---|---|---|---|---|---|---|
| | Կ. | Կ. | Ր. | Կ. | Ր. | Կ. |
| ա. 2 ֆ. | 25 | 35 | — | 45 | — | 45 |
| բ. 2—7 ֆ. | 45 | 65 | — | 85 | — | 85 |
| գ. 7—12 ֆ. | 65 | 85 | 1 | 25 | — | 25 |
| դ. 12-ից աւելի իւրաքանչիւր ֆնտի համար։ | 5 | 10 | — | 15 | — | 15 |

Գնահատւած ծանրոցների վերայ պէտք է գրել արժէքը «цѣнная посылка на (столько) руб.» և մանրամասն հասցէն։ Իւրաքանչիւր ծանրոցի հետ պէտք է ներկայացնել նրա համար յատկացրած առանձին բլանկը, որ (сопроводительный листъ) է կոչւում, վերան մանրամասն



հասցէն գրւած. այս բլանկը երկու գոյնի է լինում՝ սպիտակ և վարդագոյն. սպիտակը չը գնահատւածների համար է. իսկ վարդագոյնը գնահատւած ծանրոցների։ Այս բլանկների վերայ է կպցւում ծանրոցների համար որոշւած տուրքը։

**Նոր կարգադրութիւն** ծանրոցների համար. առաջին անգամ ծանուցագիր տալուց 8 օր յետոյ եթէ չի ստացւում, յանձնւում է երկրորդ անգամ ծանուցագիր շրջաբերականով, որի համար և վերցւում է ստորագրութիւն։ Այս երկրորդ ծանուցագրից դարձեալ 8 օր յետոյ եթէ չի ստացւում ծանրոցը, ամենայն օր պահեստի համար (на храненіе) առնւում է 5 կոպ.։

**Դրամական ծրարների** վերայ պէտք է գրել «денежный» և փողի քանակութիւնը։ Այդպիսի ծրարները պէտք է յանձնել ատրճանաւորին, որպէսզի նա ստուգէ գումարը։ Կարելի է ուղարկել թղթադրամ, տոկոսաբեր թղթեր, կտրոններ և այլն։ Ծրարի քաշը 20 ֆնտ. ոչ աւել։

Դրամաւոր ծրարները ուղարկելու համար պէտք է վճարել՝ 7 կոպ. ամեն մի լոտին, պատւէր և անդորրագրի համար—7 կոպ. և ապահովեան տուրք։

**Ապահովութեան տուրք** վճարւում է մինչև 600 ր. գումարին, ամեն րուբլուց ½ կոպէկ, 600—1600 րուբլուն ¼ կոպ. և 1 րուբ. 50 կոպ.

միանւագ. 1600 ր. գումարից աւելին $1/8$ կոպ. և էլի 3 ր. 50 կ. միանւագ։

**Արժէքաւոր ծրարներ** (цѣнные пок.) վերայ պէտք է գրել «цѣнный»։ Այսպէսի ծրարներով կարելի է ուղարկել արժէքաւոր թղթեր՝ արժէթղթեր, մուրհակներ, իրեղէններ, փող միայն ոչ աւել 1000 րուբլուց։

Բաց արժէքաւոր ծրարները 15,000 ր. աւելի գնահատած չի կարելի, իսկ փակ արժէքաւոր ծրարները 500 ր. ոչ աւելի։

**Վերադիր վճարով** կարելի է ուղարկել ծանրոցներ, ապահոված նամակներ և փաթեթներ։ Վերան պէտք է գրել «наложеннымъ платежомъ» և փողի գումարը. ստացողը նախ պէտք է փողը վճարը, ապա ստանայ։ Վերադիր վճար կարելի է անել 200 ր. ոչ աւել։ Վերադրի համար պէտք վճարել իւրաքանչիւր րուբլուն 2 կ. ընդամենը 10 կոպ. ոչ պակաս։

**Դրամները փոստով** փոխադրելու (переводъ на почтѣ) համար մինչև 25 րուբ. 15 կ. մինչև 100 ր.—25 կոպ. 100 րուբլուց աւել չի կարելի փոխադրել մի փոխադրական բլանկով։

**Հեռագրով փոխադրելիս** (переводъ по телеграфу) պէտք է բացի վերոյիշեալ տուրքը տալ նաև հեռագրի 20 խօսքի վճարը ըստ տարիֆի։



Արժէքաւոր ծրարներ և ծանրոցներ կորցնելու դէպքում փոստի վարչութիւնը պատասխանատու է։ Այդ դէպքում պէտք է յայտարարութիւն տալ (заявленіе) Ն տարւայ ընթացքում. իսկ արտասահմանի համար մի տարւայ։ Յայտարարութեան հետ պէտք է ներկայացնել անդորրագրերը (квитанція)։

Փոստային հիմնարկութիւնների մէջ ընդունելութիւնը եւ ստացումը կատարւում է ամենայն օր առաւօտեան ժամը 8—2-ը։

Փոստատունը բոլորովին փակ է լինում՝ Նոր տարու, Զատկի կիւրակի օրը, Հոգեգալուստի օրը, Աւետումն ս. Աստուածածնի (մարտի 25-ին), Կայսեր թագադրութեան օրը (մայիսի 14-ին), Կայսեր անուանակոչութեանը (դեկտ. 6-ին), Ծնունդ. առաջին օրը՝ (դեկտ. 25)։ Իսկ ժամը 8—10 բոլոր այն եկեղ. և կայսերական տօներին, երբ պաշտօնական ատեանները փակ են։

---

## ՀԵՌԱԳԻՐ

Իւրաքանչիւր հեռագրի համար պէտք է վճարել 15 կոպ. բացի այս, ամեն բառին 5 կոպէկ Եւրոպական և Ասիական Ռուսաստանի սահմաններում. առաջինի մէջ մտնում է Կովկասը, երկ-

բորդի մէջ՝ Անդրկասպեան երկիրը։ Առաջին մասից երկրորդ մասը բառի վճարն է 10 կոպ.։ Քաղաքային հեռագրի բառին 1 կոպ.։ Հեռագրի մէջ ամենաերկար խօսքը 15 տառից աւել չը պէտք է լինի։ Ընդգծումը մի բառ է հաշւում, տիրէ, չակերտ, կէտ, փակագիծ չի հաշւում. թւանշաններից 5 թւանշանը մի խօսք է հաշւում, թւանշանի կարգում իւրաքանչիւր կէտ հաշւում է մի թւանշան։

Երբ ուզում են, որ հեռագիրը անմիջապէս ուղարկւի, առանց յետաձգելու, վերան գրում են «срочная», այսպիսի հեռագրին սովորական գնից երեք անգամ աւել պէտք է վճարել։

**Պատասխանով հեռագիր** ուղարկելու համար պէտք է գրել «отвѣтъ уплаченъ». սորա համար հեռագրատանը կտանեն 10 խօսքի վճարը։ Ցանկացողը կարող է աւել կամ պակաս վճարել, դրա համար պէտք է գրել «отвѣтъ 18 словъ կամ 6 словъ»։ Միևնոյն հեռագիրը մի քանի հասցէներով ուղարկելու համար պէտք է վճարել իւրաքանչիւր հեռագրին և 10 խօսքին 15 կոպ.։

Միջազգային հեռագրները կարելի է գրել լատիներէն տառերով և բոլոր եւրոպական և մի քանի ասիական լեզուներով։ Վճարը իւրաքանչիւր երկրի համար առանձին է։



| | | | |
|---|---|---|---|
| Աւստ. Ունգ. | 11 կ. | Նորվեգիա . | 19 կ. |
| Անգլիա . . | 22 » | Նիդերլենդ. | 18 » |
| Բելգիա . . | 18 » | Շվէյցիա . . | 14 » |
| Բուխարա . | 10 » | Շվէյցարիա . | 17 » |
| Բուլղարիա . | 15 » | Չէրնոգորիա | 17 » |
| Գերմանիա . | 11 » | Պորտուգալ. | 23 » |
| Դանիա . . | 15 » | Պարս. (Հիւս.) | 24 » |
| Ճապոնիա 1. ր. | 13 » | Պարս. (Հար.) | 34 » |
| Իսպանիա . | 21 » | Սերբիա . . | 15 » |
| Իտալիա . . | 21 » | Տաճկաստ. . | 26 » |
| Հոլանդիա . | 14 » | Ռումանիա . | 8 » |
| Յունաստան . | 23 » | Ֆրանսիա . | 15 » |

## ԽՆՅՈՂԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԱՆՆԵՐ

Խնայողական գանձարանների նպատակն է աղքատ և չունևոր մարդկանց միջոց տալ հաւաքելու մի փոքրիկ գումար, իրանց աշխատանքից յետ գցած փողով։

Բանւորները, արհեստաւորները իրենց շաբաթական աշխատանքից որոշ մասը յետ գցելով,

կարող են յանձնել գանձարանին (եթէ իրանց մօտ մնար գուցէ ծախսէին) և ապագայում կունենան մի բաւականին մեծ գումար։ Այսպէս կարող են անել և ծնողները իրենց անչափահաս որդոց համար։

Խնայողական գանձարան կարելի է յանձնել 25 կոպէկից սկսած մինչև 1000 րուբլի։ Ընկերութիւնների և հիմնարկութիւնների համար — 3000 րուբլի, իսկ եկեղեցիների համար որքան կամենան։

Խնայողական գանձարանը իր վերցրած փողերի համար վճարում է հետևեալ չափերով տոկոս։

1) Մինչև 1000 ր. տարեկան $3^{6}/_{10}\%$,

2) Հիմնարկութիւնների և ընկերութիւնների 1000 ր. աւելի գումարների համար $2^{4}/_{10}\%$։

Տոկոսը հաշւում է ամսի 1-ից միայն ամբողջ ամիսների համար։ Մի րուբլուց պակաս գումարին տոկոս չի տրւում։

Փողը ում անունով որ յանձնւում է գանձարանը, դառնում է նրա սեփականութիւնը։ Ամեն մարդ իրաւունք ունի ուրիշի անունով փող դնել գանձարանը և փողի տէր կդառնայ նա, որի անունով գրւած է։

Խնայողական գանձարանը իր ստացած փողերը գրում է առանձին տետրակի մէջ և տալիս է փողի տիրոջը։ Եթէ մեռնում է այն մարդը, որի



անունով գրւած է փողը, այդ դէպքում խնայողական գանձարանը փողը կարող է դարձնել միայն նրա ժառանգներին, երբ նրանք օրինական կարգով հաստատ են։ Փող յանձնողը ամեն ժամանակ կարող է յետ պահանջել իր փողերը, իսկ գանձարանը պարտաւոր է կատարել նրա պահանջը։

Խնայողական գանձարանները բացւած են փոստ-հեռագրական հիմնարկութիւնների և պետական գանձարանների կից։

## Խնայողական մարկաներ

Խնայողական մարկաները սահմանւած են նրա համար, որ աւելի դիւրութիւն տրւի մարդկանց ամենափոքր գումարները նոյն իսկ խնայել։

Խնայողական մարկաները լինում են 5 և 10 կոպէկանոց և վաճառւում են խնայողական գանձարաններում և փոստատներում։

Այս մարկաները պէտք է կպցնել առանձին կարտերի վերայ, որոնք տրւում են ձրի։ Երբ այս ձևով մի րուբլին լրանայ, կարտերը կարելի է ներկայացնել խնայողական գանձարանը և տետրի մէջ գրել տալ։

Այսպիսի հեշտ ձևով կարելի կը լինի ձեռքն ընկած 5—10 կոպէկներով ժամանակի ընթացքում նեղ օրի համար մի գումար տնտեսել։

# IV. ՕՐԷՆՍԳԻՏՈՒԹԻՒՆ

## Զինուորագրական կանոններ

Ցղամարդիկ առանց բացառութեան ենթարկւում են զինուորագրութեան։ Զինուորական ծառայութեան գնալը որոշւում է վիճակով, որ հանում է իւրաքանչիւր անձն միմիայն մի անգամ իւր կեանքում։ Վիճակահանութեան են ենթարկւում այն 21 տարեկան անձինք, որոնք ծնւել են մինչև այդ տարւայ հոկտեմբերի 1-ը, իսկ հոկտեմբերի 1-ից յետոյ ծնւածները կանչւում են հետևեալ տարին։

Ամենակարճ հասակը զինուորագրութեան համար համարւում է 2½ արշ. 2 վերշ.։ Այն անձինք, որոնք այնպիսի հիւանդութիւն ունին, որ բոլորովին չեն ազատւում զինուորական ծառայութիւնից, կամ թէ ֆիզիքապէս բոլորովին զարգացած չեն, կամ թէ երկար հիւանդութիւնից յետոյ դեռ ևս չեն կազդուրւած, այդպիսիներին տրւում է մի տարի ժամանակամիջոց, եթէ տարին լրանալուց յետոյ դարձեալ ծառայութեան անյարմար են համարւում, կրկին տրւում է մի տարի ժամանակամիջոց։ Հակառակ դէպքում նրանք կամ համարւում են պահեստում, եթէ ընդունակ են համարւում զէնք կրելու, կամ անընդունակութեան պատճառով ընդմիշտ ազատւում են։



## Արտօնութիւնները

Յօդ. 45. Առաջին կարգի արտօնութեամբ օգտւում են. ա) միակ աշխատանքի ընդունակ որդին որի հայրը աշխատանքի անընդունակ է կամ մայրը այրի, բ) միակ աշխատանքի ընդունակ եղբայրը, որը ունի մէկ կամ մի քանի որբ եղբայրներ կամ քոյրեր, գ) միակ աշխատանքի ընդունակ թոռը, որի պապը կամ տատը աշխատանքի ընդունակ որդի չունին, դ) ընտանիքի միակ որդին, եթէ մինչև անգամ նա ունենայ աշխատանքի ընդունակ հայր, ե) այն ապօրինածին զաւակը, որի հոգացողութեան ներքոյ է աշխատանքի ընդունակ ուրիշ որդիք չունեցող իւր մայրը կամ քոյրը կամ թէ աշխատանքի անընդունակ եղբայրը։

Այս արտօնութեամբ օգտւում են նաև ա) աշխատանքի անընդունակ աներոջ կամ այրի զոնքանչի ընտանիքում միակ աշխատանքի ընդունակ փեսան, եթէ վերջինս ապրում է աներոջ կամ այրի զոնքանչի հետ միևնոյն տնտեսութեամբ և կամ նրա հետ մի ծուխ են կազմում (տնփեսայ) և բ) ընտանիքաւոր միայնակները։

Երկրորդ կարգ.—Աշխատանքի ընդունակ միակ որդին, որի հայրը նոյնպէս աշխատանքի ընդունակ է, բայց որը ունի մէկ կամ մի քանի աշխատանքի անընդունակ եղբայրներ (յօդ. 46)։

Երրորդ կարգ.—Այն անձը, որ տարիքով անմիջապէս հետեւում է այն եղբօրը, որը զինուորակոչով իսկական ծառայութեան մէջ է գտնւում կամ մեռել է այդ ծառայութեան մէջ և կամ անյայտ կերպով կորել է պատերազմում։

Ծանօթ. Այն օտար՝ զաւակները, որոնք որդեգրուել են օրինական ճանապարհով մինչև 10 տարեկան հասակը, համարւում են հարազատ որդիք։

Յօդ. 46. Ընտանիքի մէջ աշխատանքի ընդունակ համարւում են 18 տարեկանից մինչև 55 տարեկան անձինք, բացի հետևեալ անձնաւորութիւններից. 1) հիւանդութեան պատճառով աշխատել չկարողացողները, 2) աքսորւածները, 3) երեք տարի անյայտութեան մէջ կորածները և 4) զինուորական հաստատ ծառայութեան մէջ գտնւածները։

Առաջին և երկրորդ կարգի արտօնութիւն ունեցողները զրկւում են իրենց արտօնութիւնից, եթէ նրանց հայրը կամ մայրը, պապը կամ մամը յայտնում են, որ նրանք ընտանիքի պահպանութեան համար չեն ծառայում։

Յօդ. 47. Արտօնութիւն ունեցողները զինուորական ծառայութեան են կանչւում միայն այն դէպքում, երբ նորակոչ զինուորների թիւը լրացնելու համար բաւական չեն լինում վիճակահանութեան կանչւածները։



Յօդ. 201. Այն գանգատները, որոնք տրւում են մասնաւոր զինուորակոչական ցուցակներ կազմող հիմնարկութիւնների և պաշտօնակատար անձանց դէմ՝ այդ ցուցակների մէջ մտցրած անճշտութիւնների մասին, պէտք է ներկայացւեն երկու շաբթւայ ընթացքում, հաշւելով մասնաւոր զինուորակոչական ցուցակները ներկայացնելու համար 118-րդ յօդ. որոշւած վերջնական ժամանակամիջոցի օրից (մայիսի 1-ից)։

Յօդ. 205. Գաւառական շրջանի և քաղաքային ատեանների դէմ տրւող գանգատները.—թէ զինուորակոչական ցուցակների անճշտութեան վերաբերմամբ, թէ արտօնութիւններ նշանակելու և թէ ծառայութեան պիտանի լինելու վերաբերմամբ ներկայացնում են նահանգական կամ վիճակային զինուորագրական ատեաններին 4 շաբաթւայ ընթացքում, հաշւելով վճիռը հաշւելու օրից։

Յօդ. 211. Արտօնութիւններ նշանակելու անճշտութիւնները և կամ զինուորական ծառայութեան համար պիտանի լինելը որոշ անճշտութիւնների համար տրւած գանգատների մասին՝ նահանգական կամ վիճակային ատեանների կայացրած վճիռների դէմ. թոյլ է տրւում գանգատ ներկայացնել Կառավարիչ Սենատին (առաջին դեպարտամենտ) 2 ամսւայ ընթացքում, հաշւելով վճիռը յայտնելու օրից։

## ՆՈՐԱԿՈՉ ԶԻՆՈՐՆԵՐԻ ՉԱՓԸ

| Բոյը | | | | Կուրծքը | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2 | արշ. | $2^{4}/_{8}$ | վերշոկ. | 1 | արշ. | $1^{1}/_{8}$ վերշոկ. |
| 2 | » | $2^{5}/_{8}$ | » | 1 | » | $1^{4}/_{8}+{}^{1}/_{16}$ |
| 2 | » | $2^{6}/_{8}$ | » | 1 | » | $1^{5}/_{8}$ |
| 2 | » | $2^{7}/_{8}$ | » | 1 | » | $1^{5}/_{8}+{}^{1}/_{16}$ |
| 2 | » | $3$ | » | 1 | » | $1^{6}/_{8}$ |
| 2 | » | $3^{1}/_{8}$ | » | 1 | » | $1^{6}/_{8}+{}^{1}/_{16}$ |
| 2 | » | $3^{2}/_{8}$ | » | 1 | » | $1^{7}/_{8}$ |
| 2 | » | $3^{3}/_{8}$ | » | 1 | » | $1^{7}/_{8}+{}^{1}/_{16}$ |
| 2 | » | $3^{4}/_{8}$ | » | 1 | » | $2$ |
| 2 | » | $3^{5}/_{8}$ | » | 1 | » | $2^{1}/_{16}$ |
| 2 | » | $3^{6}/_{8}$ | » | 1 | » | $2^{1}/_{8}$ |
| 2 | » | $3^{7}/_{8}$ | » | 1 | » | $2^{1}/_{8}+{}^{1}/_{16}$ |
| 2 | » | $4$ | » | 1 | » | $2^{2}/_{8}$ |
| 2 | » | $4^{1}/_{8}$ | » | 1 | » | $2^{2}/_{8}+{}^{1}/_{16}$ |
| 2 | » | $4^{2}/_{8}$ | » | 1 | » | $2^{3}/_{8}$ |
| 2 | » | $4^{3}/_{8}$ | » | 1 | » | $2^{3}/_{8}+{}^{1}/_{16}$ |
| 2 | » | $4^{4}/_{8}$ | » | 1 | » | $2^{4}/_{8}$ |
| 2 | » | $4^{5}/_{8}$ | » | 1 | » | $2^{4}/_{8}+{}^{1}/_{16}$ |
| 2 | » | $4^{6}/_{8}$ | » | 1 | » | $2^{5}/_{8}$ |
| 2 | » | $4^{7}/_{8}$ | » | 1 | » | $2^{5}/_{8}+{}^{1}/_{16}$ |
| 2 | » | $5$ | » | 1 | » | $2^{6}/_{8}$ |
| 2 | » | $5^{1}/_{8}$ | » | 1 | » | $2^{6}/_{8}+{}^{1}/_{16}$ |
| 2 | » | $5^{2}/_{8}$ | » | 1 | » | $2^{7}/_{8}$ |
| 2 | » | $5^{3}/_{8}$ | » | 1 | » | $2^{7}/_{8}+{}^{1}/_{16}$ |
| 2 | » | $5^{4}/_{8}$ | » | 1 | » | $3$ |
| 2 | » | $5^{5}/_{8}$ | » | 1 | » | $3^{1}/_{16}$ |
| 2 | » | $5^{6}/_{8}$ | » | 1 | » | $3^{1}/_{8}$ |
| 2 | » | $5^{7}/_{8}$ | » | 1 | » | $3^{1}/_{8}+{}^{1}/_{16}$ |



| արշ. | բոյը. | | վերշոկ. | արշ. | կուրծքը. | վերշ. |
|---|---|---|---|---|---|---|
| 2 | » | $6$ | » | 1 | » | $3^{2}/_{8}$ |
| 2 | » | $6^{1}/_{8}$ | » | 1 | » | $3^{2}/_{8}+{}^{1}/_{16}$ |
| 2 | » | $6^{2}/_{8}$ | » | 1 | » | $3^{3}/_{8}$ |
| 2 | » | $6^{3}/_{8}$ | » | 1 | » | $3^{3}/_{8}+{}^{1}/_{16}$ |
| 2 | » | $6^{4}/_{8}$ | » | 1 | » | $3^{4}/_{8}$ |
| 2 | » | $6^{5}/_{8}$ | » | 1 | » | $3^{4}/_{8}+{}^{1}/_{16}$ |
| 2 | » | $6^{6}/_{8}$ | » | 1 | » | $3^{5}/_{8}$ |
| 2 | » | $6^{7}/_{8}$ | » | 1 | » | $3^{5}/_{8}+{}^{1}/_{16}$ |
| 2 | » | $7$ | » | 1 | » | $3^{6}/_{8}$ |
| 2 | » | $7^{1}/_{8}$ | » | 1 | » | $3^{6}/_{8}+{}^{1}/_{16}$ |
| 2 | » | $7^{2}/_{8}$ | » | 1 | » | $3^{7}/_{8}$ |
| 2 | » | $7^{3}/_{8}$ | » | 1 | » | $3^{7}/_{8}+{}^{1}/_{16}$ |
| 2 | » | $7^{4}/_{8}$ | » | 1 | » | $4$ |
| 2 | » | $7^{5}/_{8}$ | » | 1 | » | $4^{1}/_{16}$ |
| 2 | » | $7^{6}/_{8}$ | » | 1 | » | $4^{1}/_{8}$ |
| 2 | » | $7^{7}/_{8}$ | » | 1 | » | $4^{1}/_{8}+{}^{1}/_{16}$ |
| 2 | » | $8$ | » | 1 | » | $4^{2}/_{8}$ |
| 2 | » | $8^{1}/_{8}$ | » | 1 | » | $4^{2}/_{8}+{}^{1}/_{16}$ |
| 2 | » | $8^{2}/_{8}$ | » | 1 | » | $4^{3}/_{8}$ |
| 2 | » | $8^{3}/_{8}$ | » | 1 | » | $4^{3}/_{8}+{}^{1}/_{16}$ |

## ԱՆՑԱԳՐԵՐ

Անցագիր տրւում է ստացողի մշտական բնակավայրում։ Անցագրի մէջ նշանակւում է նաև կինը (եթէ իր ամուսնու մօտ է ապրում). որդիքը, արական սեռի ազգականները, պահածունի երեխաները և այլ տոյն անձինք, որոնք մինչև 18 տարեկան դառնալը գտնւում են խնամատարութեան տակ։ 2) Չամուսնացած աղջիկները, ազգականուհիները և պահածունի աղջիկները, նոյնպէս և մինչև 21 տարեկան խնամատարութեան տակ գտնւած աղջիկները։ 3) Այն անձինք, որոնք հասակի մեծութեան կամ հիւանդութեան պատճառով չեն կարող առանց խնամատարի կառավարւել (յօդ. 10)։ Վերոյիշեալ անձանցից տղամարդիկ, մինչև 17 տարեկան հասակը (եթէ չեն գտնւում պետական ծառայութեան մէջ) և կանայք մինչև 21 տարեկան հասակը և չեն ամուսնացած, կարող են առանձին անցագիր ստանալ միայն ծնողների, խնամատարների, հոգաբարձուների թոյլտւութեամբ։

Այն անձինք, որոնք ենթակայ են զինւորագրութեան, բայց ժամանակամիջոց (отсрочка) չեն ստացած, այդպիսիների անցագրերը ոյժ ունի մինչև այն հոկտեմ. ամսի 15-ը, որ ժամանակ որ նրանք պիտի կանչւեն զինւորական պարտա-



ւորութիւն կատարելու։ Այն անձինք, որոնք արդէն մտցրւած են զինւորակոչական ցուցակներում զինւորական համապատասխան մասերում (участокъ), անցագիր կարող են ստանալ մինչև այն ժամանակ, երբ կներկայացնեն իրանց զինւորակոչական ցուցակներում գրւած լինելու մասին պատշաճաւոր վաւերաթուղթ (удостовѣреніе)։ Եթէ անցագիրը մաշւել է ու քայքայւել, կամ որևէ պատճառով վնասւել, կարելի է փոխել և նորը ստանալ։ Եթէ անցագիրը կորչի, տէրը այդ մասին յայտնելու է ոստիկանութեան՝ որը նրան կտայ՝ 1) նրա յայտարարութեան հիման վերայ վաւերաթուղթ (удостовѣреніе) նոր անցագիր ստանալու համար, 2) վեցամսեայ վկայագիր, այդ ժամանակ որը կծառայէ կորսւած անցագրի փոխարէն։ (Յօդ. 24)։ Մեռնողի անցագիրը վերադարձւում է ոստիկանութեան։

Անցագրի վերաբերեալ գանգատներ պէտք է տալ ոստիկանական կառավարութեան, մէշչանեան և արհեստաւորաց վարչութեան (мѣщанскія ремесленныя управы) վերայ՝ նահանգապետներին և գրադոնաչալնիկներին, 2) վոլոստային և գիւղական աւագների վերայ (волостная и сельская староста), — գաւառական գիւղական ատեաններին, միրաւոյ պոսրեդնիկներին, զեմսկի նաչալնիկներին։ Այս առթիւ տրւած խնդիրները

համար մարկա չի պահանջւում։ (Ցոյ. 31 և 32)։ Անցագիր տրւում է ձրի և դրա համար ոչ մի կոպէկ չպէտք է վճարել։

**Անցագիր գրքոյկներ** (паспортныя книжки)։ Ազնւականները (եթէ ծառայութեան մէջ չեն), նոքա, որոնք արձակւած են պետական ծառայութիւնից, սպաները, որոնք պահեստի զօրքի մէջ են համարւում, պատւաւոր քաղաքացիները, վաճառականները, ստանում են **Մշտական** (безсрочныя) անցագրի գրքոյկներ (паспортныя книжки)։ Պատւաւոր քաղաքացիները, վաճառականները և զանազան աստիճանաւորները (разночинцы) ստանում են անցագրի գրքոյկները ոստիկանական վարչութեան կարգադրութեամբ (Ցոյ. 33 և 34)։ Պետական ծառայութիւնից արձակւածները ստանում են այն տեղից, որտեղ վերջին անգամ ծառայում էին։ Նոքա, որոնք գտնւում են քաղաքացիական ծառայութեան մէջ, նոյնպէս և բոլոր դաւանութիւնների հոգևորականները, բացի հռովմէական կաթոլիկներից, մշտական անցագրի գրքոյկ ստանում են իրենց ծառայութեան տեղից կամ պատշաճաւոր հոգևոր վարչութիւններից։ Իւրաքանչիւր անցագիր գրքոյկի համար պէտք է վճարել միմիայն 15 կոպէկ։

**Ժամանակաւոր** անցագիր տրւում է մէշ-



չաններին, արհեստաւորներին և գիւղացիներին և լինում է երեք տեսակ՝ անցագրի գրքոյկ, հասարակ անցագիր և վկայական։ Անցագիր գրքոյկները տրւում են մշտական (безсрочный), 5 տարի ժամանակի, անցագիրը 1 տարի, իսկ վկայականը աւելի կարճ ժամանակի։

**Արտասահմանեան անցագիր.** — Արտասահմանեան անցագիր ստանում են նահանգապետից։ Նախապէս պէտք է ներկայացնել իր բնակավայրի ոստիկանութեան վարչութիւնից պատշաճաւոր վկայաթուղթ այն մասին՝ թէ արգելք չկայ նրան արտասահման գնալու։ Արտասահմանեան անցագիրը պէտք է ներկայացնել նաև այն հիւպատոսին (Консулъ), որի պետութեան սահմանից անցնելու է։ Անցագրի արժէքը 20 րուբլի է թէ մի մարդու և թէ նրա ամբողջ ընտանիքի համար, ամեն 6 ամսի համար։

# V. ԿՏԱԿ

Չափահասութեան հասած և իրաւունքներից չզրկւած իւրաքանչիւր մարդ կարող է կազմել կտակ, բայց կարողութեան բոլոր իրաւունքներից զրկւած մարդկանց կտակները ոչինչ նշանակութիւն չունին։ Բոլոր իրաւունքներից զրկւած մարդիկ համարւում են իբրև մեռած. Նրանց ամուսնական և ընտանեկան յարաբերութիւնները կարճանում են, կայքը անցնում է նրանց օրինաւոր ժառանգներին. Նրանք ոչ ազնւական են, ոչ վաճառական, ոչ քաղաքացի կամ գիւղացի, այլ անւանւում են տաժանակիր աշխատանքի դատապարտւած կամ աքսորական։ Կտակների համար օրէնքը սահմանել է ձևականութիւններ։ Պէտք է կատարել այդ ձևականութիւնները ամենայն ճշտութեամբ։ Եթէ ձևականութիւններից մէկնումէկը չէ պահւած, դատարանը չի հաստատում այդպիսի կտակը, մինչև անգամ եթէ չը կայ որև է վէճ կտակի դէմ։

Կտակը գրւում է կամ նոտարի մօտ, կամ տանը, առանց նոտարի։ Կտակողը պիտի ունենայ առողջ դատողութիւն, լաւ յիշողութիւն, այլ և պիտի լինի չափահաս, այսինքն 21 տարեկանից ոչ պակաս։

Կտակը պէտք է գրել ամբողջ թերթի վրայ,



որը ունի երկու կէս, գրել պարզ ու որոշ, առանց ուղղելու, ջնջելու և քերելու, իսկ եթէ կան սխալներ, կարելի է ուղղել միայն այն պայմանով, որ բոլոր սխալները մի առ մի յիշատակւեն կտակողի ստորագրութիւնից առաջ։ Կտակողը եթէ անգրագէտ է կամ հիւանդութեան պատճառով չի կարող գրել, կարող է յանձնել մի ուրիշին գրել կտակ իր անունից և ստորագրել իր փոխարէն։ Եթէ կտակը չէ գրւած կտակողի ձեռքով, պէտք է այդ կտակի վրայ լինի այն մարդու ստորագրութիւնը, որը գրել է կտակը և բացի դրանից երեք վկաներ էլ պիտի ստորագրեն։ Եթէ կտակը գրում է կտակողի խոստովանահայրը, այն ժամանակ թոյլատրւում է բաւականանալ երկու վկայի ստորագրութեամբ։ Կտակ ստորագրողը, կտակողի փոխարէն ստագրողը և վկաները պիտի առանձին, առանձին մարդիկ լինեն։

Կտակի տակ ստորագրողները պարտաւոր են ապագայում, երբ կտակը կներկայացւի դատարան հաստատութեան համար, վկայել, որ կտակը նոյն իսկ այն կտակն՝ է որը նրանք ստորագրել են կտակողի խնդրանօք, որը այդ ժամանակ ունէր առողջ դատողութիւն և լաւ յիշողութիւն։ Աւելի լաւ է վկաների օրէնքով պահանջւած թւից աւելի վկաների ստորագրել տալ կտակը, որովհետև մինչև կտակի հաստատւելը վկա-

ներից մէկը կարող է մնալ, միւսը գնալ հեռու և անյայտ տեղ։ Պէտք է ի նկատի ունենալ, որ նրանց օգտին կտակողը կտակի մէջ մի բան արած չլինի, որ նրանք չլինեն ոչ կտակակատար և ոչ խնամակալ (опекунъ)։ Վկաները պիտի լինեն գրագէտ, չափահաս և նրանց ստորագրութիւնները չի կարելի փոխարինել անւանական կնիք դընելով, մատը կնքելով և այլն։

Կտակի հաստատութիւնը.—Կանոնաւոր կերպով կազմած կտակը միայն այն ժամանակ է ստանում զօրութիւն, երբ մեռնում է կտակողը և երբ հաստատւում է օրինասահման կարգով։ Իւրաքանչիւր կտակ պիտի ներկայացնել նահանգական դատարանին ի հաստատութիւն մի տարւայ ընթացքում։ Հաստատութիւն ստանալու համար պէտք է ներկայացնել վկայական կտակողի մահւան մասին և 6 րուբլի փող, յայտարարութիւն տպագրելու և ակտը գրելու համար։ Նահանգական դատարանը, առանց երդման հարց ու փորձ անելով այն վկաներին, որ ստորագրել են տնային կտակի վրայ, հաստատում է կտակը և այդ մասին մակագրում է իսկական կտակի վերայ և ապա յայտարարում է, բայց կտակը յետ չի տըրւում մինչև պետական գանձարանին չը հասցի ժառանգական հարկը։

Եթէ ժառանգները չեն տւել զեկուցագիր



ժառանգական կալւածքի մասին (այսինքն թէ ինչ և ինչ բաներից է կազմւած ժառանգութիւնը), այդ դէպքում արքունական պալատը (казенная палата) յանձնում է ոստիկանութեան՝ յայտնի կացուցանել թէ ինչ բան է կայքը և ինչ արժէ։ Եթէ կայքը անցնում է կնոջ և որդիների օգտին և ամեն մի ժառանգի բաժինը հազար րուբլուց աւել է, այդ դէպքում ստացւում է մի կոպէկ րուբլուց։ Եթէ կայքը անցնում է խորթ աղջիկներին, տղաներին, եղբայրներին և քոյրերին և մեռած եղբայրների կամ քոյրերի որդիներին, ստացւում է չորս տոկոս։ Կողմնակի ազգականներից մինչև չորրորդ աստիճանը ըստացւում է վեց տոկոս, իսկ միւս բոլոր անձնաւորութիւններից, որոնք ժառանգում են կայքը—ութ տոկոս։ Իսկ երբ կայքը անցնում է մէկին իբրև սեփականութիւն և միւսին մինչև կեանքի վերջը տիրապետելու իրաւունքով, այն ժամանակ ժառանգական հարկը ստացւում է մինչև կեանքի վերջը տիրապետողից կէս չափով, իսկ այն մարդուց, որի սեփականութիւնը պիտի դառնայ կայքը՝ մինչև կեանքի վերջը տիրապետողի մահից յետոյ, ստացւում է ամբողջութեամբ։

Տնային արդ ու զարդից, այսինքն կահկարասիքից և առհասարակ 1000 ր. պակաս արժողութիւն ունեցող ժառանգութիւնից հարկ չի ստացւում։

Ժառանգները կամ կտակակատարները պարտաւոր են ժառանգութիւնից հասանելի հարկը տալ մի ամսւայ ընթացքում այն օրից, երբ իրանց կյայտնւի հարկի քանակութիւնը. այդ ժամանակամիջոցում չը տրւած արքունական հարկը առնւում է արքունական պալատի պահանջի համաձայն, ոստիկանութեան միջոցով և այդ դէպքում տուգանք է առնւում ամիսը մի տոկոս չը վճարած գումարից։

**Կեղծ կտակ:** Կեղծ է համարւում այն կտակը, որի վրայ կտակողի ստորագրութիւնը կեղծած է և կամ որի վրայ վկաները ստորագրել են են կտակողի մահից յետոյ։ Կարող է պատահել և այսպէս. բոլոր ազգականներին և վկաներին յայտնի է, որ կտակողը իսկապէս այնպէս է յայտնել իր կամքը, ինչպէս գրւած է, բայց եթէ այդ կտակը ստորագրում է մի ուրիշը այն պատճառով, որ կտակողը այդ ժամանակ գտնւում էր ուշաթափութեան մէջ, այդ տեսակ կտակն էլ կեղծ է։ Կտակի կեղծիքները կարող են լինել բազմատեսակ և օրէնքը պատժում է այն մարդկանց, որոնք ուղղել են, փոփոխել են կտակի խօսքերը և այդ պատիժը միևնոյնն է ինչպէս կեղծ կտակ շինողի համար։ Կտակ կեղծողները աքսորւում են Սիբիր։

**Անվաւեր կտակներ:** Անվաւեր են համարւում



այն կտակները, որ թողնում են բոլոր իրաւունքներից զրկւածները, խելագարները, ինքնասպանները։ Ցոհմային (այսինքն ժառանգաբար ուրիշից ստացած) կայքը չի կարելի կտակի մէջ նշանակել ուրիշի սեփականութիւն. այդպիսի կայքի սեփական տէրը միայն կարող է տիրապետութեան իրաւունքը կտակել իր կնոջը կամ ուրիշ մարդկանց։ Ցմահ տիրապետելու իրաւունքը սահմանափակւած է. տիրապետողի մահից յետոյ կայքը անցնում է կտակողի ժառանգներին։

Ոչ ոք իրաւունք չունի ցմահ տիրապետելու իրաւունքը յանձնել մի ուրիշին և ոչ սեփականատիրոջը։ Եթէ նա հրաժարւում է այդ կերպով կայքից օգտւելուց, նրա իրաւունքը ընդ միշտ կարճւում է։ Անվաւեր են այն անձանց օգտին արած կտակները, որոնք մեռել են կտակողից առաջ կամ զրկւած են իրաւունքներից։

Կտակողը իրաւունք ունի ամեն ժամանակ փոխել և ոչնչացնել իր արած կտակը։ Անպայման արգելւում է երկու մարդկանց մի կտակ գրել, ինչ բովանդակութիւն էլ ունենայ այդ կտակը։ Այս օրէնքի նպատակն այն է, որ եթէ մէկը կամենայ փոփոխել կամ ոչնչացնել իւր կարգադրութիւնը, հարկադրւած չլինի իւր կամքի ազատութիւնը գործադրելու համար միւսի հաճութիւնը հարցնել։

Կտակի կատարումը։ Դատարանով հաստատուած կտակը կատարւում է կամ կտակակատարի և կամ ժառանգների ձեռքով։

Ի՞նչ է կտակակատարը։ Մեռածի լիազօրը, որ յօժարութեամբ յանձն է առել կատարել նրա վերջին կամքը։ Այս պատճառով եթէ կտակակատարին տուած է իրաւունք ծախել կայքը ու փողը բաժանել ինչպէս նշանակուած է, նա կարող է ծախել, պահանջել որ ծախւին ուրիշի գրաւ դրած կայքերը և եթէ աճուրդի ժամանակ այդ կայքերը չծախւին, կարող է վերցնել նրանց յօգուտ կտակողի։ Նա պահանջում է և պատասխաններ է տալիս դատարանում այս բոլոր պահանջների մասին, որոնք կտակից են առաջանում։ Կտակակատարներ կարելի է նշանակել մի քանի մարդկանց, այդ դէպքում մի գործ կատարելու համար հարկաւոր է բոլորի համաձայնութիւնը։ Կտակակատարը իրաւունք չունի իր կոչումը, յանձնել իր կամքով մի ուրիշի կամ թողնել իւր ժառանգներին։ Կտակակատարներին կարելի է տալ ամեն տեսակ ոչ ապօրէն յանձնարարութիւն. օրինակ, կարելի է յանձնել նրան գործադրել կտակած կայքը ըստ իր հայեցողութեան բարի գործերի համար, բայց չի կարելի տալ նրան իրաւունք գործադրել կայքը առհասարակ ինչպէս ինքն է կամենում։ Կտակակատարն



Մատթէոս արքեպիս. Իզմիրլեան

(Տես երես 198)

«ՇԻՐԱԿ» 1909 թ.

րիան տուած յանձնարարութիւնը կատարելիս, ինչպէս և ամեն մի հաւատարմատար, պատասխանատու է ժառանգների առաջ։

Իսկ եթէ չի նշանակուած կտակակատար, կըտակը կատարում են կտակողի ժառանգները ըստ ամենայնի համաձայն կտակողի կամքին։

---

## Կտակի օրինակ

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ Հազար ինն հարիւր ութը թւի Յուլիսի 10-ին Ալէքսանդրապօլ։ Ես ի ներքոյ ստորագրող Ալէքսանդրապօլ քաղաքի բնակիչ Գեղամ Արգարեան Երւանդեանցս լինելով առողջ և ուշիմ մտօք, որոշեցի կտակել իմ ունեցած շարժական և անշարժ կայքերը իմ մահւանից յետոյ հետևեալ կերպով։

1) Իմ սեփական անշարժ կալուածները, որ գտնւում են Ալէքսանդրապօլ քաղաքում, իր բոլոր հողերով ու շինութիւններով, կտակում եմ իմ մահւանից յետոյ լիովին սեփականութիւն իմ եղբօր որդի վաճառական Գնէլ Արտալէեան Երւանդեանին այն պայմանով, որ նա, Երւանդեանը տայ մի հազար ռուբլի (1000) տեղիս Աղքատախնամ ընկերութեան, և այս, նա, Գնէլ Երւանդեանը պարտաւոր է կատարել իմ մահւանից յետոյ մէկ և կէս տարւայ ընթացքում։

2) Իմ սեփական երկյարկ տունը, իր շրջապատի տան ու մէկ կրպակներով, որ գտնւում է Ախալքալակի երկրորդ քաղաքամասում № 49—60, իրանց բոլոր հողերով և շինութիւններով կտակում եմ տեղիս Բարեգործական ընկ. ճիւղին, այն պայմանով, որ Բար. ընկ. յիշեալ եկամուտից մի սան պահէ մշտական հայոց բարձր դպրոցներում։

3) Իմ օրինաւոր կնոջը Այծեմնիկ Ներւանդեանցին կտակում եմ իմ մահւանից յետոյ օգտւել իմ բոլոր փողի տոկոսով, որ գտնւում է Թիֆլիսի Պետական գանձարանում։

4) Իմ բոլոր առձեռն փողերը, որոնք չեն յիշատակւած կտակիս մէջ, թող լինի սեփականութիւն իմ հաւատարիմ և երախտաւոր ծառայ Ցօնօ Մելքումեանին։

5) Խնդրում եմ իմ ընտրած կտակակատար Դնէլ Արտակեան Ներւանդեանցին կատարել իմ վերջին կամքը կտակիս համաձայն։ Այս կտակը որ գրել եմ իմ սեփական ձեռքով, ստորագրում եմ՝ Գեղամ Արգարեան Ներւանդեանց։

Վկայ եմ՝ որ այս կտակը գրել և ստորագրել է Գեղամ Արգարեան Ներւանդեանցը, որ գտնւում էր առողջ դատողութեան և լաւ յիշողութեան մէջ՝ ծխատէր Գարեգին քահ. Արապեան։
Վկայ եմ II կարգի վաճառական Ցոլակ Ցիրոսեան։



# VI. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

## Մի քանի թւեր Ռուսաստանի վանքական եւ եկեղեցական հողերի մասին

Ռուսաստանի վանքերի և եկեղեցիների մէջ կան շատ խոշոր կալւածատէրեր։ Վանքերի մէջ կան այնպիսիները, որ հազարաւոր դեսեատին ունին, այնպիսիներն էլ կան, որ հարիւրաւոր դեսեատին հող ունին։

Ամենահարուստ կալւածատէրերը հետևեալ հինգ վանքերն են. Կօժէօզերսկի վանքը ունի 24,836 դես., Սարօվսկայա անապատը (пустынь) —26,339 դես., «Տրօիցկօ Զէլէնիցկին»—16,272 դես. Ուսպենսկայա Մօգիլեվսկայա անապատը—13,872 դ. և Գրիգօրիեվօ—Բիրիկօվը ունի 25,963 դեսեատին։

Դրանցից յետոյ գալիս են այն վանքերը, որոնք 5-ից մինչև 10 հազար հող ունին։ Այսպիսիների թիւը հասնում է եօթի. Զուրկինսկայա անապատը ունի 9,292 դ. Կիեվօ-Տրօիցկ—5.712 դ. Նադէեվսկայա անապատը—6,297 դ. Ալէքսանդր Սվիրսկի—5,917 դ. Նիկանդրօվա անապատ—6,812 դ. Նիկօլաեվօ-Սպասօ-Պրէօբրաժէնսկի—8,312 և Կօրսունսօ-Բօգօրօդիցկին—5,447 դ.։

Տեղի սղութեան պատճառով բոլոր վանքերը

թուելու կարիք չկայ, այլ կը բերենք միմիայն հետեւեալ աղիւսակը։

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3000-ից մինչև | 5000 | դես. | ունին | 12 | վանք, |
| 1000 | 3000 | » | » | 59 | » |
| 500 | 1000 | » | » | 94 | » |
| 200 դ. մինչև | 500 | » | » | 235 | » |
| 100 | 200 | » | » | 133 | » |
| 50 | 100 | » | » | 57 | » |
| մինչև 50 դ. ունին | | | » | 36 | » |

Վանքապատկան կալուածները բաղկացած են յարմարաւոր հողերից և մեծարժէք անտառներից։ Օրէնքով էլ վանքերին միշտ տրւում են այնպիսի հողաբաժիններ, որոնք բաղկացած են լինում վարելահողերից, խոտատեղերից, անտառներից և թէ նոյն իսկ ձկնորսական տեղերից։

Կիեվի նահանգում վանքական հող հաշւում է 11,416 դ., որից 3,285 դ. անտառ է, իսկ 4,207 դ. մարգագետիններ (խոտատեղեր)։ Պոլտավայի նահանգում 5,266 դեսեատինից 2936 դես. անտառ է, իսկ 1,485 դ. մարգագետին, Բէսարաբիայի նահանգում 13,441 դ. վանքական հող կայ։

Այդ տարածութիւնից 4,258 դես. անտառ է, չնայած որ Բեսարաբիայում անտառը շատ հազուագիւտ բան է։ Եկատէրինօսլաւի նահանգում 5,724 դ. վանքական հող կայ, որից 2,067 դ. մարգագետիններ են։ Ընդհանրապէս վանքերին տուած



հողերը շատ ընտիր հողեր են և, ի հարկէ, ահագին արդիւնք են տալիս։

Վանքերն ունին իրանց առանձին անտեսութիւնը,—հողերը կամ կապալով են տալիս, կամ իրանք են շահագործում։ Վանքական հողերի վերայ աշխատում են մինչև 14000 մշտական բանւորներ չը հաշուած այն բազմաթիւ գիւղացիներին, որոնք ձրիաբար են աշխատում։

Եկեղեցական հողեր.—Զանազան ճանապարհներով եկեղեցիները ահագին հողեր են գրաւել՝ չը նայած որ օրէնքով սահմանուած չափից—99 դեսեատինից աւելի չը պիտի լինի։ Հողի քանակութեան տեսակէտից եկեղեցիները հետևեալ կերպով են բաժանւում։

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 245 | եկեղ. | ունին | 250-ից | մինչև 500 | դ. | իւրաքան. |
| 50 | » | » | 500-ից | 1000 | » | » |
| 14 | » | » | 1000 | 1500 | » | » |

15 եկեղեցի 1500 դեսեատինից աւելի ունին։ Եւրոպական Ռուսաստանում ընդամենը 1,671,948 դեսեատին եկեղեցապատկան հող կայ, որի գինը սինոդը դեռ 1889 թւին հաշւում էր 116, 195,118 ր.։ Իսկ վանքերի և մասամբ ուրիշ հիմնարկութիւններին պատկանող կալուածների հետ միասին – ընդամենը 8,500,000 (ութ միլիօն հինգ հարիւր հազար) դեսեատին։

Սալլիւմեան

## VII. ԲԺՇԿԱՐԱՆ*)

Հիւանդութիւնները ճիշտ և մանրամասն որոշելու համար անհրաժեշտ է բժշկական քննութիւն և միմիայն բժիշկը կը կարողանայ ճշտութեամբ որոշել հիւանդութիւնները և նրանց պատճառները ևայլն։ Այստեղ մենք կբերենք մի քանի հիւանդութիւններ, նրանց դէմ գործադրւող ընկգրնական միջոցները, սակայն անհրաժեշտ է հարկաւոր դէպքում անպատճառ հրաւիրել բժշկի։

**Այրուածք.** Թեթև այրուածքի համար պէտք է մի գդալ սոդա լուծել մի բաժակ ջրի մէջ, շորը թրջել և դնել այրւած տեղերի վրայ և շուտ շուտ փոխել։ Սա ամենալաւ և անվնաս դեղն է այրւածքի համար, հետևաբար լաւ կլինի ընտանիքներին պատրաստի ունենալ։ Եթէ այրւածքը աւելի խիստ է, օգտաւէտ է քսել սագի կամ ձըկան իւղ. եթէ բշտիկներ են գոյացել, ցանել վրան սոդ կամ կարտօֆիլի ալիւր։ Այրւածքը հովացընում է նաև թաց հողը կամ քերած կարտօֆիլը։

**Ատամնացաւ.** Ատամները փտումից և ցաւից ազատ պահելու համար նախ և առաջ անհրաժեշտ է կերակուրը ուտելուց յետոյ միշտ ա-

*) Քաղուած բժիշկ. Դ-ովի, Բ. Նաւասարդեանի, Հուգօ-Պօլի եւ այլ բժշկարաններից։



րանքներում մնացորդները մաքրել կամ փետուրի սուր ծայրով կամ սրած փայտով, ոչ մի դէպքում ասեղով, սուր երկաթով. նոյնպէս և միշտ ավրձինով սրբել վերևից ներքև. ամենալաւ ատամնափոշին է ծեծած կաւիճը մէջը խառնած մի քանի կաթիլ դաղձի կաթիլներ։

Ատամի ցաւ առաջացած դէպքում, անհրաժեշտ է բժշկի դիմել, որ նա որոշի հիւանդութիւնը, եթէ կարելի է կը բժշկէ, եթէ ոչ՝ կըհեռացնէ։ Սովորական ընդունւած դեղերը հիմնական օգուտ չեն բերի։

**Ականջի որդերը.** Երբ ճանճի և ուրիշ այդ տեսակ միջատների ձուերն ընկնում, մնում են երեխայի ականջում, այդտեղ գոյանում են որդեր և երեխային մեծ նեղութիւն են պատճառում։ Որդերը պէտք է զգուշութեամբ հանել ականջից ցքինչով (пинцетъ) և ականջը մի քանի օր սրսկել գաղջ չիրաջրով։

**Արիւնլուծ.** (дизентерія). Այս հիւանդութեան ժամանակ կղկղանքը մաղասանման է լինում և արիւնախառն. հիւանդը զգում է ցաւեր աղիքներում։ Վարակիչ հիւանդութիւն է, պէտք է զգոյշ լինել։

Բժշկելու ամենագլխաւոր պայմանը պահեցողութիւնն է (діета). պէտք է տալ հասարակ արգանակ, կաթ, իբրև խմիչք գործ ածել թաք

թէյ, անանուխի (դաղձի) թէյ։ Սառը ոչինչ չը պէտք է խմել։ Աղիքները մաքրելու համար կարելի է ընդունել լուծողական (касторовое масло) 1—2 հացի գդալ։ Փորը պէտք է տաք պահել։ Վտանգաւոր հիւանդութիւն է։ Բժշկի ներկայութիւնը անհրաժեշտ է։

**Աչքացաւ.** Նորածին երեխաների աչքերի բորբոքումը կարող է նոյն իսկ զրկել նրան տեսողութիւնից, դրա համար պէտք է անմիջապէս երբ նկատւում է հիւանդութեան նշանները, դիմել բժշկի. ուշացնելը կարող է վտանգաւոր հետեւանքներ ունենալ։ Այս հիւանդութեան պատճառը կեղտոտութիւնն է, որ պատահում է կամ մօր ունեցած հիւանդութիւնից, կեղտոտ ձեռքերը դիպցնելուց եւյլն։ Բորբոքումը սովորաբար սկսւում է կոպերի կարմրութիւնով և ուռոյցով. աչքերից հոսում է մաղաս կամ թարախ, ուռոյցը այն աստիճան է լինում, որ երեխան չի կարողանում աչքերը բաց անել։ Երբեմն եղջերային թաղանթի վրայ վէրքեր են դուրս գալիս։

**Խնամք.** Մինչև բժշկի գալը աչքերը լուալ բորայի‌ն թթւուտով (борная кислата) 1 թէյի գդալ մի բաժակ ջրում։

**Առաջին օգնութիւնը երբ վէրքից է.** (յառաջացած զնդակի հարուածից, սրի կտրուածից կամ ջարդուելուց), պէտք է վէրքը ձեռքով, թրջած



բամբակով, սպունգով և կամ վիրակապով սեղմած պահել։ Սկզբում վէրքի վերայ սառոյց դնելը և թէ արիւնը կտրելու համար և թէ նոյն իսկ վէրքի բորբոքման դէմ շատ օգուտ է։ Արիւնը կտրելուց յետոյ, վէրքը պէտք է սառը, մաքուր ջրով լւանալ, որը նոյնպէս օգնում է արիւնը կտրելուն, շորի կտորտանքը, աւազի փշրանքը վէրքից հեռացնել։ Վէրքին բնաւ երբէք անասունի կամ թռչունի աղբ և կամ այծի ճրագու (ճարպ) ոչխարի դմակ կամ սատմոքս, կամ ջնջխած սեւ հաւ, կամ ոչխարի մորթի և կամ որևէ ժողովրդական սպեղանի (մհլամ) չը դնել։ Վէրքը պէտք է կապել ամենամաքուր բամբակով կամ պարզ ջրի մէջ թրջած քաթանով՝ լաւ է մի բաժակ ջրին աւելացնել մի բաժակ թէյի գդալի չափ օղի կամ կէս գդալ սպիրտ և կամ նոյնչափ կարբոլօվայեա կիսլատա։ Վէրքը շատ ամուր կապելը լաւ չէ, վիրակապից ներքև եղած մասերը կուաչեն։ Վէրքը լաւանում է բնութեան զօրութեամբ և միայն մաքուր պահպանելով։ Վիրաւորուածին իսկոյն և եթ սառը ջուր տալը, մանաւանդ գինիով, ոչ միայն վնաս չէ, ինչպէս այդ սխալ կարծիքը տիրապետում է, այլև օգուտ է։

**Առաջին օգնութիւնը երբ քթից է.** քացախով ջուրը քիթը քաշել, հիւանդի գլուխը բարձր պահել և ճակատին ու գլխին սառը ջուր ածել,

կամ սառուց դնել. օգուտ է և լուծողական տալը։

**Արիւնը եթէ սրբանից է.** աղիքից մշտապէս կաթկաթում է, մանաւանդ արտաքնոց գնալիս, պատճառը կարող է լինել տեռատեսութիւնը (մայասուլ) խոցը կամ մի այլ դժուար հիւանդութիւն, պէտք է դիմել բժշկին։ Եթէ արիւն առնելիս տզրուկ կուլ գնայ, երկու երեք գաւաթ աղաջուր խմել, եթէ տզրուկը սրբանովն աղիքի մէջ մտնի, աղաջրով հօքնայ տալ։

Հարկաւոր է մեծ ուշադրութիւն դարձնել մեր կեանքի, ոչ միայն թելերը, այլև գլխաւոր արմատը կտրող հանգամանքի վրայ. այդ այն կորստաբեր սովորութիւնն է, որը ստրկացրել է ասիական ազգերին, այդ—**արիւն առնելն է** կամ երակը բանալով՝ նշտարով կամ տզրուկ կպցնելով։ Ձեզ համար օրէնք սահմանեցէք, որ առանց բժշկի գիտութեան ոչ մի դէպքում ձեր արիւնը տզրուկներին, դալլաքներին չը խմացնել, դրա համար մեղքը իմ շլնքին, վարձքը—ձեր։

**Բերանի զարշահոտութեան** պատճառները որոնելու համար նախ պէտք է քննել հիւանդի բերանը, ատամները ապա և մարսողական գործարանները։ Երբ յայտնի կը լինի իսկական պատճառը, միայն այն ժամանակ կարելի կլինի համապատասխան միջոցների դիմել, իսկ եթէ բերանի հոտը առաջացել է բերանի անմաքուր պա-



հելուց, որ քիչ չի պատահում, օգտակար է ամեն անգամ ուտելուց յետոյ բերանը ողողել, 2 մաս աղ, 200 մաս ջուր, 30 մաս դաղձի ջուր խառնել իրար և ողողել։ (Сп. здор.)

**Գազով կամ անմաքուր օդով** վնասւում են կամ բոլորովին խեղդւում, երբ որ վառարանները շատ են ծածկւում՝ քանի որ կապտագոյն բոցը դեռ խաղում է վառարանում։ Անմաքուր օդով կարելի է և վնասւել խոր փոսերում և կեղտոտւած ջրհորներում և մանաւանդ արտաքնոցներում։

**Դիֆտերիտը** այնպիսի հիւանդութիւն է, որ երբէք չի կարելի առանց բժշկի թողնել, մանաւանդ այժմ, որ գոյութիւն ունի հակադիֆտերիտային շիճուկի սրսկումը, որ զգալի չափով պակասեցնում է մահացութիւնների թիւը։ Որքան շուտ կանչւի բժիշկ և սրսկում լինի, այնքան յուսալի է հիւանդի առողջանալը։ Հիւանդութիւնը սկսւում է բկի սաստիկ ցաւով, մանաւանդ կուլ տալիս և ջերմով։ Նշիկների վրայ և կոկորդում նկատւում է սպիտակ փառ, որը քանի գընում հաստանում է և 4—6 օրից յետոյ, աջող դէպքում ընկնում է և տեղը կարմիր երևում։ Հիւանդի բերանից գալիս է սարսափելի հոտ, ծնօտի տակ գեղձերը ուռած են լինում։ Ուրիշ դէպքերում դիֆտերիտը անցնում է կոկորդը և քիթը

առաջացնելով այսպէս ասած խիստ դիֆտերիտային խռուկ. (дифтеритный крупъ)։

**Խնամք**. Բժիշկը անհրաժեշտ է. մինչև նրա գալը տաքութիւնը իջեցնելու համար մարմինը սրբել սառը ջրով, կամ փաթաթել թրջած շորի մէջ։ Բերանը ողողելու համար Բերտոլետային աղ (1 թէյի գդալ 1 բաժակ ջրում)։ Եթէ երեխան փոքր է, չի կարող ողողել բերանը, զգոյշ մաքրում են բորային թթուտով (борная кислота) նոյն չափով. մի կտոր բամբակ ամրացնում են մի ձողի ծայրին. այդ հեղուկների փոխարէն կարելի է վերցնել կրաջուր կէսը խառնած մաքուր ջրի հետ (извѣст. вода)։ Այս ջուրը կարելի է կում կում տալ խմելու ոչ միայն մեծերին, այլ և փոքրերին։ Առաջարկւում է իբրև միջոց և լիմոնի հիւթը, որով երբեմն ողողում են (1 թէյի գդալ 1 բաժակ ջրում) երբեմն էլ շատ զգոյշ բամբակով օրական մի քանի անգամ քսում են բկի վարակւած տեղերը։ Կերակուրը՝ սառը կաթ թէյի կամ հացի գդալով բուլիոն, և առհասարակ թեթև ջրալի կերակուրներ, ծարաւի դէմ թթու ջուր, սառը խմիչքներ, նոյնպէս սառուցի կտորներ կուլ տալ։ Ամենագլխաւորը առողջ երեխաներին հիւանդի մօտից կամ տանից հեռացնել, սենեակը և շորերը ախտահանել։

**Թունաւորութիւն.** Ամենից առաջ պէտք



է աշխատել թոյնը հեռացնել ստամոքսից. այսինքն փսխողութիւն առաջ բերել—մատով, փետուրով խտուտ ածել կոկորդը, տաք սապնաջրով (մէջը աւելացրած տիզականէփի ձէթ (косторка) աղ կամ փսխողական դեղերով։ Որպէսզի թոյնի մասը աղիքներից հեռացնւի, պէտք է մի քանի անգամ գրեխ դնել (հօքնայ) նոյն հեղուկներից։ Ամենագլխաւորը պէտք է իմանալ թէ ինչպիսի թոյնով է թունաւորւած և իսկոյն բժիշկ հրաւիրել, կամ դեղատուն վազեցնել, որտեղ անշուշտ գիտեն թէ ինչ հակաթոյն պէտք է տալ։ Եթէ հիւանդը թունաւորւած է օպիումով (խաշխաշ)՝ պէտք է խմացնել սև ու թունդ սուրճ կամ թէյ։

Կապարից (свинецъ) թունաւորւածին տալ դառն աղ (сѣрнокислая магнезія), փոքրին տալ 1 թէյի գդալ, չափահասներին—2, լուծած մի բաժակ ջրում։ Կարելի է և տալ ձւի դեղնուց։

Մկնդեղից (мышякъ) թունաւորւածին տալ շատ կաթ և ջրի մէջ լուծւած ձւի սպիտակուց։

Պղնձից թունաւորւածին տալ 4 ձւի սպիտակուց, կամ մի հացի գդալ այրած մագնեզիա լուծած մի բաժակ ջրում։

Սնդիկից թունաւորւածին տալ շատ կաթ, կամ խիտ ալրաջուր։

**Լուսնոտին** ընկնելու ժամանակը պէտք է հանգիստ թողնել, հագուստն արձակել, ատամ-

ների, լաւ է սեղանատամների տակը շորով փաթաթած գդալ դնել, որպէսզի հիւանդը լեզուն չկծի. երեսը կապտելիս՝ ձիւն, սառոյց կամ սառը ջրում թրջած շոր դնել գլխին։ Պէտք է իմանալ, որ ընկնելը լուսնոտին մշտապէս և շատ անգամ կանոնաւոր շրջաններով է պատահում և փոքր հասակում բժշկելի է, բայց մեծ հասակում չափազանց յամառ հիւանդութիւն է։

**Լուծ.** Չպէտք է խմել սառը խմիչք, մանաւանդ սառը ջուր, կաթ, գարեջուր և այլն. աւելի լաւ է խմել երիցուկի (ռամաշկա) թէյ, դաղձի թէյ, սուրճ և այլն։ Լաւ կապում է կարմիր գինին երբ եփած է լինում մեխակի և դարչինի հետ։ Օգտաւէտ է նոյնպէս ինոզեմցևի կաթիլները 10—20 կաթ. օրական 3 անգամ։ Այն մարդիկ, որոնք ստէպ լուծ են ունենում պէտք է փորերին կապած ունենան տաք շոր, ոտները չոր և տաք պահեն։

Երեխաների լուծի ժամանակ պէտք է դնել փորին տաք խաշիլ կամ տաք շոր և եթէ լուծը սաստկանայ, պառկեցնել տաք տեղաշորում և տալ նրան միայն խմելու երեցուկի թէյ։

**Խեղդուելու զանազան տեսակները.** Խեղդուելը մահուան այն տեսակն է, որ առաջանում է օդի—մաքուր օդի պակասութիւնից կամ իսպառ բացակայութիւնից։



**Խեղդամահից ազատելու** համար (բոլոր տեսակների համար) պէտք է ընդհանրապէս հետևեալ միջոցները գործ դնել, կիսախեղդ եղածին մաքուր օդ տալ, նորա վերայի հագուստն արձակել, գլխին ու կրծքին սառը ջուր սրսկել, կուրծքը և բոլոր մարմինը կոշտ մահուդով շփել և որ ամենից գլխաւորն է, արհեստական շունչ առնել տալ։ Երբ հիւանդն սկսեց ուշքի գալ քիչ-քիչ գրգռիչ խմիչք խմացնել։

**Ծաղիկ.** Այս հիւանդութեամբ բռնւում են մեծերն էլ, փոքրերն էլ։ Հիւանդութիւնը սկսւում է ջերմով, չոր տաքութեամբ, ցաւ գոտկատեղում և յաճախ քթից արիւնհոսութիւն։ Ջերմի սաստկանալուց սկսում է դէլ տալ, այս բոլորից յետոյ դուրս է գալիս ծաղիկը։

**Խնամքը** այն է ինչ քութէշի ժամանակ. միայն սենեակի տաքութիւնը պէտք է 20° լինի։ Երեսի վերայ հետք չմնալու համար օգտակար է քսել որևէ իւղ։ Շորերը ախտահանել անհրաժեշտ է, լաւ է այրել։

**Կարմրուկը** համաճարակօրէն յայտնւում է սովորաբար գարնանը և աշնանը։ Սուր վարակիչ հիւանդութիւն է, վարակում է գլխաւորապէս հիւանդի քթի լործինը և արտասուքը։ Առանձնապէս այդ հիւանդութեան տրամադրւած են 3—14 տարեկան երեխաները։ Հիւանդութեան սկզբնա-

կան նշաններն են ընդհանուր թուլութիւն, սրտախառնութիւն, գլխացաւ, ախորժակի բացակայութիւն և հարբուխ։ Այս նշանները սաստկանալուց յետոյ մորթու վերայ, ամենից առաջ բերանի և պնչի շուրջը կարմիր բծեր, որ դուրս են գալիս աստիճանաբար, 1—2 օրում տարածւում են ամբողջ մարմնի վերայ։ Այդ բծերը մորթուց բարձրանում են մի քիչ և երբ մատով սեղմում են, նրանք կորչում են և նորից երևում առաջ՝ միջի բիծը, ապա չորս կողմինը։ Այս միջոցին հիւանդը ջերմում է։ 2—3 օր յետոյ ցանը գունատւում է, և վերջապէս անհետանում, որով և տաքութիւնը աստիճանաբար պակասում է։ Ընդհանրապէս ցաւը երևալուց 8 օր յետոյ, սկսում է մորթը թեփոտել և միաժամանակ անհետանում են և միւս նշանները։ Եթէ առողջանալը յաջող է գնում, մի երկու շաբաթից հիւանդը առողջանում է։

Կարմրուկը ինքնըստինքեան անվնաս հիւանդութիւն է և կանոնաւոր պահպանութեան ժամանակ չի թողնում ոչ մի ուրիշ հետք։

**Խնամք.** Հիւանդի սենեակը պէտք է քիչ մթնացնել, հիւանդին պահել չափաւոր տաքութեան մէջ, մանաւանդ եթէ օդը չէ ցրտել։ Այսպիսի երեխաներին առողջանալուց յետոյ էլ չը պէտք է թողնել դուրս և առհասարակ պահպա-



նել ցրտից։ Հիւանդի սենեակի օդը պէտք է մաքրել, հարկաւ սենեակի լուսամուտը բանալով։ Կերակուրը պէտք է լինի թեթև, դիւրամարս և չը գրգռող։ Փորկապութեան ժամանակ դնել գրեխ (օղնայ)։ Խիստ ջերմի ժամանակ օգտաւէտ է հիւանդին լողացնել օրական մի քանի անգամ գոլ կամ սենեակի ջրով. մէջը կարելի է խառնել քացախ։ Ընդհանրապէս ջերմող երեխաներին լողացնելուց վախենում են, բայց այդ վախը միանգամայն անհիմն է, որովհետև մաքրութիւնը երբէք վնասել չի կարող, այլ լողացնելը թարմացնում և թեթևացնում է հիւանդի տանջանքը։

**Կատաղած** կամ թունաւոր կենդանին կըծում է կամ խայթում։ Կծելուց յետոյ իսկոյն և եթ, առանց մի վայրկեան կորցնելու, ինքը թունաւորւածը կամ մի ուրիշը պէտք է ծծի վէրքը։ Վէրք ծծողը իր շրթունքի վերայ և բերանի մէջ վէրք չպէտք է ունենայ։ Բերանով ծծելու փոխարէն, կարելի է բաժակով ծծել—բաժակի տակին ձէթոտ թուղթ կամ բամբակ վառելով, որ բաժակը մորթոցը կպչի։ Անդամը, որի վրայ վէրքն է, պէտք է վէրքից վերև ամուր կապել և կամ եթէ կատաղած շան կծած է, կամ թունաւոր օձի, վիրաւորւած անդամը բոլորովին, եթէ հնար է, կարել՝ կտրել անմիջապէս վէրքից վերև. կամ եթէ այդ հնարաւոր չէ, գոնէ վէրքը կտրել իր

շրջակայքով։ Վէրքից արիւն քամել և վէրքը լը-ւանալ աղախառն քացախով, կամ աւելի լաւ է միզով և այրել սաստիկ տաքացած երկաթով։ Վէրքը չպէտք է շուտով բժշկել՝ ծածկել։ Վէր-քից վերև կապելը, կամ կարելը, վէրքը լւանալը կամ այրելը այն նպատակով է, որ թոյնը արեան շրջանի մէջ, մարմնի մէջ չմանի։ Եթէ փոքրիկ թունաւոր կենդանիները կծեն կամ խայթեն, վի-րաւորուած անդամը պէտք է դնել մածնի, թանի և կամ սառը ջրի մէջ։

**Կաթուածից** ուշագնաց լինելը առաջանում է յանկարծ արիւնը գլուխը գալնելուց։ Կաթւա-ծից նւաղածի երեսը փքւում է, կարմրում է և կապտում. բերանից փրփուր է գնում, զգայողու-թիւնը և շարժողութիւնն անհետանում են։ Կաթ-ւածահարի հագուստն հանելուց յետոյ պէտք է գլուխը բարձր և ոտները տաք ջրի մէջ դնել և կամ շշերով տաք ջուր դնել ոտներին, ջուրը քա-ցախի և աղի հետ խառնած հօգնայ տալ (клис-тиръ), և խմացնել գնտադերչակի ձէթ (касторка) կամ մի այլ լուծողական. իսկ եթէ բժիշկը շուտ չէ վրայ հասնելու բաղանի արիւն (սև ա-րիւն) առնել և ծծրակին պոզեր (կոտոշներ) կպցնել ու թրատել։

**Կայծակնահար եղածի** մարմնու վերայ նկատւում են կարմրաւուն շերտեր։ Կայծակը տա-



լուց մարդ ուշքից գնում է և շատ անգամ մեռ-նում, բայց պատահում է որ խլանում է միայն։ Կայծակի ժամանակ պէտք է զգուշանալ ծառերի տակ մտնելուց և մետաղեայ առարկաների տակ կանգնելուց։ Կայծակնահարին պէտք է արհեստա-կան շնչառութիւն տալ որը կատարւում է հետե-ւեալ կերպով։ Արհեստական շնչել տալու համար պէտք է հիւանդին պառկեցնել մէջքի վրայ, լե-զուն բերանից դուրս քաշել և այդպէս պահել. հիւանդին պէտք է կիսանստած դրութիւն տալ, յետոյ պէտք է մէկը կանգնի հիւանդի յետևից. Նրա երկու ձեռքն էլ արմուկներից բռնի և մի փոքր դէպի իրան յետ քաշելով, բարձրացնի մին-չև հիւանդի գլուխը, ապա նոյն ճանապարհով ձեռքերը յետ բերի և նրա կրծքի կողքերին ա-մուր հուպ տայ, որպէսզի օդը թոքերից դուրս գայ, այսինքն արտաշնչւի։ Այսպէս բաւական ժամանակ շարունակել։ Պէտք է երեսին սառը ջուր սրսկել և յետոյ ձեռքերն ու ոտը և ամբողջ մարմինը տրորել սառը աղաջրով։ Ուշքը վերան գալուց յետոյ խմացնել գրգռիչ խմիչք, որոնք են հօվմանի կաթիլներ—20 կաթիլ ջրի մէջ, կոնեակ, ռօմ, օղի, գինի, գարեջուր սուրճ, թէյ և այլն։

**Նորածին մանկանը** կենդանացնելու հա-մար պէտք է նրա բերանը մաքրել և դնել Բէօ-

միւրի ջերմաչափով 28 աստիճան տաքութիւն ունեցող վաննի մէջ և կրծքին մի քանի թիզ բարձրութիւնից մի քանի անգամ սառը ջուր սրսկել նաև երեսին և եթէ այդ բոլորը չը յաջողւի, մանուկին արհեստական շունչ առնել տալ։ Այս դէպքում անհրաժեշտ է դայակի կամ բժշկի օգնութիւնը։

**Ուշագնաց լինելը** պատահում է նաև մարդկանց՝ սաստիկ թուլութիւնից, երկիւղից, օդի անմաքրութիւնից, երբ շատ մարդիկ միասին ժողոված են լինում, ինչպէս եկեղեցում, թատրոնում ևայլն. պատահում է և երկար ճանապարհ գնալուց և առհասարակ շատ յոգնելուց, նոյնպէս և բարձրութիւնից՝ մանաւանդ գլխի վերայ վայր ընկնելուց ևայլն ևայլն։

Ուշքից գնացածին իսկոյն պէտք է լուսամուտները բանալ և սենեակի մէջ եղած մարդկանցը հեռացնել, մէջքի վերայ պարկեցնել. գլուխը բարձր չդնել, հագուստի կոճակները և կապերը արձակել, երեսին ու կրծքին սառը ջուր տալ շարունակ՝ քացախ, օդեկոլոն կամ նաշադրի սպիրտ հոտ տալ. երբ որ նուաղածն ուշքի գայ, գրգռիչ խմիչք խմացնել։ Չպէտք է շուտ յուսահատուել, կան օրինակներ, որ մեռած համարուածները ամբողջ վեց ժամից յետոյ դարձեալ կենդանացել են։ Ուշքից գնալը պատահում է ոչ



միայն նիհարներին՝ այլ և լիքը, գեր մարդկանց։

**Ործ.** Ործողութիւն մեծ մասամբ պատահում է զանազան հիւանդութիւնների սկզբում և կամ ինքնուրոյն ստամոքսի հիւանդութեան ժամանակ։ Շարունակ կրկնւող ործողութիւնը դադարեցնելու համար օգտաւէտ է կուլ տալ սառույցի մանր կտորներ (սիսեռի մեծութեամբ)։ Եթէ ործողութեան հետ պատահում է նաև ցնցումներ պէտք է տալ անանուխի կամ Հոֆմանի կաթիլներ 10—20 կաթ. օգնում է նոյնպէս զելտերը։

**Ջրում խեղդուածի** բերանը պէտք է մաքրել մարմնի վերին մասի հագուստն արձակել, լեզուն դուրս քաշել, փորի վերայ պառկեցնել, ճակատը թեթև կերպով բարձրացրած բռնել, այնքան որ բերանը գետնին չառնի և փորի տակը շորից մի կապոց դնել և ներքին կողերին մի քանի անգամ հուպ տալ, որպէսզի կուլ գնացած ջուրը փորից դուրս գայ, յետոյ խեղդուածին նորից մէջքի վերայ դնելով, արհեստական շնչառութիւն գործ դնել։ Երբէք ջրում խեղդուածին գլխի վերայ քաշ չանել, և չհարել շարաւի մէջ, ինչպէս այդ սովորութիւն է դարձած մեզանում։

**Ստամոքսի խանգարումն.** Այս հիւանդութիւնը պատահում է, երբ ստամոքսը լցւում է մեծ քանակութեամբ դժւարամարս կերակուրներով, ոգելից անչափ խմիչքներով. Դրանից գո-

յանում է խիստ անախորժ զգացմունք, գլխացաւ, ախորժակի պակասութիւն, սրտախառնութիւն և կզայռումն (բխկալն)։

**Խնամք.** Պէտք է քաղցած մնալ մինչև ախորժակը նորից բացւի։ Օգտաւէտ է խմել հայբոքակաջուր (содовая вода) մէկ գտալ լուծած մի բաժակ ջրում։ Ամենալաւ դեղը պահեցողութիւնն է (діета)։

**Փորի տափակ ճիճու.** (солитеръ) Նռան արմատի նոր կաշին $^1/_4$-ից մինչև $^1/_2$-ը ածել 2 ֆ. ջրի մէջ և 12 ժամ այդպէս թողնելուց յետոյ, այնքան ժամանակ պէտք եփել մինչև որ $^1/_3$ մասը մնայ։ Այս եփած դեղը երեք մաս արած, ամեն մի մասը, ամեն առաւօտ անօթի պէտք է խմել։

Հասարակ ճիճուների դէմ ընդունւած է գածլիգիկի սերմը (խորասան—цытварное сѣмя) և տրւում է շաքարով քաղցրացրած, մէկ թէյի գդալ, օրը 2—3 անգամ կամ մեղրախառն (4 մսխալ գնտասերմին $^1/_8$ գրվ. մեղր)։

**Քութէշ** համաճարակային հիւանդութիւն է, սակայն պատահում է և առանձնակի դէպքեր։ Վարակումից յետոյ անմիջապէս չի յայտնւում քութէշը. այլ սովորաբար մի շաբաթից յետոյ։ Հիւանդութիւնը սկսւում է ջերմով, սարսուռով և տաքութեամբ, գլխի ցաւով, սրտախառնութեամբ



կամ փսխողութեամբ։ Միաժամանակ երևում է ախորժակի բացակայութիւն, կուլ տալիս ցաւեր է զգացւում նշաձև գեղձերի ուռչելու շնորհիւ։ Զարկերակը խփում է արագ. խիստ ծարաւ է զգում. և մի օրից յետոյ երևում է մի բնորոշ ցան ամենից առաջ պարանոցի, երեսի և կրծքի։ Ցանը սկսւում է կարմիր կէտերով, որոնք իրար խառնւելով կազմում են խիտ բծեր և այդպիսով հետևեալ օրը տարածւում է ամբողջ մարմնի վրայ։ Վզի գեղձերը ուռած են լինում. լեզուն կարմրում է և չոր։ Քութէշի ցանը զանազանւում է կարմրուկից նրանով, որ եթէ մատով ճնշենք, այն ժամանակ բիծը կգունատւի, բայց յետոյ նորից կերևայ ծայրերից դէպի մէջ տեղը. (կարմրուկինը հակառակն է)։ Մի երկու օր անցնելուց յետոյ ցանը գունատւում է, սկսւում է քրտինքը, և յաճախ խիստ լուծ։ 5—8 օր անցնելուց յետոյ մորթը թեփոտւում է, երբեմն աննշան, երբեմն այնքան շատ, որ մորթը կտորներով պոկւում է։ Բացի նկարագրած սովորական տեսակից, քութէշը ունենում է զանազան բարդութիւններ, որոնք երբեմն խիստ և վտանգաւոր են լինում՝ առանձնապէս կոկորդի, ականջի (ներքին մասերի խորքերում) երիկամունքի (բորբոքում ջրգողութեամբ և այլն)։ Դրա համար այս հիւանդութիւնը պահանջում է խիստ հսկողութիւն և որտեղ հնարա-

ւոր է անպայման բժշկի հսկողութեամբ. առանձնապէս յաճախ բարդութիւն է լինում (ինչպէս ջրգողութիւն) թեփ տալու շրջանում. սրա համար այդ շրջանում պէտք է խիստ զգուշանալ հիւանդին մրսեցնելուց։

**Խնամք.** Պէտք է հոգալ հիւանդի սենեակի օդի մաքրութեան և հաւասար տաքութեան, որտեղ չպէտք է լինեն աւելորդ կահկարասի։ Դռների, լուսամուտների ծածկոցները, քիչ մութ անել, որ դուրեկան է հիւանդի համար։ Սպիտակեղէնը պէտք է շուտ շուտ փոխել, նախապէս տաքացնելուց յետոյ։ Օրական մէկ կամ երկու անգամ շփել նշի կամ, պարաւանսի իւղով, ճարպով և վազելինով, որը թեթևացնում է թեփ տալուն։ Խիստ տաքութեան ժամանակ պէտք է մարմինը շփել գոլ ջրով մի քանի անգամ։

Փորկապութեան դէպքում գրեխ դնել։ Իբրև խմիչք նպատակայարմար է թարմ բարեխառն ջուր, առանձնապէս կաթ։ Միևնոյն ժամանակ կարելի է տալ բուլիօն, եփած միրգ։ Լաւ հասած պտուղները ինչպէս խաղող, ելակ (земляника) կարելի է առանց եփելու տալ։

Ինչպէս ամեն վարակիչ հիւանդութիւնների դէպքում, այնպէս և քութէշի ժամանակ պէտք է անպայման հեռացնել մնացած երեխաներին և խիստ ախտահանել (дезинфекція)։ Քութէշով



հիւանդ երեխաներին ոչ պակաս, քան 6 շաբաթ պէտք է տանը պահել. հաշուած ցանը դուրս տըւած օրից։ Վարակման վտանգը գլխաւորապէս թեփ տալու ժամանակն է և այդ միջոցն էլ գըլխաւորապէս առաջանում է բարդութիւնները։

**Քոր մորթու.** Մորթը զանազան տեղում կարող է քոր գալ ցանից (сыпь) չոր քոսից (чесотка) տափակւուն կծիկներից և այլն։ Քորը լինում է այնքան սաստիկ, որ քնելը անկարելի է։

**Խնամք.** Եթէ մորթը քոր է գալիս առանց ցան երևալու, լոգացիր մի քանի օր տաք ջրում, քսելով սապոն և լողանալուց յետոյ վրադ ածէ սառը ջուր։ Բացի դրանից քոր եկող տեղերի վերայ քսիր քաղցրէտ (գլիցէրին)։ Եթէ քորը առաջացել է սիֆիլիսից, խորհրդակցիր բժշկի հետ։

# VIII. ԲՆԱԽՕՍԱԿԱՆ

## ՄԱՐԴՈՒ ԸՆԴՈՒՆԱԾ ՍՆՈՒՆԴԸ

*Մարդու ընդունած սնունդը կազմւած է գըլխաւորապէս «Օսլայից», «Ճարպից» և «Սպիտակուցից». երկրորդ տեղը բռնում են աղերը և ջուրը. առաջինները ամեն նիւթի մէջ էլ գտնւում են շատ կամ պակաս քանակութեամբ։ Հէնց այս նիւթերից է կազմւած մեր մարմինը։*

*Օսլայ, սպիտակուց և ճարպ, սրանցից և ոչ մինը մի որևիցէ հիւթի մէջ չէ լուծւում. բայց մեր մարմնին կան այնպիսի հիւթեր, որոնք լուծում են դրանց, բայց աւելի ճիշտն ասած լուծելի դրութիւն են տալիս։ Մեր բերանի պատերի մէջ կան շատ փոքրիկ բազմաթիւ փամփուշտներ՝ խուլեր, որոնք լի են մի տեսակ հիւթով, որ լորձունք է կոչւում. կան ուրիշ երեք զոյգ խուլեր, որոնք պարունակում են իրենց մէջ «Թուք» կոչւած հիւթը և կոչւում են թքակալ խուլեր։ Սրանցից մի զոյգ գտնւում է ծնօտի տակ և կոչւում է «ստործնօտեայ», մի զոյգը գտնւում է լեզւի տակ և կոչւում է «ստորլեզւեայ» և մի զոյգը ականջների տակ «ունկնթեր»։ Երբ կերակուրը ծամում ենք թուքը արտաթորւում է և խառնւելով կերակրի հետ, օսլան շաքար է դար-*



*ձնում, այսինքն լուծում է։ Մենք այդ բանը նըկատում ենք այսպէս, քանի մենք կերակուրը ծամում ենք, այնքան նա քաղցրանում է, ուրեմն թուքը թէ թացացնում է կերակուրը և թէ միանգամ օսլան շաքարի է դարձնում, լորձունքը փափկացնում է կերակուրը։*

*Երբ որ բերնի մէջ կերակուրը փափկանում է, լեզուն նրան հրում, ներս է տանում։*

*Մեր բերանի մէջ կան չորս ծակեր, այն է՝ որկոր, շնչափող և քթի երկու ծակերը, ուրեմն կերակուրը փոխանակ որկորը մտնելու, կարող է շնչափողը մտնել, մանաւանդ որ շնչափողը միշտ բաց է, իսկ որկորը միշտ փակ. և կամ կարող է մտնել քթի ծակերը։ Որպէսզի կերակուրը մտնի իւր յատկացրած տեղը (որկորը) ուստի շնչափողը ծածկելու համար յատկացրած է մի խուփանման կաճուկ, որը շարժւում է և կերակուրը կուլ տալիս բարձրանալով՝ ծածկում է շնչափողի բերանը, իսկ կերակուրը առնելով դրա վրայից բաց է անում որկորի փակ բերանը և ներս է մտնում, քթի ծակերն էլ ծածկւում են լեզւով։*

---

## ՍՆՈՒՆԴԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

*Ինչպէս յայտնի է մեր մարմինը բաղկացած ոսկորներից և մկաններից (մսերից). մկանները*

գործածելուց մաշւում են, այնպէս որ հետզհետէ բարականում են և մարդս մեծ վնաս է կրում. բայց այդ վնասը փոխարինում է մեր ընդունած սնունդը, որովհետև երբ մենք սնունդ ենք ընդունում. այն ժամանակ թէ այդ մաշւած տեղն է լցւում թելերով և թէ մկաններն էլ հաստանում են և այդպիսով էլ զօրանում է։ Մեր ընդունած սնունդը պէտք է լինի այնպիսի նիւթից, ինչ նիւթից որ բաղկացած է մեր մարմինը «մսեղէն, բուսեղէն»։

Բացառութիւն են կազմում հանքերը, որոնցից մենք սնունդ չենք ընդունում։

Մեր ընդունած կերակուրը մարսելով, մարմնի մէջ յառաջացնում է տաքութիւն, որից և կախւած է մեր կեանքը. տաքութիւնը մեր մարմնի մէջ չնորհւած մի առանձնայատկութիւն է, որովհետև այս տաքութիւնը մարսում է կերակուրը, որից ստանում ենք մեր սնունդը, ուրեմն սնունդը պատճառ է տաքութիւն յառաջանալու և տաքութիւնն էլ սննդի. տաքութիւնը մեր մարմնի մէջ ցելսիուսի ջերմաչափով առհասարակ $37^1/_2$° է, բայց կարելի է աւել կամ պակաս էլ լինել. սակայն եթէ 42°-ից անցնի. այն ժամանակ այդքան տաքութեանը չենք կարող դիմանալ, ուստի կայրւենք։ Իսկ եթէ 35°-ի հասնի, այն ժամանակ



այդպիսի տաքութեան մէջ մեր ստամոքսը չի կարող մարսել մեր ընդունած սնունդը, որով և կարող է հիւանդութիւն պատճառել։

Մեր ամենատաք եղած ժամանակը կէսօրին է, խաղալու ժամանակ։ Մեր ընդունած կերակուրը նախ խւրանում է և ապա վերանորոգում մարմնի մաշւած մասերը, երբ կերակուրը ստամոքսն է մտնում, մարսւում է (լուծւում է) և բաժանւում է երկու մասի՝ պիտանի և անպիտանի։ Պիտանի մասերը (սննդարար) արիւն է դառնում, որից մենք սնունդ ենք ստանում, իսկ անպէտք մասերը (անսննդարար) մնալով ստամոքսի մէջ, նեխւում են և մեզ օգտակար չը լինելով հեռանում են մարմնից. բայց այնուամենայնիւ կան դրանց մէջ սննդարար մասեր, որոնք միանալով նեխւած մասերի հետ, կորցնում են իրանց սննդարարութիւնը և մեզ համար անպէտք են լինում։ Թէ անպէտք մասերի մէջ սնունդ կայ, կարող ենք ապացուցանել նրանով՝ որ կան այնպիսի կենդանիներ, որոնք իրանց կերակուրը գտնում են աղբանոցներում, ուրեմն այդ աղբը իւր մէջ սնունդ է պարունակում, որ կենդանին ուտում է։

## ՄԱՐՍՈՂՈՒԹԻՒՆ

Կերակուրը բերանում մանրուելով մտնում է մարսողութեան գործարանները, որ կազմում է մի երկար անընդատ խողովակ, և այդ խողովակը սկսւում է բերանով և վերջանում է վարագ աղիքով։ Այդ խողովակի մասերն են 1) բերան, 2) կլոկ (որկորի վերին մասը) 3) որկոր, 4) լայնապարկ կամ ստամոքս և 5) բարակ և հաստ աղիքներ, որոնք բաժանւում են երեք մասերի ա) տասներկու մատեայ աղիք, որը մի ծայրով կպած է ստամոքսին և 12 մատն երկարութիւն ունի, բ) բարակ ու հաստ և գ) վարագ աղիքներ, որ վերջաւորութիւն է կազմում աղիքների։ Աղիքները մարդու մարմնից $2^1/_2$ անգամ երկար են, իսկ կենդանիների աղիքների երկարութեամբ կախւած է իրանց կեանքից։ Խոտակեր կենդանիների աղիքները 30 անգամ երկար են իրանցից (կենդանուց), իսկ մսակերներինը իրանցից էլ կարճ։

Կերակուրը բերանից գնում է նախ որկորը (որը բաղկացած է մկանունքային օղերից և սովորական ձեր կուչ եկած է, բայց կերակուրը բաց անելով կամաց կամաց առաջ է գնում է) և ապա ստամոքսը, որտեղ մարսւում է հետևեալ կերպով. ստամոքսի պատերը զանազան և ամեն ուղղու-



թեամբ մկանունքներ ունին, որոնք եւ շատ առաձգական են և կարող են ամէն կողմ շարժել հետևաբար ստամոքսն էլ կարող է ամեն ուղղութեամբ շարժել, աջ ու ձախ, վեր ու ներքև, յետ ու առաջ։ Կերակուրը երբ մտնում է ստամոքսը և որ պատին որ կպչի, այն պատը և նոյն կողմի մկանունքները սեղմւում են, երբ սա սեղմւում է, միւս կողմերը լայնանում են և ոչ մի անգամ բոլորը միասին չեն սեղմւում կամ լայնանում, այլ մի քանիսը սեղմւում են և մի քանիսը լայնանում և այսպիսով կերակուրը ստամոքսից գլնալու վտանգից ազատ է մնում։ Իսկ երբեմն մեր սիրտը յետ է գալիս, դրա պատճառը կամ շատ ուտելն է, կամ կամ ստամոքսի հիւանդութիւնն է որովհետև այն ժամանակ ստամոքսի բոլոր պատերը միասին գրգռւելով սեղմւում են և կերակուրը պարապ տեղ գտնելով ստամոքսի մէջ եկած ճանապարհով էլ դուրս է գնում. այս բանը աւելի նկատւում է արբեցողների վերայ։

Մարդս ունի միայն մի ստամոքս, իսկ որոճողները չորս, որոնցից մէնը աւելի մեծ է և «թափան» է կոչւում, որտեղ հաւաքւում է կենդանու կերած կիսածամ խոտը, որ նրա առաջը գնելուս աշխատում է որքան կարելի է շատ ուտել և հոգ չի տանում լաւ ծամելու։ Երբ ուտելուց հանգստանում է, մենք նկատում ենք, որ նա

բերանը շարժում է, մի բան ծամում է, և ճիշտ է, որովհետև Թափանից կերակրի մի փոքր մասը մտնում է բ. ստամոքսը, որ ունի մկանունքային կազմութիւն և որի մկանունքները մի ուղղութեամբ են, այնպէս որ, կերակուրը հէնց որ մտնում է մէջը, մկանունքները միասին գրգռում են և կերակուրը սախպուած դառնում է դէպի բերանը։ Կենդանին լաւ մանրացնում է յետ եկած կերակուրը և կուլ է գալիս. որ գնում է ուղղակի գ. ստամոքսը և այստեղից դ. ստամոքսը (վերջին երկու ստամոքսները միենոյն դերն են կատարում, ինչ որ մեր ստամոքսը)։ Այզտեղ (գ. և դ. ստամոքսը) կերակուրը մարսւում է։ Իսկ շոգ երկրի կենդանիները (ուղտ ընձուղտ եայլն) երեք ստամոքս ունին ա. բ. և դ. իսկ գ. պակաս է։ Թռչուններն էլ ունին յետ բերելու յատկութիւն սոքա ես ունին երկու ստամոքս, մէկի մէջը մըտնում է կերակուրը, (փափկանում է) իսկ միւսի մէջ մարսւում։ Բացի որանից պարանոցի տակ ունին մի պարկ, որ կոչւում է «խածի», «քուչ» կամ «կտնակ». երբ Թռչունը օր. աղաւնին կամենում չ կերակրել իր ձագերին, նա, նախ հաւաքում է կերակուրը խածիի մէջ, որտեղ մնալով փափկանում է, յետոյ յետ է բերում և կերակրում ձագերին։

Կերակուրը մտնում է ստամոքսը և սկսում է տրորւել նրա մէջ։ Ստամոքսի պատերը գրգռում



Մ ո ւ ր ա ց ա ն

(Տես երես 207)

«ՃԻՐԱԳ» 1909 թ.

են և նրանց մէջ գտնուած խուլերից արտաթորւում են հիւթեր, որը երկու տեսակ է, այն հիւթը, որ լուծանելի է դարձնում սպիտակուցը, կոչւում է «Պեպսին», իսկ երկրորդը որ լուծում է կրճուկներ, աղերը նայլն կոչւում է «Թթու». երբ թթուն խառնւում է պեպսինի հետ, կոչւում է «Պեպտօն» կոչուած հիւթը։ Ստամոքսի պատերից դուրս է գալիս մեծ քանակութեամբ լորձունք, որ պատրաստւում է ստամոքսի պատերի մէջ գտնուած խուլերի մէջ։ Կերակուրը քանի ստամոքսի մէջն է, ստամոքսի հիւթը շարունակ դուրս է տալիս և խառնւում կերակրի հետ։

Վերջապէս կերակուրը այնքան թթւում է ստամոքսի մէջ, որ պատերը միասին գրգռելով կերակուրը մղում են դէպի աղիքները 4 ժամ կերակուրը իրանց մէջ պահելուց յետոյ։ Կերակուրը նախ մտնում է 12 մատնեայ աղիքը, այստեղ նա փոփոխութիւններ է ենթարկւում. այս աղիքի մէջ բացւում են երկու խողովակներ, որ բերում են երկու տեսակ հիւթեր, մինը ստամոքսային մեծ խուլից, որ կոչւում է «Պանդրէաս» (ստամոքսային հիւթ), իսկ միւսը լեարդից «լեղի»։ «Պանկրէա հիւթը չլուծուած օսլան դարձնում է «Ցէքստրին» և ապա շաքարը լուծում է սպիտակուցը, և մանրացնում է ճարպը, դարձնում է «Էմուլսիա»։ Իսկ լեղին խառնուելով կերակրի հետ

գրգռում է աղիքների պատերը և կերակուրը արագութեամբ առաջ է դնում և այդպէս պահպանում է կերակուրը նեխելուց. (որովհետև մեր մարմինը ունի 37½° տաքութիւն և հետևաբար կերակուրը կարող է նեխել) միևնոյն ժամանակ լեղին մարսողութեան նիւթ էլ է, որովհետև նա է, որ ճարպը սապոնի նման փրփրեցնում է: Յետոյ կերակուրը մտնում է բարակ և ապա հաստ աղիքը, այստեղից դուրս է գալիս աղիքային հիւթ և կերակրի մէջ մնացած օսլայի սպիտակուցի և ճարպի մեծ մասը մարսւում է: Վերջապէս մտնում է վարագ աղիքը, որտ մարսողութիւնը դադարում է. այս աղիքի մէջ չկայ ոչ մի մարսողութեան հիւթ, և եթէ գտնուէր էլ դժուար թէ կերակրի դժուար չլուծած մասերը լուծէր, որովհետև այդտեղ հասնելուս կերակուրն արդէն բոլորովին քայքայուած է լինում ու նեխուած: Իսկ եթէ գտնւում են այնպիսի մասեր, որոնք դեռ ևս չեն լուծւել և չեն նեխւել, նրանք կարող են մարսւել շնորհիւ մարսողութեան հիւթերի, որոնք գտնւում են մեր կերակրի մէջ, եթէ այդտեղ զանազան հանգամանքներից օրինակ կերակուրը երկար մնալուց չը շորանար: Կերակուրը մարմնի մէջ մնում է 24 ժամ և ապա անպէտք մասերը հեռանում:



# IX. ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

## ՀԱՑԱՀԱՏԻԿՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՆՈՐ ՁԵՒԸ

Ներկայումս, երբ հողն արդէն չի տալիս այլևս իր նախկին առատ բերքը, որով լիօրէն կերակրւում ու ապրում էին մարդիկ, գոյութեան խնդիրը մարդկանց ստիպեց դիմել զանազան միջոցների, որ թերևս մի փոքր թեթևացնի նրանց տնտեսական ծանր վիճակը: Հացահատիկների մշակման համար զանազան փորձեր կատարւեցին և կատարւում են, որոնցից աւելի յայտնի և նպատակայարմար է Դեմչինսկու սիստեմը, որ ստորև առաջ ենք բերում «Ձիրակ» օրացոյցի ընթերցողների համար, որի վերջնական լուծումը պէտք է համարել գիւղացու միակ փրկութեան ճանապարհը: Այդ սիստեմը հացաբոյսերի շիթիլն է, որի մի մասնակի փորձը Ալէքսանդրապօլում տւել է հետևեալ արդիւնքը. վեց գարի տեղափոխելով (շիթիլ անելով) գիւղատնտես պ. Ղարագեօզեանի ձեռքով տւել է 223 ցօղուն կամ 4460 գարի:

---

## ՀԱՑԱԲՈՅՍԵՐԻ ՇԻԹԻԼԸ

Երկու տարի առաջ, եթէ մէկն ասէր թէ հացաբոյսերը (ցորենը, գարին և այլն) կարելի է շիթիլ անել, նրան կծաղրէին, կամ նոյն իսկ խե-

լագար կհամարէին։ Բայց այժմ, երբ հազարաւոր փորձ անողները մամուլի միջոցով զանազան տեղերից հաղորդում են իրանց փորձերի զարմանալի հետեւանքների մասին, այլ եւս կասկածի տեղիք չի մնում։ Արդէն մեզ համար անհերքելի իրողութիւն է, որ չիթիլի գործադրութիւնը հացաբոյսերի վերաբերեալ խոստանում է ահագին յեղափոխութիւն հացաբոյսերի կուլտուրայի մէջ, որի հետեւանքը մօտ ապագայում, անշուշտ պիտի լինի մեր հողագործ հասարակութեան կուշտ եւ նիւթական ապահով ապրուստը։

Յայտնի է, որ հացաբոյսերի չիթիլ անելու փորձերը եղել են եւ Ալէքսանդրապօլում, Թափագօլլակում եւ Քափանակում, բայց չպէտք է բաւականանալ այդ փորձերով, անհրաժեշտ է այդպիսի փորձեր անեն շատերը, մանաւանդ գիւղում, որպէսզի որքան կարելի է արագ տարածուի գիւղական հասարակութեան մէջ չիթիլի կուլտուրան, որն արդէն համարւում է գիւղացու փրկութեան. Նրա կուշտ ապրուստի միակ գործնական ճանապարհը։ Ի նկատի ունենալով, որ արդէն հասել է այդ կուլտուրայի աշնան ցանքսի ժամանակը, մենք պարտք ենք համարում ծանօթացնել հասարակութեանը հացաբոյսերը չիթիլ անելու գըլխաւոր ձեւերի — գործադրութիւնների (прiемъ) հետ։



Թէեւ Ջօրագեալում ընդունուած չէ աշնան ցանքսը, բայց ի նկատի ունենալով, որ չիթիլ արած բոյսերի արմատները շատ ճոխ են աճում եւ որքան խոր են տարածւում գետնի մէջ, որ այլ եւս չեն սառչում ձմրան ցրտից ու միեւնոյն ժամանակ աշնան ցանքսը առհասարակ աւելի արդիւնաբեր է լինում, ուստի յոյս ունենք որ բազմաթիւ փորձերը կապացուցանեն, թէ մեզանում էլ կարելի է աշնան ցանքս անել չիթիլի եղանակով։

1) Հողային մասնաբաժինը նայած տարածութեանը պէտք է վարել գութանով կամ արօրով, կամ քանդել բահով եւ տափնել որ մակերեւոյթը հարթ լինի։

2) Այդպէս պատրաստած հողաբաժինը (արտը) պէտք է բաժանել շերտերի, որոնց լայնութիւնը պիտի լինի 6 վերշօք, տես նկար (1)։



Նկ. (1). ամբողջ հողային մասնաբաժինը։

3) Մի առանձին տեղ ևս պէտք պատրաստել սերմը ցանելու համար, որտեղ և ցանել սերմը այնքան, ինչքան որ հարկաւոր է չիթիլի համար պատրաստած տեղին բաւարարութիւն տալու։ Սերմը ցանել, կամ ցրւած (въ разбросъ) ինչպէս առհասարակ ցանում են, կամ աւելի լաւ է տնկել հատիկ հատիկ մէկ վերշոք հատիկը հատիկից հեռաւորութեան վերայ. հատիկները պէտք է ցանել կամ տնկել մէկ վերշոքից ոչ աւել խորութեան։ Հատիկների տնկելը ցրիւ ցանածի դէմ այն առաւելութիւնն ունի, որ համահաւասար է բուսնում և արմատները չեն խճճւում և չիթիլը հանելու ժամանակ չեն կտրատւում։

4) Սերմը ցանելուց յետոյ, եթէ հողը շատ չոր է և եղանակը երաշտ՝ հարկաւոր է ջրել ըստ պահանջին մի երկու անգամ, որ ծիլը ուժեղ և խմբովին, համերաշխ (дружно գուրս գայ։

6) Երբ ծլերը կտան երկու կամ երեք տերև, որը լինում է ցանելուց, վրայ չորրորդ շաբաթը, այդ չորրորդ շաբաթի վերջին օրերը, բոյսերին պէտք է զգուշութեամբ իր արմատով հանել տեղից, արմատներից հողը թափ տալ և դարսել մի փոքր արկղի կամ աւելի լաւ է սալի մէջ։ Պէտի չիթիլը հանել քիչ քիչ, որ մինչև տնկելը չը չորանայ։



Չիթիլը տնկում են նախապատրաստած 6 վերշոկ լայնութիւն ունեցող չերտի վերայ, մէկը միւսից 3 վերշոկ հեռաւորութեամբ և այնքան խորը, որ բոյսն իրան նախկին նստածից մէկ վերշոկ խորը լինի նստած և առաջին ծունգը հողում լինի։




Նկ. 2.

Երկրորդ նկարը ցոյց է տալիս թէ վեց վերշոք լայնութիւն ունեցող չերտի վրայ, ինչպէս պէտք է դասաւորել բոյսերը, որ երեք շարք լինի։ Նոյնպէս նշանակւած է ևս բոյսերի մէկը միւսից ունեցած հեռաւորութեան չափերը, այնպէս որ առանձին բացատրութեան կարիք չկայ։

Չերտերից առաջինը տնկում են, երկրորդը թողնում են ազատ, ոտի տեղ ճանապարհ. Հետևեալ տարին ազատ մնացած չերտը տնկում են, իսկ տնկած թողնում ազատ և այդպիսով հողի կէս մասը մի տարի հանգստանում է։

Օգատ շերտի վերայ անկելուց առաջ լաւ է մի բարակ շերտ աղը փռել և այդ շերտի վերայ մի բարակ շերտ հող փռել, շերտը մի փոքր կը բարձրանայ մակերեւոյթից և կը պտղաբերանայ. այդպէս պէտք է անել չորունակ ամեն տարի և այդպէս անելով, ամեն տարի հողի կէս մասը կը հանգստանայ և կպարարտանայ: Այդ տեսակ պարարտացնելու թէ ծախսը և թէ աշխատանքը շատ քիչ է լինում, իսկ արդիւնաբերութիւնը հրաշալի:

Շատ ցանկալի է որ փորձ անողներն այս գործնական պայմանները միատեսակ և ճշտիւ կատարէին և արած փորձերի մասին մանրամասն տեղեկութիւններ հաղորդէին մամուլի միջոցով, որ հնարաւորութիւն լինէր այդ փորձերի հիման վերայ մի ամփոփ գաղափար կազմել չիթիլի կուլտուրայի մասին:

7) Աշնան ցանքսը պէտք է սկսել օգոստոսի 10-ից ոչ ուշ. մէկ քառակուսի սաժէնի վրայ 216 չիթիլ է դրւում: Այդքան չիթիլ ստանալու համար սերմը կարելի է ցանել կէս քառակուսի արշին հողում:

Ցանկալի է, որ փորձ անողն ամբողջ փորձի ժամանակամիջոցում դիտողութիւններ անէր, զանազան կլիմայական հողային ուրիշ հանգամանքների վերայ, որոնք նշանակութիւն կունե-



նան բուսականութեան յաջող կամ անյաջող զարգացմանը:

Չիթիլը տնկում են մատուլով (САДИЛЬНЫЙ КОЛЪ) տես նկար. 3.



Նկ. 3.

Գ. Ղարագեօզեան

## ՀԱՍԱՐԱԿ ԹՒԱՐՋՆՈՒԹԻՒՆ

Այսօր եւրոպինեան կզզու անկարանում էի, ուր հասնում է մ ա կ ե ր ի ց ա ն ք ս ի շուգարը: Այդ ցանքսը ես մի քանի անգամ էլ էի տեսել, սակայն այսօր այնտեղ պատահեցի բացի սովորական այցելուներից, գիւղացիների մի զօրախումբ, իրենց ոսպայի հետ, որոնք զարմացած նայում էին շուգարի այդ ահագին շեղջին: Այցե-

պան Նիկոլայը պատմում էր ցանքսերի մեծութեան մասին, հատիկների քանակութեան ևայլն:

Ես դիմեցի մի զինուորի—գիտե՞ս ինչ, բարեկամ, այգեպանը գուցէ քեզ խաբում է. չաւդարն իրեն հասունցած ձաղն է, ինքդ մտիր մէջը և համարիր, թէկուզ հէնց այն տունկը, տեսնենք որքան հասկեր կան վրան:

Չաւդարի մէջ մտաւ զինուորը և ներկայ եղողների լիակատար լռութեան մէջ բարձրաձայն համրեց—մէկ, երկու... եռեսուն... քառասուն... յիսուն և հինգ... յիսուն և ինը:

—Յիսուն ինը, կրկնեցին մի քանի ձայներ:

—Բաւական է սպասիր, սպասիր, ասացի ես. գրկախառնիր բոլոր հասկերը, կռացրու դէպի մեզ, իսկ դուք տղերք, համարեցէք հատիկները:

Երկուսը քանդեցին ամենալաւ հասկերից և համրեցին նրանց վրայ 126 և 164 լիքը հատիկները:

—Սպասիր... վերցրու ամենաառատ հասկը... համրիր...

—62

—Լա՛ւ, այժմ եթէ հաշւենք իւրաքանչիւր հասկում 80 հատիկ, այն ժամանակ մի տունկի վրայ կլինի 5000 հատիկ: Բայց քանի որ եռեսուն, քառասուն հասկ ունեցող տունկեր կան. (պակաս չկայ) պէտք է հաշւենք, որ իւրաքանչիւր



տունկի վերայ կայ միայն եռեսունական հասկ և իւրաքանչիւր հասկի մէջ 62-ական հատիկ—այսինքն առնւազն մի տունկի վերայ մօտ 2000 հատիկ, իսկ բոլոր 1020 տունկերի վերայ 2,040,000 հատիկ, կամ երկու փութ ու կէս: Իսկ այժմ, ապա հարցրէք Նիկոլային. թէ որքան է այստեղ ցանած:

—7 մախալ:

—Տեսէք ուրեմն. փոքրիկ մարկերից, որոնց կարող է մի օրւայ մէջ մշակել ամեն մի գեղջկուհի, 7 մախալ սերմից ստացել է 2 ու 1/2 փութ չաւդար: Այժմ դուք դատեցէք, այս ձևով հաց ստանա՞լն է լաւ, թէ հին ձևով մէկին-երեք:

Դեմչինսկի

# X. ՄԵՂՈՒԱԲՈՒԾԱԿԱՆ

Մեղուաբուծութիւնը իւր շահաւէտութեամբ գիւղատնտեսութեան ճիւղերի մէջ առաջնակարգ տեղ կարող է բռնել։

Մեղուաբուծութիւն կարելի է սկսել շատ չըն-չին դրամագլխով, որը կարճ ժամանակամիջոցում կարող է աճել և տալ մեծ արդիւնքներ. ի հար-կէ, մեղուներից ստացուած արդիւնքը, միշտ և ա-մեն տեղ, միատեսակ չի լինում։ Նա կախուած է ոչ միայն շրջակայքի առատ բուսականութիւնից, այլ և այս կամ այն տարուայ բարեյաջող գարնա-նից և անպայման, մեղուապահի ուշադիր, հոգա-տար վերաբերմունքից ու փորձառութիւնից։

Սկսնակ-մեղուապահներից շատերը՝ լսելով մեղուապահութեան արդիւնաւէտութեան մասին, սկսում են այդ գործը առանց սկզբնական նա-խապատրաստութիւնների։

Չը կարդացած նոյն իսկ մեղուաբուծական ո-րևէ գրքոյկ, չունենալով ոչ մի մեղուաբուծական գիտութիւն, նրանք ձեռնարկում են գործը՝ կար-ծելով, թէ բաւական է ունենալ մեղուներ և ար-դիւնքն ինքն իրան կգայ…

Չպէտք է մոռանալ, որ մեղուների բաղդից երբեմն լինում են այնպիսի անյաջող տա-րիներ, երբ նոյն իսկ ամենափորձուած մեղուապա-



հի ձեռքի տակ, մեղուների ամենաուժեղ ընտա-նիքներն անգամ հազիւ կարողանում են այնքան մեղր հաւաքել, որ իրանց ձմրան պաշար լինի և կարողանան մինչև հետևեալ գարուն ապրել։ Իսկ այդ դէպքում սկսանկի մեղուները հազիւ ապրեն մինչև աշուն, էլ ուր մնաց թէ ձմեռ։

Շատ սկսնակներ, որոնք սպասում էին մեղ-ուապահութեան մէջ տեսնել ձրիակերութեան մի նոր ասպարէզ, այդպիսի անյաջողութեան հան-դիպելով հիասթափուած, թողնում են ընդ միշտ մեղուապահութեան միտքը։ Մեղուաբուծութեանը լուրջ վերաբերւողը—ով նուիրուած է այդ գործին, նա չպէտք է կանգ առնի կէս ճամբին, նա պէտք է բաժանէ մեղուների հետ հաւասարապէս՝ թէ ուրախութիւն, թէ տրտմութիւն, թէ արդիւնք և թէ վնաս։

Ինչ վերաբերում է մեղուաբուծութեան շա-հաւէտութեան, դա աներկբայ է և դժւար, թէ մէկը ներկայումս կասկածի այդ մասին։ Բայց ա-ւելի օգտաւէտ է նա, երբ տարւում է կատարե-լագործուած եղանակով։ Հաշւած է, որ մեղունե-րի մի լաւ ուժեղ ընտանիքը տարեկան տալիս է իրա վերայ ծախսուած գումարի 30% արդիւնք։ Լինում են բարեյաջող տարիներ, (մեղրի բերքի նկատմամբ) երբ արդիւնքը հասնում է մինչև ան-գամ 100%—150%։ Բոլոր այս թւերը չափա-

զանցութիւններ չեն, այլ խելացի և լուրջ մեղւապահութեան արդիւնք:

Ապացուցուած է մեղւաբուծութեան արդիւնաւէտութիւնը: Պէտք է լուրջ ուշադրութիւն դարձնել նրա վերայ իբրև գիւղատնտեսութեան ճիւղերի լաւերից մէկը:

Աւելորդ չէ այստեղ բերել յայտնի մեղւաբոյծ Բուտլերովի խօսքերը «Գիւղացի չքաւոր մեղւապահ չը կայ»: Ս. Տիգրանեան

---

## ՄԵՂՒԱԲՈՒԾԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Ամառը արկանոցը (փեթակի դուռը) կանաչան թիթեռներից պաշտպանելու համար, որոնք մտնում են ներս մեղր ծծելու համար, պէտք է արկոցի առաջը ամրացնել մի փայտեայ ցող, որի վերայ սանրաձև ամրացրած երկաթեայ թելերը արկանոցը կբաժանեն մանր մասերի: Սանրերի ատամների հեռաւորութիւնը մէկը միւսից կը լինի մէկ սանտիմէտր, 1/4 վերշոքից քիչ պակաս: Այդ բաժանմունքներից մեղուները ազատ կարող են անցուդարձ անել, իսկ այդ միջատները ոչ:

Մեղուներին հասարակ փեթակներից դադան փեթակների մէջ տեղափոխելու ամենալաւ ժամանակը գարնան սկզբին է, առհասարակ որքան



շուտ տեղափոխուի, այնքան շուտ կը զօրանայ ընտանիքը:

—

Եթէ մեղուների մէջ փորլուծութիւն է տարածուած և գարնան սկզբի վատ եղանակները խանգարում են մեղուներին դուրս թռչել և մաքրուել, այդ դէպքում միակ և միակ միջոցն է գոնէ մէկ օրով, եթէ հնար է օգտուել եղանակից և թոյլ տալ. որ մեղուները թռչեն օդի մէջ մաքրւելու, եթէ փեթակները ձմեռանոցում են և մի օր լաւ եղանակ պատահի, պէտք է օգտուել հանգամանքից՝ դուրս դնել փեթակները: Մեղուների մաքրուելուց յետոյ վտանգաւոր չէ դուրսը թողնելը եթէ եղանակը ցրտէ. միայն, իհարկէ, պէտք է նախ կերակրել մեղուներին: Տալ նրանց թանձր շաքարաջուր, (մի մաս ջուր երկու մաս շաքարին) որի մէջ պէտք է խառնել սալիցիլեան թըթւուտ (салициловая кислота) 12 ֆունտ շաքարաջրին—5 մսխալ սալից. թթւուտ: Ի հարկէ, փեթակները պէտք է պաշտպանել ցրտից—բները և արկանոցները (դռները) փոքրացնել և քամուց պաշտպանել:

—

Եթէ դուրսը ծաղկափոշի չկայ, կարելի է ալիւրով փոխարինել: Ինչպէս ծաղկափոշին, այնպէս և ալիւրը, ներկայացնում են իրանցից սպի-

տակուցային նյութեր, այսինքն պարունակում են ազօտ, որը անհրաժեշտ է ամեն մի կենդանի էակի զարգացման համար։ Ընդհանրապէս, ոչ մի հիմք չունենք հրաժարվելու ալիւրի գործածութիւնից պէտք եղած դէպքում։ Մանաւանդ մեղուները իրանք էլ դադարում ալիւր գործածելուց, երբ դուրսը երևայ ծաղկափոշու հետքերը։

—

15. Եթէ մեղրահացերը փորացաւից շատ չեն կեղտոտուել և չեն փչացել, կարելի է շրջանակները քերել և որքան հնարաւոր է ոչնչացնել արտաթորութեան հետքերը, դանակի ծայրով բանալ փակ բջիջները և տալ մեղուներին, որ մեղրը միջից հանեն։ Երբ բջիջները մեղրից կազատւին հանել և հալել։

Իսկ եթէ մեղրահացերը չափազանց կեղտոտուած են և մաքրելը անհնար է, պէտք է անպայման հալել, մոմը զտել, իսկ մեղրը ոչնչացնել։

—

Եթէ մեղուները փոխադրւի 5 վերստ հեռաւորութեան վրայ, կարելի է ապահով լինել, նրանք այլևս չեն վերադառնայ։ Ա. Տ.



# XI. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

## ԽՄԵԼՈՒ ՋՈՒՐԸ

Ջուրը նոյնքան, եթէ ոչ աւելի, անհրաժեշտ է մեր կեանքի համար, որքան և կարծր կերակուրը։ Ջուրը մտնում է, որպէս էական հիմք, բոլոր խմիչքների մէջ. մտնում է նաև կարծր կերակրների բաղկացութեան մէջ, և անգամ մեծ քանակութեամբ՝ 70, 80, 90%։ Կաթնասունների մսի քաշի $^{3}/_{4}$-ը և ձկների $^{4}/_{5}$-ը ջուր է։

Մարդը իր շնչառութիւնով, քրտինքով, արտաթորութիւններով օրական այնքան ջուր է կորցնում, որ նրա տեղը բռնելու համար, պէտք է խմել օրական 3 գրվանքից մինչև 8 գրվանքայ ջուր։ Միայն ժէզի միջոցով մարդ օրական արտաթորում է մօտ $3^{1}/_{2}$ գրւանքայ ջուր։

Կազմուածքի կենսականութիւնը, ինչպէս է՝ խօսելը, շարժելը, մտածելը, աճելը, մարսելը և այլն, ջրի պակասութիւն ունի, մարդ ծարաւութիւն է զգում։ Շոքի սաստկութիւնից մարդ քըրտինքով՝ հովանում է։ Խմած ջրի մի մասը իր պաշտօնն է կատարում կազմուածքի մէջ, իսկ աւելորդը երիկամունքի (պլոճիկ) միջոցով, մէզի ձևով արտաթորւում է մարմնից։

Պէտք է զգոյշ լինել, պէտք է տեղեակ լինել

այն ջրի յատկութեանը, որով մարդ ամեն օր և ամեն րոպէ իր կեանքն ապրեցնում է: Ջուրը, ինչպէս կերակուր, պէտք է առաջնակարգ հարց լինի մեզ համար:

Աղբիւրի ջուրն ի հարկէ աւելի լաւ է, քան թէ ճահճայինը: Ջուրը, անցնելով հողի շերտերով լուծում է իր մէջ նոյն հողի մասերը: Ջրհորների կանգ առած ջուրը շատ վնասակար կարող է լինել, մանաւանդ երբ ջրհորը գտնւում է արտաքնոցների մօտ և ոչ այնքան խոր: Աղբիւրը, գետը կամ ջրհորը, եթէ գտնւում են գերեզմանների մօտ, կարող են շատ կորստաբեր հետևանքներ ունենալ, որովհետև անձրևը, ողողելով նեխած դիակները, լուծելով նրանց մասերը, գնում է և մօտակայ աղբիւրի, գետի կամ ջրհորի մէջն է թափւում: Գերեզմանները գիւղերին մօտ լինելով, գիւղի կամ քաղաքի կենդրոնումը, կամ եկեղեցիների բակումը, մեր շնչած օդը թունաւորելուց յետոյ, թունաւորում են և մեր խմած ջուրը:

## ՄԱՐԴԿԱՆՑ ԵՐԿԱՐԵՑՈՒԹԻՒՆԸ

Երկայնակեցութեան ցուցակներից մենք փոքր ի շատ կարողանում ենք հետևացնել զանազան տեսակի պարապմունքների ազդեցութիւնը



մարդու կեանքը երկարացնելու կամ կարճացնելու վերայ: Կան արհեստներ, որոնք կարելի է ասել, ուղղակի սպանում են մարդին: Չմոռանանք, որ երկար կեանքն առհասարակ կապւած է առողջութեան և կարճ կեանքը հիւանդութեան հետ:

Շատ ապրող մարդկերանցից սովորական է լսել, թէ նրանք իրանց օրումը չեն իմացել թէ ինչ է հիւանդութիւնը»: Այո, երկար կեանքն ու առողջութիւնը հարազատ և զուգընթաց եղբայրներ են և աւելացնենք, որ առողջութիւնը ամենաբնական գեղեցկութիւնն է մարդու համար, առողջութիւնը երջանկութիւն է և ոչ միայն մարմնաւոր, այլև հոգեկան՝ վերցրած երկար կեանքի հետ. Նա աշխատող ոյժ է, հարստութիւն է, դերդաստանի և հասարակութեան սիւն է: Կրթելով մեր կամքը, բնաւորութիւնը, զարգացնելով մեր մտաւոր և հոգեկան բոլոր ընդունակութիւնները և տալով նրանց նպատակայարմար ուղղութիւն, դնելով մեր կեանքը այնպիսի հանգամանքների մէջ, որ նա խոստանում է լինել պտղաւէտ և օրինակելի. վերջապէս, երկար տարիների ընթացքում անասելի դժւարութիւններով պատրաստելով մեզ համար այս աշխարհի պայմանաւոր երջանկութիւնը, մենք իսկապէս մի բանի պէտք ունինք՝ առողջութեան և երկայնակեցութեան:

Երկայնակեցութիւնը ըստ մեծի մասին

մի ժառանգութիւն է, որը ստանում ենք մեր ծնողներից, բայց մեզ հետ աշխարհ բերելով այդ ժառանգութեան սերմը, մենք կարող ենք կամ վատնել, խեղդել նրան և կամ աւելի ևս աճեցնել։ Որովհետև խօսքներս զանազան տեսակի արհեստների մասին է, ասենք որ ծնողների վերայ մեծ պարտականութիւն կայ, որ նրանք ոչ միայն սիրեն իրանց զաւակներին, այլև գիտենան սիրել։ Լաւ է ասած՝ թէ «կաթի հետ ծծածը, հոգու հետ դուրս կգայ»։ Գիւղի, մանաւանդ լեռնոտ տեղերի մաքուր օդը, սննդարար կերակուրը, առողջարար բնակարանը, յարմարագոյն արհեստի ընտրութիւնը և այլ առողջապահական պայմաններ, ըստ կարեաց չափ, ծնողը պէտք է չխնայի ներկայացնել իր զաւակին։ Ծնողը պէտք է լինի իր զաւակի անփոխարինելի բարեկամը։ Որքան վնասակար սովորութիւններ, ու զարտուղի ճանապարհներ կան, որոնք երիտասարդին ուղղակի դէպի հոգեկան և մարմնաւոր կործանում են տանում։ Ծնողն է մեր բնական և առաջին բարեկամը և ուսուցիչը։ Եթէ կամենում էք բաղդաւոր անել ձեր որդուն, պատրաստեցէք նրա համար երկարատև բախտի աղբիւր, այն է՝ առողջութիւնը։

Բժշկ. Բ. Նաւասարդեան

---



# XII. ՊԱՏՄԱԿԱՆ

## ԹՈՒՐՔ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Յուլիսի 11-ը Թիւրք կայսրութեան պատմութեան մէջ բաց արեց մի նոր դարագլուխ։

Աբդիւլ-Համիդը՝ հրատարակեց սահմանադրութիւն։

Այդ սահմանադրութիւնը, ինչպէս արդէն յայտնի է, այն է, որ հռչակուեց 1876-ին, և որը յայտնի է «Միթհադեան» անունով։

Այստեղ աւելորդ չենք համարում համառօտակի մի քանի խօսք ասել ընդհանրապէս սահմանադրութեան մասին, ապա և մասնակի քաղուածքներ Օսմանեան սահմանադրութիւնից։

---

Իւրաքանչիւր պետութիւն ունի իր իշխանութիւնը, որի անունով հրատարակւում են օրէնքներ, և որի անունով կառավարւում է երկիրը։ Այդ իշխանութիւնը կոչւում է բարձրագոյն, որպէսզի որոշւի այն միւս իշխանութիւններից, որոնք իրանց ոյժն ստանում են այդ բարձրագոյն իշխանութիւնից և կազմում են նրա մասերը օրէնքներ հրատարակելու և երկիրը կառավարելու համար։ Դրանք երկրորդական ստորադրեալ, իշ-

խանութիւններ են, դրանք բարձրագոյն իշխանութեան հրամանակատարներն են։

Պետութեան սահմաններում ապրող բոլոր մարդիկ պարտաւոր են անպայման հպատակուել բարձրագոյն իշխանութեան ու կատարել նրա բոլոր հրամանները, որ արտայայտւում են օրինական ձևով և օրինական մարմինների միջոցով։ Դրա մէջ է կայանում բարձրագոյն իշխանութեան ու պետութեան ժողովրդի կապը։ Այդ կապը մի քանի պետութիւնների մէջ կոչւում է հպատակութիւն, իսկ միւսների մէջ քաղաքացիութիւն, որն իսկապէս նոյն հպատակութիւնն է, բայց ոչ անձնաւորութեանն, այլ պետութեանը։

Այն պետութիւնների մէջ, ուր բարձրագոյն իշխանութիւնը պատկանում է ժողովրդին, ժողովրդի ձեռին է, այնտեղ իշխում է Ռամկավարութիւն՝ ժողովրդական կառավարութիւնը։ Ժողովուրդն ինքն է հրատարակում օրէնքներն ու ինքն է կառավարում երկիրը։ Օրէնքներն հրատարակւում են ժողովրդի անունից և ժողովրդի անունով էլ կառավարւում է երկիրը։ Այս ձևի կառավարութեան մէջ երկրում գոյութիւն ունեցող օրէնսդիր ու վարչական բոլոր իշխանութիւնները կատարում են միայն և միմիայն ժողովրդի կամքը, գործում են նրա լիազօրութեամբ։

Բացի ռամկավարութիւնից, որ գոյութիւն



ունի հասարակապետութիւնների մէջ, ռամկավարութիւնը գործադրւում է և կրճատուած, բաժանուած ձևով։ Ռամկավարութեան այս ձևը գործադրւում է սահմանադրական անուանուած պետութիւնների, սահմանադրական միապետութիւնների մէջ։

Սահմանադրական միապետութիւնների մէջ ժողովուրդն իր բարձրագոյն իշխանութիւնը բաժանում է միապետի հետ (կայսեր, թագաւորի, իշխանի)։ Սահմանադրական պետութիւնների մէջ բարձրագոյն վարչութիւնը կազմուած է երկու իշխանութիւնից՝ միապետից (կայսրից, թագաւորից) և ժողովրդական ներկայացուցիչներից։ Այդ երկուսը միասին կազմում են պետութեան բարձրագոյն իշխանութիւն։ Մէկն առանց միւսի բարձրագոյն իշխանութեան իրաւունքներ չունի։ Ահա դրա մէջն է սահմանադրական միապետութիւնների ռամկավարական սկզբունքն ու խոր նշանակութիւնը։

Սովորաբար իւրաքանչիւր օրէնք, ակտ սահմանադրական պետութիւնների մէջ, այն ժամանակ է միայն ոյժ ստանում ու պարտադիր դառնում ժողովրդի համար, երբ հաստատւում է երկու իշխանութիւնների կողմից եւ, այսինքն և կայսեր և ժողովրդի ներկայացուցիչների կողմից։ Ոչ միապետն իր կողմից կարող է առանց ժողո-

վրդի ներկայացուցիչների օրէնք հրատարակել, որ պարտադիր լինի ժողովրդի համար և ոչ էլ ժողովրդական ներկայացուցիչներն առանց միապետի (թագաւորի)։

Սահմանադրական միապետութիւնների մէջ մի իշխանութիւն ժողովրդական ներկայացուցիչներն ունեն, մի իշխանութիւն — միապետը։ Ժողովրդական ներկայացուցիչներն իրանց իշխանութիւնն ստանում են ժողովրդից և գործում են ժողովրդի կամքի ու տուած լիազօրութեան համաձայն։

Սահմանադրական միապետութիւնների մէջ գոյութիւն ունի սահմանադրութիւն, այսինքն երկրի հիմնական օրէնքների հաւաքածու, որ պարտադիր է բոլորի համար։

Եւ ահա այդ սահմանադրութեան շնորհիւ երկրի մէջ ամեն ինչ կատարւում է օրէնքի համաձայն ու կառավարութեան ոչ մի ապօրինի վարմունք չէ մնում անպատիժ։ Սահմանադրութեան անշեղ գործադրութեանն աչալուրջ հետեւում են ժողովրդական ներկայացուցիչները և իւրաքանչիւր գանգատուի առանց բացառութեան, թէկուզ լինի նա միապետական վարչութեան անդամներից, ենթարկւում են օրինական պատասխանատուութեան։

Սահմանադրական միապետութիւնների մէջ



էլ ժողովրդի մասնակցութիւնն երկրի կառավարութեան գործում տարբեր է — մի տեղ մեծ է, մի այլ տեղ փոքր։

---

## ՔԱՂՒԱԾ. ՕՍՄ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԻՑ

Յօդ. 8. — Օսմանեան կայսրութեան բոլոր հպատակներն առանց խտրութեան կկոչւին Օսմանցի, ինչ էլ որ լինի նրանց դաւանած կրօնը։

Օսմանցու հանգամանքը կստացւի կամ կջընջւի Օրէնքի որոշած պարագաների համեմատ։

Յօդ. 9. — Բոլոր Օսմանցիները կվայելեն անհատական ազատութիւն, այն պայմանով, որ վնաս չհասցնեն ուրիշների ազատութեան։

Յօդ. 10. — Բացարձակապէս անխախտելի է անհատական ազատութիւնը։ Ոչ ոք, որևէ պատրւակով, օրէնքի որոշած պարագաներից ու սահմանած ձևերից դուրս որևէ պատիժ չպիտի կրէ։

Յօդ. 11. — Պետութեան կրօնը Իսլամութիւնն է։ Պետութիւնը պահպանելով հանդերձ այս սկզբունքը, կպաշտպանէ Կայսրութեան մէջ ճանաչուած բոլոր կրօնների ազատ կիրառութիւնը և հաստատ կպահէ զանազան հասարակութիւններին շնորհուած կրօնական առանձնաշնորհումները այն պայմանով, որ վնաս չհասնի բարեկարգութեան և բարի վարքին։

Յօդ. 12.—Մամուլն ազատ է օրէնքի գծած սահմանների մէջ։

Յօդ. 13.—Օսմանցիները կարող են առևտրական, արհեստական երկրագործական ընկերութիւններ կազմել օրէնքի և կանոնադրութիւնների որոշած սահմանների մէջ։

Յօդ. 14.—Օսմանեան ազգութեան վերաբերեալ մէկ կամ քանի մի անձեր իրաւունք ունին խնդրագիր մատուցանել ձեռնհաս իշխանութիւններին՝ ի վնաս իրանց կամ հանրային շահին գործուած օրինազանցութիւնների և կանոնազանցութիւնների համար. կարող են նոյնպէս բողոքի ձեւով ստորագրուած խնդրագիր մատուցանել Օսմանեան Ընդհանուր ժողովին՝ գանգատուելու համար պետութեան պաշտօնեաների ընթացքին։

Յօդ. 15.—Ուսումն ազատ է։ Ամեն Օսմանցի կարող է հասարակական կամ մասնաւոր ուսումնարան բանալ և օրէնքի համաձայն վարել։

Յօդ. 16.—Բոլոր վարժարանները Պետութեան հսկողութեան տակ են։ Բոլոր Օսմանցիներին տրուած ուսումը կանոնաւորելու և միացնելու միջոցները պէտք է լինեն, բայց զանազան հասարակութիւնների կրօնական ուսմանը չպէտք է ձեռք զարնուի։

Յօդ. 17.—Բոլոր Օսմանցիները հաւասար են օրէնքի առջև։ Երկրի հանդէպ նրանք միևնոյն իրաւունքներն ու պարտականութիւններն ունին՝



բացի կրօնի և դաւանանքի վերաբերեալ պարտագաներից։

Յօդ. 18.—Պետութեան պաշտօնեաների մէջ ծառայելու համար Օսմանեան հպատակները պիտի գիտենան պետութեան պաշտօնական լեզուն. Թուրքերէնը։

Յօդ. 19.—Բոլոր Օսմանցիները կընդունուին պաշտօնների մէջ իրենց ընդունակութեան, արժանիքին ու յաջողականութիւններին համեմատ։

Յօդ. 20—Յատուկ օրէնքի տրամադրութեան համեմատ, տուրքի բաշխումն ու գանձումը կկատարուի համաձայն իւրաքանչիւր անհատի կարողութեան։

Յօդ. 21.—Ըստ օրինի ամեն մարդու սեփականութիւնը անձեռնմխելի է։

Կարելի է գրաւել անհատական սեփականութիւնը միայն այն ժամանակ, երբ հանրային շահը կը պահանջէ, պայմանով սակայն, որ իրական արժէքը կանխիկ վճարուի։

Յօդ. 22.—Օսմանեան երկրների մէջ անձեռնմխելի է ամեն մարդու բնակարանը։ Օրէնքի որոշած պարագաներից դուրս իշխանութիւնը իրաւունք չունի բռնութեամբ մտնել մէկի տունը։

Յօդ. 23.—Դատավարութեան համար հաստատուելիք օրէնքի համեմատ, երբէք կարելի չէ ստիպել մէկին, որ իր վերաբերած և ձեռնհաս

դատարանից զատ գնայ մի ուրիշ ատեան։

Յօդ. 24.—Գոյքերի գրաւումը, տարապարհակ աշխատանքն ու տուգանքը արգելուած են։ Սակայն պատերազմի ժամանակ օրինականապէս կատարուած հանգանակութիւններն ու այլ պարտագանները բացառութիւն են։

Յօդ. 25.—Առանց հիմնուած լինելու որևէ օրէնքի վրայ, չի կարելի մէկից փող առնել տուրքի կամ ուրիշ բանի անունով։

Յօդ. 26.—Չարչարանքը և ուրիշ ամեն կարգի տանջանքները բացարձակապէս արգելուած են։

Սահմանադրութիւնը պարունակում է նաև մի քանի այլ գլուխներ, 1—7 յօդուածները վերաբերում են Սուլթանի անձին և իշխանութեան, 27—38 Նախարարական կազմին, 39—41-ը Հասարակական պաշտօնեաների գործունէութեանը, 52—59-ը Ընդհանուր ժողովի իրաւասութեանը, 54—64-ը Ծերակոյտի (սենատի) կազմն ու իրաւունքները, 65—80-ը պատգամաւորական ժողովի ընտրութիւնը և իրաւասութիւնը, 81—91 Դատական իշխանութեան մասին, 92—95-ը Բարձրագոյն ատեանը, 96—107-ը Պետական ել և մուտքի կարգաւորումը, 108—112-ը Գաւառական վարչութիւնների բարեփոխութեան մասին, 113—119 Զանազան տրամադրութիւններ, տեղի ունեցող արտակարգ դրութիւնների մասին։



## ՏԱՃԿԱՀԱՅՈՑ

## ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Կ. Պօլսի պատրիարքութիւնը հաստատուելուց ի վեր՝ տաճկահայոց պատրիարքութիւնը՝ միապետական էր, կենդրոնական էր։

Պատրիարքները՝ միահեծան տէր ազգային իշխանութեան, իբրև միջնորդ՝ ազգի և տէրութեան մէջ։

Պատրիարքների այդ միապետական դրութիւնը՝ ժամանակի հարուստ ամիրաները, սկսեցին հակակշռել, այնպէս որ ժամանակ եղաւ, որ ամիրաներն սկսեցին պատրիարքարան իշխանութիւնը գործնականապէս վարել։

Ով որ պաշտօնի վրայ գտնւող եպարքոսի սառաֆն էր, պատրիարքական գահանակը՝ այդ սարաֆ-ամիրայի ձեռքն էր, որ քմածին տնօրինում էր ազգի գործերը։

Այս կառավարութիւնը իշարը գործադրութիւնը, այնչափ ծայրահեղութեան հասաւ, որ 1840 Թ. ժամանակները խորհող այզգայինները, ինչպէս եաղըճի Պօղոս աղան (Օտեանի հայրը), Կրճիկեան Յակոբ էֆէնտին և Տիվիթեան Յակոբ էֆէնտին, գաղտնի սկսեցին մի սահմանադրութիւն ծրագրել։

Նոյն Թւականին ժողովրդի արհեստաւոր մաս-

ալ սկսեց խլրտիլ: Ժողովրդական ցույցեր եղան Բ. Դռան առաջ՝ ընդդէմ ամիրաների բռնապետութեան: Իսկիւտարի ճեմարանի բացման և փակման ու քմածին յանձնաժման խնդիրն պատրւակելով: Այս միջոցին էր, որ ժողովրդեան առաջնորդ գլխաւոր դրօշակակիրն՝ Մէյխանէճի Իսկէնտէրն և ուրիշները աքսորւեցին հեռու և մօտաւոր քաղաքներ՝ ազդեցիկ ամիրաների թելադրութեամբ:

Վերջապէս Բ. Դուռը ժողովրդի ձայնը լսեց և ազգային առանձին մի վարչութիւն հաստատեց, կէսը ամիրայական և կէսը էսնաֆներից՝ խառն կազմած աշխարհական մի ժողով, որոնց ամենը 20 հոգուց կը բաղկանային: Յետոյ հաստատւեցին գերագոյն և հոգևոր ժողով սուած մարմինները: Գերագոյն ժողովը՝ էսնաֆ և ամիրայ խառն՝ 20 հոգուց բաղկացած, և հոգևոր ժողովն՝ 14 եկեղեցականներից: Սրանց գործադիր գլուխ պատրիարքի մօտ լողոժէթ անունով մէկը, որ Կրճիկեան Յակոբ էֆէնտին էր: Այս կազմակերպումից յետոյ էլ ամիրաները չկարողացան մարսել ժողովրդեան հաւասար կենալն ազգի առջև, որովհետև պատրիարքարանի նիւթական պէտքերը ամիրաներն էին հոգում:

Ժամանակակից պատրիարքներն՝ այդ ժամանակներում միշտ երկու սրերի մէջ տեղն էին



մնում: Եթէ դահակալող պատրիարքը՝ ամիրաների կողմը բռնէր, ժողովուրդը չէր սիրէ, և եթէ պատրիարքը ժողովրդեան կողմը տանէր, ամիրաները չէին տանում:

Ազգն՝ ամիրաների սոյն բացարձակ դիկտատորութիւններից ազատւելու համար միջոցներ չմնաց, որ չը փորձէր:

1854-ին լոկ կերպով սկսեց մարմնանալ սահմանադրութիւնը, հանգուցեալ Պալեան Նիկողոսի նախաձեռնութեամբ և տօքթ. Ռուսինեանի, Օտեան Գրիգորի, Զօրայեան Նիկողայոսի և ուրիշների խորհրդակցութեամբ:

Լրագրութիւնը նոր ծագած էր, և ազդեցիկ դեր ունէր ազգի մէջ: Ամեն օր առաջնորդող յօդւածներով լուսաբանեցին ժողովուրդը:

Վերջապէս 1860 թ. մայիսի 24-ին նախ ազգային սահմանադրութիւնը հաստատւեցաւ, և ապա Ադրիանուպօլսեցի Սարգիս եպիսկոպոսը պատրիարք ընտրւեցաւ: Հաստատւած սահմանադրութիւնը ազգովին էր, տէրութիւնից չէր: Ամիրաների բեկորները դեռ խլրտում էին:

Ամիրաներին հակակշռելու համար, ժողովրդական անկախ և մի զօրաւոր մարմին էր հարկաւոր, որ Գործադիր իշխանութեան և Ընդհանուր ժողովի պետը: Այդ պետն՝ ընտրւեցաւ տօք. Սէրվիչէն էֆէնտին, որ իր ճարտարութեան հա-

մար՝ այն ժամանակ լրագրների մէջ հայոց Մէթէրնիխ համարուեց։

Սահմանադրութեամբ՝ հոգևոր իշխանութիւնը նուաստացած էր, պատրիարքական իշխանութիւնը—որ կայսերական պերաթով մինչև իսկ ուզածն աքսորելու արտօնութիւն էր վայելում—սանձահարուեց ազգի ընտրած ժողովականների կողմից։

Այս միջոցին Երուսաղէմի Յովհաննէս պատրիարքը վախճանուեց, և երբ պատրիարքական նոր ընտրութիւն պիտի կատարուէր, ներսի-դուրսի, այսինքն միաբանութիւնից, թէ դրսից պատրիարք ընտրելու հարցն առաջ եկաւ և ազգային ժողովը երկպառակեցաւ և սահմանադրութիւնը տապալեց ամիրաների կողմը յարող ազգայինների ոմանց մատնութեամբ։ Եւ որովհետև Բ. Դուռը վաւերացրած չէր սահմանադրութիւնը, իսկոյն դադարեցրեց այն, և ազգի երեսփոխանութեան կողմից ընտրուած Գործադիր իշխանութիւնը ցրուեց, և Բ. Դուռը իր կողմից՝ եկեղեցականներից և աշխարհականներից բաղկացած առժամանակեայ մի Խառն ժողով հաստատեց եպարքոսական հրամանագրով։

Ժողովուրդը գլխաւորապէս երկուսի բաժանուեցաւ։ Սահմանադրութիւնը ուզող և չուզող։ Ուզողներն՝ լուսաւոր էին, չուզողները՝ խաւար։



Արփիար Արփիարեան

(Տես երես 116)

«ՇԻՐԱԿ» 1909 Թ.

Այս խառնակութեան մէջ՝ Սարգիս պատրիարքը ժողովրդական ցոյցերով հրաժարւեց։ Նիկոդիմէիոյ առաջնորդ Ստեփան եպիսկոպոսը պատրիարքական Տեղապահ ընտրւեց։

Հակառակ կուսակցութիւններն հանդարտ չէին։

Ամեն օր՝ նորանոր ժողովրդական յայտարարութիւններ էին ցրւում։

Ժողովրդի մեծ մասը՝ այնչափ սէր և հաւատ ունէր սահմանադրութեան վրայ, որ տարեդարձի օրը սահմանեց մայիսի 24-ին, և առաջին անգամ 1861 մայիսի 24, յատուկ շոգենաւներով— զարդարւած դափնիներով և գոյնզգոյն դրօշակներով—նմանը չտեսնւած հոծ թափորով առաջնորդւեց դէպի Պէյկոզ՝ Հիւնքեար-իսկէլէսիի ընդարձակ և գեղածիծաղ դաշտը։

Ոգևորւած ժողովուրդը նկատելով որ սահմանադրութեան հաստատութեան վերադարձը՝ Բ. Դռնէն ուշանում էր, ծայրայեղութեան դիմեց, և խուժեց դէպի պատրիարքարան, և պաշտօնեաներին բռնելով դուրս վռնդեց և պատրիարքարանի դռներն կողպելով, բանալին տարան Բ. Դուռը հայարաւոր ժողովրդեան պատգամաւորութեամբ։

Վերջապէս, 1863 թ. մարտի 17-ին կայսերական թուղրայով վաւերացած՝ ազգային սահմանադրութիւնը վերադարձաւ պատրիարքարան։

Իզմիրի Պօղոս Թագթագեան եպիսկոպոսը պատրիարք ընտրւեց, և եկաւ մայրաքաղաքը և բազմեց իւր պատրիարքական աթոռը և սահմանադրական ուխտի հանդիսով կատարեց Մայր եկեղեցու մէջ։

Մինչդեռ ազգը ըստ սահմանադրութեան, պարտաւորւում էր իր իրաւունքների գործադրութեան հետ, նաև պարտքերի վճարումն կատարել, բայց շատ անգամ զլանում էր։ Եւ ազգային ժողովից ընտրւած ժողովականները և երեսփոխանները գումարման համար իրենց եղած պատրիարքական հրաւէրներին ներկայութեամբ չէին պատասխանում։

Պատրիարքը յուսահատւած իւր խորհրդակիցներով Բ. Դրան է դիմում, և 1866 մարտի 20-ին պետական մի հարւած է տալիս սահմանադրութեանը, պաշտօնական յատուկ հրամանագրով, որով և սահմանադրութիւնը դադարում է իսկոյն։

Բ. Դուռը դարձեալ միջամտում է, և իր կողմից եկեղեցականներից և աշխարհականներից կազմած Գործադիր մի մարմին է ընտրում, մինչև ցնոր տնօրէնութիւն։

Խրիմեան սրբազանի օրով, 1869-ին Օտեան Գրիգոր էֆէնտիի բարեխօսութեամբ դարձեալ վերադարձւում է սահմանադրութիւնը՝ ազգին։

Խրիմեան սրբազան՝ սահմանադրութեան



տրամադրութեան համաձայն ընտրւեց, բայց սահմանադրութեան մէջ գծւած բանաձևի համեմատ չուզեց երդւել, այլ սահմանադրութեան ոգոյն վերայ երդւեց։

1872-ին Ներսէս պատրիարքը՝ սահմանադրութեան մէկ քանի մասերը բարեփոխել տալով՝ ընդունեց պատրիարքութիւնը։

Ռուսինեան էֆէնտին՝ իւր առանձին խմբագրութեամբ և Ներսէս պատրիարքի յանձնարարութեամբ ազգային ներքին մի կանոնադրութիւն խմբագրեց 1874-ին, որ թէև ինչ ինչ յօդւածներով սահմանադրութեան տրամադրութեան հակառակում էր, բայց իրար չէին վանում։ Ուստի փորձի համար առանց քննադատութեան՝ միաձայն հաւանութեամբ ընդունւեց և վաւերացւեց ազգային ժողովի կողմից, որ մինչև այժմ գործ է դրւում, և սակայն կառավարութեան կողմից դեռ վաւերացրած չէ։

1880-ին Ներսէս պատրիարքի առաջնորդութեամբ պաշտօնէական դրութիւնը հաստատւեց Վարչութեան մէջ՝ 7 անդամներից բաղկացած, իւրաքանչիւրի համար բաժանւած գործերն՝ իրենց անհատական պատասխանատւութեան տակ, և ամենքը մէկից հաւաքաբար առ ազգն պատասխանատու։

Այդ պաշտօնական դրութիւնը՝ մի տեսակ

դիկտատորութիւն էր։ Այդ դրութեամբ պատրիարքը մի վարչապետ պիտի ընտրէր, և այդ պետըն՝ իր խորհրդական ընկերները, ցոր օրինակ յարաբերութեանց խորհրդական, կրթական խորհրդական, դատական խորհրդական, տնտեսական խորհրդական, ևայլն։

Երկու տարուայ փորձից յետոյ, քանդեցին այդ պաշտօնական դրութիւնը, և դարձեալ սահմանադրութեանը վերադարձան։

Սահմանադրութեան վերաքննութեան գործը Պօղոս Խըլմեան, Ներսէս և Յարութիւն պատրիարքների օրով օրակարգի խնդիր էր, բայց մինչև այժմ խնդիրների մէջ անլուծանելի մի առեղծուած էր դարձած։

Սակայն Օսմանեան Սահմանադրութեամբ վերջապէս հնարաւոր կլինի վերահաստատել աւելի լայն հիմունքների վրայ Տաճկայոց ազգային սահմանադրութիւնը։

Գրագէտ



# XIII. ԳԻՏԱԿԱՆ

## ՀԻՊՆՈՏԻԶՄ

Հիպնոտիզմը գիտութեան հրաշալիքներից մինը կարելի է համարել։ Դարիս մէջ հիպնոտիզմի երևոյթները այնքան հետաքրքրական և զարմանալի են, որ գիտնական աշխարհի ուշադրութեան առարկայ են դարձել այսօր։ Առաջին անգամ 1841-ին դօկտոր Պրիտ Մանչեստրում գտաւ հիպնոտիզմը։ Կենդանային մագնիսականութեան երևոյթը, որ 1840-ին այնքան մեծ յեղափոխութիւններ առաջ բերեց Փարիզի բժշկական ճեմարանում, մասամբ ենթարկւեցաւ հիպնոտիզմի երևմամբ։ 1842-ին դօկտ. Պրէտ իր գիւտը լուսաբանելու համար կարևոր մի գիրք հրատարակեց, որի յայտնած դէպքերը մեծ տպաւորութիւն առաջ բերին բժշկականութեան մէջ. մագնիսագէտները շտապեցին փորձով ապացուցել Մանչէստրեցի վիրաբոյժի գիւտերը։

Հիպնոտիզմը, ասում են Ճարլ Ռաշէն և Լիթրէն, քնի այն վիճակն է, որին ենթարկում է դօկտ. Պրէտ իր յաճախորդներին հետևեալ եղանակով. վերցնում է իր բթամատի և ցուցամատի մէջ մի փայլուն առարկայ, օրինակի համար արծաթեայ մի կոճակ և բռնելով այն մի որոշ հե-

ռաւորութեան վերայ փորձին ենթարկւած մարդու աչքերից, հրամայում է նրան, որ շարունակաբար դիտէ առարկան: Բիբերը սկզբից կըծկւում են և ապա բաւականին ընդարձակւելուց յետոյ թմրում են ու արտևանունքները մի տեսակ թրթռմամբ անզգայաբար փակւում են: 10—15 րոպէից յետոյ, եթէ հիպնոտիզմի ենթարկւածի թևերից կամ սրունքներից բռնեն, պէտք է տեսնեն, որ նա չի կարող սթափւել, այլ փափագում է ննջել ամենայն քաղցրութեամբ թմրած անդամներով:

Այս օրինակ բազմաթիւ փորձերը կարող են նաև գործածւել այլ եղանակներով, որոնցով տեսնւած է, թէ հիպնոտիզմը միևնոյն սաստկութեամբ և երևոյթներով տեղի չէ ունենում ամեն արարածների վերայ և կանայք աւելի ենթակայ են այս բնախօսական վիճակին: Օրինակները բազմաթիւ են. դօկտ. Պէրինօ յաջողութիւն ունեցաւ մի վիրաւորեալի գլուխը կտրել հիպնոտիզմով թմրեցնելով նրան: 1852-ին անգլիացի մի վիրաբոյժ մի կարևոր գործ հրատարակեց հետևեալ վերնագրով «Մագնիսական և հիպնոտիզմը բժշկական ու վիրաբուժական արւեստների մէջ»: Այս գիտական տեսը մեծ յեղափոխութիւն առաջ բերեց և մի նոր հորիզոն բացեց գիտական աշխարհի առաջ ապացուցանելով, թէ վիրաբուժական գոր-



ծողութիւնները այնուհետև պէտք է հեշտանային ի շնորհս հիպնոտիզմի: Հնդկաստանում հեղինակ վիրաբոյժը 200 գործողութիւններ կատարեց հնդիկների վերայ մագնիսացնելով նրանց հետևեալ եղանակով՝ վիրաւորեալին պարկեցնում է բաւական ցած անկողնու վերայ մի մութ սենեակում, սևամորթ մի ծառայ ոտքի վրայ կանգնած անկողնու ծայրին, ծռելով դէմքը հիւանդի դէմքի րայ, մի քառորդ կամ կէս ժամ ձեռքի շարժումներով շօշափելով վիրաւորեալին ենթարկում էր թմրութեան և վիրաբոյժը կարողանում էր այնուհետև շարունակել գործողութիւնը:

Աթոս լերան վանականներն անգամ հիպնոտիզմի էին դիմում մի ժամանակ, դիտելով ուղղակի հիւանդի պորտը: Հնդկաստանի փաքիրները թմրութեան էին ենթարկում իրենց մի քառորդ ժամ շարունակ իրենց քթի ծայրը դիտելով: Այդ որոշեալ ժամանակամիջոցից յետոյ ասում են թէ կապոյտ բոց էր երևում իրենց քթի ծայրին և հնդիկ փաքիրները կարողանում էին իրենց անօրինակ կացութեամբ բազմութեան յարգանքն և հիացմունքը վայելել:

Ականատեսները պատմում են, թէ հանրային տօներին և վաճառանոցներում տասն և երկու տարբներ նստում են շրջանաձև գետնի վրայ և լարւած ուշադրութեամբ լսում են իրենց շըր-

ջապատող հրաժիշտների արարական թմրուկի ձայները։ Արաբները սկսում են գործ ածել գլխի և կրծքի շարժումներ հրաժշտութեան համեմատ, որով սկսում են շատ շուտ թմրել և քրտնաթոր դէմքով, կարմիր և արտասուալից աչքերով և թմրած ուղեղով փրփուր են դուրս բերում իրենց բերաններից, և այդ վիճակի մէջ այդ տարօրինակ մարդիկ ծակում են իրենց այտը հրաշէկ երկաթով և սուր դէնքով և հալած ապակի են կուլ տալիս առանց արտայայտելու վշտի և ցաւի ամենափոքր նշան անգամ։

1860-ի փետրուար ամսին Գահիրէից դոկտ. Ռօսսի մի նամակ է ուղղել Փարիզի բժշկական օրագրին, որից տեսնում է այն տարբեր եղանակները, որոնց դիմում են Եգիպտոսի վհուկները անզգայ քնի մէջ մտնելու համար։ «Մանդէպ կոչուած ցեղի արաբները վերցնում են փայլակէ ամբողջովին սպիտակ մի պնակ, պնակի մէջ տեղը թանաքով գծում են իրարու մէջ անցած խաչաձև երկու եռանկիւններ, հաւանականաբար կենտրոնացնելու ակնարկը սահմանաւոր մի կէտի վրայ, յետոյ պնակի մակերեսի փայլը աւելացնելու համար մի փոքր իւղ են թափում մէջը։ Ընդհանրապէս իրենց փորձերի համար ընտրում են մի երիտասարդ և հաստատել են տալիս նրա ակնարկը խաչաձև կրկնակի եռանկեան կենտրոնի



վերայ։ Ենթական սկսում է տեսնել մի սև կէտ պնակի մէջ տեղ, մի քանի վայրկեանից յետոյ այդ սև կէտը մեծանում է, փոխում է իր ձևը և տարբեր երևոյթներ է ստանում, որով փորձի ենթարկուողը թմրում է։

Երբ այսքան հետաքրքիր և հիանալի օրինակներ և իրողութիւններ ներկայանում են մեզ, կարող ենք մի գաղափար ստանալ հիպնոտիզմի վերայ, և արժէր, որ գիտութիւնը իր ուսումնասիրութեան առարկայ դարձնէ հիպնոտիզմը գիթեան հրաշալիքների թիւը բազմապատկելու համար։

---

## ԵՐԿՐԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Երկրաբանութեան գիտութիւնը հիմնական ապացոյցներով հաստատում է, որ երկիրս իր նախնական վիճակի մէջ բորբոքուած հրեղէն հեղուկ մի գունդ էր, որի բաղադրիչ մասերը սաստիկ ջերմութիւնից շոգիանալով թանձր մթնոլորտ էր ձևացրել իր շուրջը։

Այս հրեղէն հեղուկ գունդը իր առանցքի վերայ և արեգական շուրջը պտտելով և թաւալելով տիեզերքի մէջ իր շրջանի համար, հետզհետէ ցրելով իր մակերեսի ջերմութիւնը և այսպիսով գնդի արտաքին մասերը աստիճանաբար

պնդանալով դարձան հող, ժայռ, այլևայլ հանքային նիւթեր: Թւում է, որ երկրիս այս կերպով կազմւած արտաքին կեղևի ներքին մասն էլ՝ գնալով հաստանում է կեղևի մօտ հեղուկ մասի հետզհետէ սառչելովը: Լապլաս, նշանաւոր աստղաբաշխը, մանրամասն հաշիւներով ցոյց տւեց որ երկրիս միջի բարեխառնութիւնը Հիպպարքոսի ժամանակ սկսած $^1/_{10}$ աստիճան տարբերութիւն անգամ չէ արել: Փուրրիէ, նշանաւոր երկրաչափը ցոյց տւեց, որ աշխարհս եթէ շատ հազարաւոր դարեր էլ տևէ իր հալուցքի սառչելը, մակերեսի ջերմութեանը $^1/_{30}$ աստիճանից հնարաւոր չէ պակսել և թէ 30,000 տարի պէտք է, որ երկրիս ներքին ջերմութիւնը 15 մէտր ներքև իջնի, այսինքն $^1/_2$ մէտր իւրաքանչիւր 1000 տարւայ ընթացքում:

Երկիրը սկզբից հեղուկ վիճակի մէջ լինելու բազմաթիւ ապացոյցների մէջ, կարող է առաջինը համարւել նրա կլոր, իսկ բևեռների կողմերը՝ տափակ լինելը: Փորձով տեսնում ենք, որ մի հալւած մարմին իր առանցքի վերայ պտտւած ժամանակ կլոր ձև է ստանում, և որովհետև սաստիկ ուժեղ կենտրոնախոյս զօրութիւնը բևեռներից հաւասար հեռաւորութեամբ կենտրոնի և կամ որ նոյնն է ասել հասարակածի վերայ է, բնականաբար այն կողմերը հաւասարապէս աւելի պէտք



ուռչեն, քան բևեռների կողմերը: Ահա այսպէս բնագիտական և աստղաբաշխական հաշիւներով հաստատւում է երկրիս գնդաձև լինելը՝ հասարակածային կողմերի ուռոյցներով ու բևեռային կողմերի տափակութիւնով. ուրեմն երկիրը սկզբում հեղուկ էր, սակայն իր պտտւելու և կենդրոնախոյս զօրութեան շնորհիւ կլոր դիրք ըստացաւ և այդ դրութեամբ էլ սառչեց:

Երկրիս սկզբից հալւած նիւթ լինելու երկրորդ ապացոյցն է կենտրոնական ջերմութիւն ասւածը. որովհետև ջերմութիւնը ցոյց է տալիս, որ եղանակների բարեխառնութեան փոփոխութիւնը և արեգակի ջերմութիւնը երկրիս երեսից միայն մի քիչ տեղ ներս կարող են թափանցել, ուստի մի փոքր խոր իջնելով տեսնում ենք. որ այնտեղի ջերմութիւնը բոլորովին անփոփոխ է ու ամառ ձմեռ երկրիս մակերեսի միջին բարեխառնութեան հետ հաւասար: Բայց աւելի ներքև գնալով այս կարգը փոխւում է, այսինքն խորութեան համեմատութեամբ ջերմութիւնն էլ հետզհետէ աւելանում է, այնպէս որ մինչև հիմա եղած փորձերից տեսնւած է, որ իւրաքանչիւր 33 մէտր խորութեան մէջ ջերմութիւնը մի աստիճան աւելանում է: Այստեղից հետևում է որ 3000 մէտրը կայուն բարեխառնութիւնից ներքև 100 աստիճան ջերմութիւն կարող է լինել,—եռացրած

ջրի տաքութեան աստիճանին հաւասար։

Եւ եթէ ջերմութիւնը նոյն օրէնքով աւելանայ, 20,000 մէտր խորութեան մէջ 666 աստիճան ջերմութիւն պէտք է լինի, ուր գայլախազներն անգամ հալած պէտք է գտնուին, իսկ երկրիս կենտրոնի մօտ 6,366,000 մէտր խորութեան մէջ 200,000 աստիճան ջերմութիւն, որ մեր խելքից բարձր է. այնպիսի ջերմութիւն՝ որով ոչ մի մարմին չի կարող չհալվիլ և չցնդիլ։

Սրանից հետևում է, որ երկիրս սկզբում եռացող հեղանիւթ մի գունդ էր. յետոյ մակերեսի ջերմութիւնը ցրւելով՝ սառաւ այդ մասը և նուրբ կեղև կապեց, որի հաստութիւնը հազիւ 20,000 մէտր լինի, որ երկրիս շառաւիղի հետ համեմատելով որ 6,000,000 մէտր է՝ ոչինչ է համարւում, կամ աւելի ճիշտ է ասել, 1 մէտր շառաւիղ ունեցող գնդի վերայ 3 հազարերորդամետրը հաստութիւն, որ մեր սովորական երկրագնդի վերայի մի թերթ թղթի հաստութիւնը չի կազմում։

Կենտրոնական ջերմութիւն լինելը վաղուց ի վեր գիտէին մարդիկ, այժմեան երկրաբանները շատ գլխական փորձերով հաստատում են այս, ստորերկրեայ վայրերի և հանքերի ջերմութիւնից, որոնք նոյն իսկ ձմեռ ժամանակ այնչափ տաք են լինում, որ գործաւորները բոլորովին



մերկ են աշխատում։ Յայտնի է, որ այդ ջերմութիւնը արեգակի կամ երկրի մակերեսի ջերմութիւնը չէ, որովհետև եթէ այդպէս լինէր, պէտք էր որքան երկրիս երեսին մօտենայինք, այնքան աւելի ջերմութիւն զգայինք. ուրեմն այս ջերմութիւնը երկրիս կենտրոնիցն է։ Երկրաբանները այս աւելի ստուգելու համար, այլ և այլ հանքերի բարեխառնութիւնը միմեանց հետ համեմատեցին և տեսան՝ որ հանքը քանի խորն է, ջերմութիւնն էլ այնքան աւելի է։ Ամեն մարդ էլ փորձով տեսած է, որ չափաւոր խորութեամբ մի հոր փորելու ժամանակ գործաւորները քրտնում են։ Երկրիս կենտրոնական ջերմութեան ապացոյց են նաև հրաբուխները, երկրաշարժները, կղզիների բարձրանալը, ջերմուկները և այլն։

## ԳԻՍԱՒՈՐ ԱՍՏՂԵՐ

Գիսաւոր աստղերը արեգակի շուրջը ձւաձև կատարում են իրենց շրջանը, ոմանք կարճ և ոմանք շատ երկար ժամանակամիջոցով։ Թէպէտ սրանից շատ քչերը տեսնւում են հասարակ աչքով, սակայն թւով խիստ շատ են։ Նշանաւոր աստղաբաշխները հաւաստացնում են, թէ միայն մեր մոլորակային դրութեան ազդեցութեան ներքև եղող գիսաւոր աստղերի թիւը եօթը միլիոնի

է հասնում։ Քէփլէր աւելի առաջ գնալով ասում է, թէ նրանք ծովի ձկների չափ բազմաթիւ են։ Գիսաւոր աստղերը իրենց փայլունութիւնը արեգակի լոյսից ստանալով, շարժւում են ամենայն ուղղութեամբ իրենց երևոյթները փոփոխելով շարունակ։ Գիսաւորների գոյնը այնքան նուրբ և թափանցիկ է, որ նրա միջից հեշտութեամբ տեսնըւում են ուրիշ աստղեր։ Երբեմն ունենում են շատ տարապայման տարածութիւն, միևնոյն ժամանակ շարժւելով անասելի արագութեամբ. քիչ անգամ է տեսնւել որ երկու որոշ մարմինների բաժանւելին։

Դիտուած գիսաւոր աստղերի գլխաւորներից երեքը տեսնուած են 1680, 1811 և 1843 թւերին։ Աստղաբաշխների կարծիքով ամենից նշանաւորը 1811 թւին տեսնւեց, որ իր ընթացքը արեգակի շուրջը 3000 տարիների ընթացքումն է կարողանում կատարել։ Իր ընթացքի մէջ արեգակից ամենամօտ եղած կէտը 98,700,000 մղոն հեռու է, իսկ արեգակից ամենից շատ հեռաւոր եղած կէտը 40 քառիլիոն և 121 միլիոն մղոն է։ Այն գիսաւոր աստղը, որ տեսնւել է 1843-ին, շատ նշանաւոր համարւեց գիսի երկարութեամբ, որ 200,000,000 մղոնի չափ է հաշւած, սրա զունդը փոքըր լինելով մէկ ժամւան մէջ 1,317,600 մղոնի չափ է ընթանում արեգակի շուրջը։

Ա. Ե. Տ.



# XIV. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ԱՇԽԱՏԱՆՔ, ՄԱՀ ԵՒ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ

Հարաւային Ամերիկայի հնդիկների մէջ գոյութիւն ունի հետևեալ լեգենդան։

Սկզբում ասում են նրանք—Աստուած ստեղծեց մարդկանց այնպէս, որ կարիք չունէին աշխատելու, պէտք չունէին ոչ բնակարանի, ոչ հագուստի, ոչ կերակուրի, ապրում էին բոլորը մինչև հարիւր տարի և հիւանդութեան մասին բան չը գիտէին։

Անցաւ մի քանի ժամանակ և երբ Աստուած դիտեց, նկատեց թէ ինչպէս են ապրում մարդիկ. Նա տեսաւ, որ իրանց կեանքի վերայ ուրախանալու փոխարէն, նրանցից իւրաքանչիւրը իր մասին միայն հոգալով, կռւել են իրար հետ և այնպիսի կեանք են ստեղծել իրանց համար, որ ոչ միայն չեն ուրախանում, այլ և անիծում են այն։

Այն ժամանակ Աստուած ասաց.—այդ նրանից է, որ նրանք առանձին, բաժան-բաժան են ապրում, ամեն մէկը իր համար։

Եւ այդ բանը չլինելու համար, Աստուած այնպէս արաւ, որ մարդկանց համար անհնարին լինէր առանց աշխատանքի ապրելը. Նրանք սովից և ցրտից չտուժելու, չմեռնելու համար պէտք է

բնակարաններ շինէին, գետինը փորէին, հող վարէին, աճեցնէին և ժողովէին պտուղներ և հացահատիկներ։

—Աշխատանքը կմիացնի նրանց, մտածեց Աստուած. մի մարդ չի կարող և փայտ կտրել, և գերաններ կրել, և բնակարաններ շինել, մի մարդ չի կարող գործիքներ պատրաստել, սերմանել և ժողովել, և մանել, և հիւսել, և հագուստ կարել։ Նրանք անպատճառ կհասկանան, որ որքան նրանք համերաշխ և միաբան աշխատեն, աւելի գործ կանեն, աւելի լաւ կապրեն, և այդ կմիացնի նրանց։

Անցաւ մի քանի ժամանակ էլ և Աստուած դարձեալ եկաւ տեսնելու՝ թէ ինչպէս են ապրում մարդիկ։

Բայց մարդիկ աւելի վատ էին ապրում, քան առաջ, նրանք աշխատում էին միասին — (ուրիշ կերպ չէր կարելի), բայց ոչ ամենքեան միասին, այլ նրանք ամենքը բաժանուել էին փոքրիկ խմբերի, և իւրաքանչիւր խումբ աշխատում էր խլել միւսից նրա աշխատանքը, գործը, և նրանք բոլորը միմեանց խանգարում էին, իրանց ժամանակը և ոյժերը ծախսում, փչացնում էին պայքարի համար, և ամենքի համար վատ էր։

Տեսնելով, որ այդ էլ լաւ չէ, Աստուած վճռեց այնպէս անել, որ մարդիկ չիմանային իրենց



մահուան ժամը և կարողանային մեռնել ամեն րոպէ։ Եւ յայտնեց նրանց այդ մասին։

—Իմանալով, որ իւրաքանչիւրը նրանցից ամեն մի րոպէ կարող է մեռնել, — մտածում էր Աստուած, նրանք չեն չարանայ միմեանց վրայ, և վատութիւն անի միմեանց և չեն թունաւորի կեանքի այն ժամերը, որոնք նախորոշուած, նշանակուած են նրանց համար կեանքի մասին հոգալու նպատակով, կեանքի, որ ամեն րոպէ կարող է ընդհատուել։

Բայց այդպէս դուրս չեկաւ.

Երբ Աստուած վերադարձաւ տեսնելու համար, թէ ինչպէս են այժմ մարդիկ ապրում, նա տեսաւ, որ մարդկանց կեանքը չէ լաւացել, չէ բարւոքուել։

Միւսներից աւելի զօրեղ մարդիկ օգտուելով այն հանգամանքից, որ մարդիկ կարող են ամեն ժամանակ մեռնել, նուաճեցին իրանցից աւելի թոյլերին, սպանելով մի քանիսին, իսկ մնացածներին — մահ սպառնալով։ Եւ այնպիսի կեանք ստեղծուեց, որ մի մասը՝ ուժեղները և նրանց ժառանգները բնաւ չէին աշխատում և պարապութիւնից, պորտաբուծութիւնից տխրում էին։

Իսկ թոյլերը աշխատում էին ոյժից վեր և տխրում, տանջւում էին այն բանից, որ հանգիստ չունէին։ Եւ սրանք և նրանք վախենում էին ի-

րաբից և առում էին միմեանց։ Եւ մարդկանց կեանքը աւելի թշուառ դարձաւ։

Այդ տեսնելով, Աստուած գործը շտկելու համար որոշեց գործ դնել վերջին միջոցը. նա մարդկանց մէջ ուղարկեց ամեն տեսակ հիւանդութիւններ։ Աստուած մտածում էր, որ եթէ բոլոր մարդիկ հիւանդութիւններին ենթակայ լինեն, այն ժամանակ նրանք կհասկանան, որ առողջները պիտի ցաւին, կարեկցեն հիւանդներին և օգնեն նրանց այն պայմանով, որ երբ նրանք հիւանդ կլինեն, առողջները օգնեն նրանց։

Եւ դարձեալ Աստուած թողեց մարդկանց, բայց երբ վերադարձաւ տեսնելու, ինչպէս են նրանք այժմ ապրում, տեսաւ որ այն ժամանակից, երբ նրանք ենթարկւեցին հիւանդութեանց (հիւանդանալ սկսեցին), մարդկանց կեանքը աւելի վատթար է դարձել։

Այն իսկ հիւանդութիւնները, որոնք Աստծու կարծիքով, պէտք է միացնէին մարդկանց, աւելի ևս բաժանել, անջատել են նրանց։

Այն մարդիկ, որոնք ուժով ստիպում էին ուրիշներին իրանց համար աշխատել, ստիպում էին նրանց հիւանդութեան ժամանակ իրենց խընամել, ուստի իրանք բնաւ հոգս չէին տանում հիւանդների մասին։

Իսկ նրանք, որոնց զօրով ստիպում էին աշ-



խատել ուրիշների համար և խնամել հիւանդներին, այնքան տանջուած էին աշխատանքից, որ իրանք ժամանակ չունէին իրանց հիւանդներին խնամելու, և նրանք առանց օգնութեան էին թողնում նրանց։ Բայց որ հիւանդների տեսքը չը խանգարէր հարուստների բաւականութիւններին, նրանք հիւանդների համար այնպիսի տներ շինեցին, որ հիւանդները տառապում և սառում էին ցրտից՝ առանց նրանց ցաւակցող մարդկանց կարեկցութեան, վարձկան մարդկանց ձեռքերի վերայ, որոնք խնամում էին հիւանդներին ոչ միայն առանց կարեկցութեան, այլ զզւանքով։ Բացի այդ հիւանդութիւնների մեծ մասը մարդիկ վարակիչ ճանաչեցին և վախենալով վարակւելուց, ոչ միայն չէին մօտենում հիւանդներին, այլ և հեռու էին ման գալիս նրանցից անգամ, որոնք հիւանդների հետ որևէ յարաբերութիւն էին ունեցել։

Այն ժամանակ Աստուած ասաց ինքն իրան, եթէ այդ միջոցով էլ չի կարելի մարդկանց հասկացնել տալ, ինչի մէջ է նրանց երջանկութիւնը. ապա ուրեմն թող իրանք հասնեն նրան իրանց տառապանքներով և տանջանքներով։

Թարգ. Լ. Ն. Տոլստոյից

## ԵՐԱԶ

...Ես լալիս էի որպէս մի մանուկ.

—Ինչո՞ւ ես լալիս.

Դա մի մի ճերմակազգեստ թեւաւոր էակ էր, որ կանգնել էր իմ առաջ։

—Ի՞նչ ես ուզում, հարցրեց կրկին այդ էակը, ասա ես կկատարեմ քո ցանկութիւնը։

—Հեռացի՛ր, թշւառ. դու ծաղրում ես իմ արտասուքը... շատերն իմացան իմ լալու պատճառը, բայց չգտնւեց մէկը, որ կարողանար կատարել իմ ցանկութիւնը...

—Ի՞նչ ես ուզում, կրկնեց նա, ասա՛ ինձ, ինչո՞ւ ես լալիս։

Նրա դէմքի վեհութիւնը ոգեւորեց ինձ և ընկնելով նրա ոտները՝ խնդրեցին.

—Տար ինձ, աղաչում եմ, եթէ կարող ես մի այնպիսի տեղ, ուր հարուստ և աղքատ բառերը գոյութիւն չունենան, ուր հաց ու ջրի բաղադրութեան մէջ արիւն չկայ և ուր... և ուր մարդը մարդ է։

Մռայլւեց էակը...

—Հետևի՛ր ինձ, ասաց նա և բռնեց ձեռքս...

Սլանում էինք երկուսս միասին։ Մենք անցանք ամբողջ երկրագնդի վրայով, բայց ոչ մի տեղ կանգ չառանք։



—Ուրեմն չը կա՞յ երկրում իմ փնտռած տեղը — լացակումած հարցրի ես էակին։

Հետևի՛ր — եղաւ էակի պատասխանը.—և մենք սլացանք հեռո՛ւ և հեռո՛ւ, անցանք ամպերի միջով, երբեմն իջնում էինք ինձ անծանօթ տեղեր, բայց... ոչ մի տեղ չկար իմ փնտռածը։

Եւ մենք սլանում էինք շարունակ...

—Տե՛ս, ասաց ինձ խռովայոյզ և մռայլ էակը, տե՛ս, մենք այժմ գտնւում ենք անսահմանութեան մէջ. ես քեզ առաջնորդեցի ամեն տեղ քո երկրում և ոլորտների մէջ, բայց... քո փնտռածը դու ոչ մի տեղ չես գտնիլ... Պէտք է ստեղծել...

Ես դարձեալ մենակ էի։

..Եւ ես լալիս էի, որպէս մի մանուկ։

Փ. Վահրամ

## ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԾԱԳՈՒՄԸ

(Մուլ' ռասուլի'ից)

«Եղբա՛յր. դու աւելի բարձրահասակ ես, չե՞ս կարող, արդեօք, ինձ համար պոկել այն նուռը, որը սաղարթի և հրավառ ծաղիկների միջից ժպտում է ինձ բացած շուրթերով: Տես, նա ճեղքւել է հասունութիւնից և ինձ դուր գալու համար՝ կարմրացայտ վէրք է հասցրել իրան: Այդ նուռը ինձ պէտք է, իմ եղբայր: Դու բարձր ես ինձանից. ձեռքդ մեկնիր և պոկիր, որ ես կարողանամ ուտել:

Եւ եղբայրը արաւ, ինչ որ կարող էր, որ կրտսերը կարողանայ պտուղը ճաշակել:

Ապա մեծ եղբայրը գնաց դաշտ և տեսաւ մի լեռնային այծեամ, որը իր ձագին որոնելով՝ իջնում էր ձորակը:

— Չե՞ս տեսել դու իմ ձագը,—հարցրեց նա առիւծին.—դու ապրում ես հարթավայրում և քեզ լաւ յայտնի են դաշտային ճանապարհները. իսկ ինձ համար նրանք շատ ձանձրալի են, որովհետև իմ սմբակը երկուսի է բաժանւած:

—Թող քո ձագը,—հակաճառեց նրան առիւծը,—և մօտ արի, որ կարողանամ քեզ կուլ տալ:

Եւ առիւծը կատարեց իր ցանկութիւնը:

Այն ժամանակ մեծ եղայրը հարցրեց առիւծին.



Ինչի՞ դու կերար այծեամին, որ փնտռում էր իր ձագը:

—Դու լսեցի՞ր, ինչպէս նա գանգատւում էր իր սմբակների անյարմարութեան վրայ,—պատասխանեց առիւծը:

—Մի՞թէ ես արդարացի չվարւեցի՝ կուլ տալով նրան: Նայի՛ր իմ ճանկերին, որոնք «յարմարեցրած» են: Տես ինչպէս «յարմարեցրած» են իմ ատամները: Ահա, ինչի ես կերայ այծեամին:

Երիտասարդը մտածմունքի մէջ ընկաւ, ապա նայեց իր ձեռքերին, որոնք երկար և ուժեղ էին. նա՝ տեսնելով իր ձեռքերի հմտութիւնը՝ սկսեց հարկադրել իր կրտսեր եղբօրը, որ իրան ծառայէ:

Երբ նա նորից դիմեց նրան օգնութիւն խնդրելու, մեծ եղբայրը պատասխանեց.

—Նայի՛ր իմ ձեռքերին: Դու չէ՞իր ասում, որ քո ձեռքերը չեն կարողանում նռանը հասնել: Այս պատճառով ծառայի՛ր ինձ, թէ չէ, ես քեզ կուլ կտամ:

Այդ ժամանակից սկսած կրտսեր եղբայրը սկսեց ծառայել մեծին: Նա մեղաւոր չէր այդ գիւտի համար, որ մեծ եղբայրը պարտական էր առիւծին:

Եւ այդ բանը այդպէս էլ մնացել է մինչև այսօր:

Զ. Տ.-Դr.

# XV. ՌՏԼ. ԵՒ ՌՏԼ.Ք

## ՊՏՈՒՂՆԵՐՈՎ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

Բաւական ժամանակից ի վեր Եւրոպայի այլ և այլ երկրների՝ մանաւանդ Գերմանիայի և Զուիցերիայի մէջ՝ բացուած են խաղող ուտելու ախտաբուժական հաստատութիւններ։ Եւ իրաւի խաղողը՝ աղիքների և ստամոքսի խանգարումների. արեան պակասութեան, պալարախտի և ուրիշ հիւանդութիւնների դեղ է համարւում։ Այժմ բոլորովին նոր սովորութիւն է դարձել գրեթէ ամէն տեսակ պտուղի գործածութեամբ այլ և այլ տեսակ հիւանդութիւնների առաջն առնել։

Պտուղները ցնդողական եթերներ, մարսեցուցիչ և փափկեցուցիչ թթուկներ և թթուտներ պարունակելուց զատ, ունին սեփական համ ու հոտ՝ որոնք մարդկային խանգարուած գործարանների վրայ նպաստաւոր ազդեցութիւն ունեն՝ կղկղանքը լուծում, ներքին վնասակար հիւթերը շուտով արտաքսում և հիւսուածները նորոգում։ Եւ որովհետև յիշեալ եթերային նիւթերը մեծ մասամբ պտուղների կեղևի մէջ են գտնւում, հետևաբար չպէտք է կլպել եթէ չենք ուզում, որ նրանց զովացուցիչ և կազդուրիչ յատկութիւնները կորսուին։ Բացի դրանից պտուղը որպէսզի



բարեբեր ազդեցութիւն ունենայ, պէտք է հասուն լինի, և ոչ խակ կամ անցած կամ մանաւանդ փտած։

Վերոյիշեալ տեղեկութիւնների համեմատ՝ ելակը ամեն պտուղներից ընտրելագոյն ուտելիքն է, որին սքանչելի համի հետ ունի անուշ հոտ, որդեր ոչնչացնելու և յօդացաւը մեղմելու յատկութիւններ։ Վայրի ելակը աւելի գերադասելի է։

Մաղձային խառնուածքի տէր մարդկանց համար կարմիր հաղարջը ամենաօգտակար է, որովհետև մաղձը նւազեցնում է, երակների արեան յորդութիւնը չափաւորում է և զովացուցիչ է, իսկ սև տեսակը կազդուրիչ և գրգռիչ է։

Արքայամորն էլ հաղարջի յատկութիւններն ունենալուց ջոկ երկարատև որովայնի պնդութեան համար լուծիչ դեղ է և զովացուցիչ. սրա վայրի տեսակը, որին Մօր են ասում, նոյն պաշտօնն է կատարում։

Մեծքանակութեամբ կեռաս ուտելով արեանը նորոգութիւն և զօրութիւն է տրւում, և երիկամունքների գործունէութիւնը կանոնաւորւում։

Ծիրանը կազդուրիչ է և մարմնի աւելորդ և վնասակար նիւթերը մաքրում է։

Սալորը իբր մաքրողական՝ արդէն ամենին ծանօթ է։

Քաղցր և անուշահոտ դեղձը ստամոքսի համար սպեղանի է, իսկ շաքարախտ ունեցողների համար միակ և գերազանց ուտելիք պտուղը պէտք է լինի։

Ընկոյզն էլ մարսեցուցիչ է և զանազան տեսակ որդերը մարսողական գործարաններից ջնջում է, մորթի ժահրերը արտաքսում, որոնք ընդհանրապէս երեսի վրայ կարմիր պալարների ձևով են տեսնւում.

Նոյն իսկ սեխը, որի վրայ ժողովուրդը ընդհանրապէս վատ համարում ունի, ջրգողութիւնը առողջացնում է և գործարանների ու երակների վրդովմունքը խաղաղացնում։

Տանձը մարսեցուցիչ է և կարող բաւծ հացից աւելի ախորժելի և սնուցիչ է։

Խնձորը արագ և մնայուն ազդեցութիւն ունի անմարսողութեան, միզային փամփուշտի և երիկամունքների հիւանդութիւնների դէմ։

Նարինջը՝ կազդուրիչ և ամոքիչ դեղ է։

Լիմոնը՝ հակափուտ է և թանչը կամ փորհարութիւնը սեղմող և չափաւորող է։

Թուզը՝ մաքրողական է. արիւնը նորոգում է և զօրութիւն է տալիս, միտքը սրում և կուրծքը փափկեցնում։

Արմաւը մսի պէս սնուցիչ ուտելիք է։

Դամասկեան փխտակը (շամ մըշմըշը) ստն-



տուների կաթը շատացնում է։

Վերջապէս եթէ ուզում ենք առողջ կազմուածք ունենալ, պէտք է շատ պտուղ ուտել։

Ն. Պէրպէրեան

Աշխարհի մեծագոյն մատենադարանը.—Փարիզի ազգային մատենադարանն է, որ պարունակում է 40 մղոնի չափ դարակ, որոնց մէջ գտնուած են, 1,400,000-ից աւելի տպագրուած գիրք, 175,000 ձեռագիր, 300,000 աշխարհագրական քարտէս, 150,000 հին դրամ և շքադրամներ։

Մարդու ձեռքով շինուած աշխարհի մեծագոյն շէնքը.—Սրանից 4000 տարի առաջ հիմնուած Քէոփսի բուրգն է Գահիրէի մէջ։ 20,000 մարդ շարունակ աշխատելով հազիւ կարողացել են քսան տարուայ մէջ աւարտել այս հսկայ գործը և սրա համար գործածուած ահագին քարերը 700 մղոն հեռու Արաբիայից են բերուած։ Շինութեան ծախքը 3,625,000 ոսմ. ոսկի է։

Աշխարհի մեծագոյն արձանը.—Նիւ Եօրքի նաւահանգստի վրայ դրուած Բարդոլդի արձանն է. որ 1885-ին Ֆրանսիան Ամերիկային նուիրած է և որի ծախքը 80,000 ռուբլու կը հասնի։ Հիմքից մինչև դիցուհու գլխի վերայ բռնած ջահի բարձրութիւնն 151 ոտք է։ Դիցուհին ամ-

բողջովին պղնձից շինուած և կանգնած է 88 ոտք բարձր պատուանդանի վրայ: Իսկ բռնած ջահի մէջ՝ ուր ոլորապտոյտ սանդուղով կարելի է ելնել, 12 մարդ հանգիստ կերպով կարող են նստել: Հռոդոսի արձանն էլ նշանաւոր էր իր մեծութեամբ, որ Քրիստոսից 285 տարի առաջ վերջացած է Լէնդոսցի Կարէսի ձեռքով: Աւանդաբար յիշատակւում է այդ սոյն արձանի բարձրութիւնը 70 գրկաչափ էր, և իր երկու սրունքների միջից մեծամեծ նաւեր էին անցնում: Նոյնպէս յիշատակւում է, որ սոյն արձանի կործանումից յետոյ նրա բեկորները 1000 ուղտի բեռ է եղել:

**Աշխարհի բարձրագոյն մահարձանը.—** Ուաշինկթընի մէջ կանգնած է, ի յիշատակ Ջէօրջ Ուաշինկթընի, 2 ոտք հաստութեամբ 18,000 մարմարիոնի մեծ կտորներից շինուած: Ներքնակողմի գտնուած սանդուղով կարելի է շիրիմի ամէն կողմը շրջել:

**Աշխարհի ամենափառաւոր շիրիմը.—** Հնդկաստանի Ակրա քաղաքի մէջ գտնուած Թաճ Մահալի շիրիմն է: Շահ Ճիհան կանգնած է ի յիշատակ իր սիրեցեալ կողակցի Մօմթազ Զէմանի կամ Արզամունտ Պանուի: Ամբողջ շէնքը քառակուսի է, որի անկիւնները կտրուած են. այս շէնքի կեդրոնում եղած ութանկիւն սրահի վրայ մի



գմբէթ կայ, սրահի շուրջը նուրբական վանդակ կայ՝ բարակ մարմարիոնից փորուած տարօրինակ վարպետութեամբ: Այնտեղ է Մօմթազ Զէմանի դագաղը, որի մարմարի վերայ թանկագին գըմբուխաներով և ադամանդներով գրուագներ են շինուած: Այս շիրիմի մօտը կայ նաև ուրիշ շքեղ մի դագաղ, որի մէջ հանգչում է Շահ Ճիհան, որ 1666-ին է վախճանած: Ամբողջ շիրիմները մաքուր ճերմակ մարմարիոնից և յասպիս, փերուզակ, մեղեսիկ և յակինթի թանկագին քարերով զարդեր են շինուած: 22,000 մարդ 20 տարի շարունակ աշխատելով հազիւ կարողացել են աւարտել: Աշխատութիւնը ձրի և շատ նուէրներ ունենալով հանդերձ՝ ծախք նստել է 20 միլիոն րուբլի:

**Աշխարհիս մեծագոյն առկախ կամուրջը.—** Բրուքլինի կամուրջն է, Իստ Ռիվըրի (արևելեան գետ) վրայ ձգուած, որ Նիւ-Եօրքը Բրուքլինի հետ է միացնում:

Ամբողջ երկայնութիւնն է 1826,60 մէտր է, ծայրի երկու աշտարակներն 84,25 մէտր բարձր են ծովի մակերևոյթից և կամուրջի ու գետի մէջտեղ 41,17 մէտր տարածութիւն կայ: Կամուրջի յատակը ամբողջապէս պողպատից է 26,20 մէտր լայնութիւն ունի և հինգ ճանապարհ ունի, մէջտեղինը հետիոտների համար է: Երկու-

որ պարանաձգական գրութիւնով շարժող վագոնների և երկու ճանապարհ ուրիշ տեսակ կառքերի համար։ Ամբողջ կամուրջի ծանրութիւնը 40,000 փութ է կշռում և ծախքը 3,260,000 ռուբ. ոսկի։ Շինուած է 13-րդ դարում։

**Աշխարհի մեծագոյն մայր եկեղեցին** Հռոմի Ս. Պետրոս եկեղեցին է, որ Յուլիոս II պապը, նախկին Ս. Պետրոս եկեղեցու վերջին ծայր հին ու քայքայուած վիճակը տեսնելով հիմքից վերաշինելու փափագով Բրամանդ ճարտարապետին յանձնեց։ Առաջին քարը դրուեց 1500 թ. ապրիլի 19-ին։ Այս եկեղեցու շինութիւնը բացի արքավայրերից և ԺԸ. դարու մէջ շինուած մօզայիքներից, մէկ ու կէս դարից աւելի տևեց։ Նրա շինութեան օրով 22 պապեր աթոռ նստան. Բրամանդէն մինչև Բէրնէն հետզհետէ 13 ճարտարապետներ աշխատեցին։ Ծախքը 1593-ին 62,850,000 ռուբլի էր հաշւում, իսկ այսօր կրկնապատիկը արժէ։

**Աշխարհի ամենամեծ աշտարակը.**— Փարիզի մէջ 1889-ին բացուած արուեստահանդէսի համար կառոյց նշանաւոր երկրաչափ—ճարտարագէտ Գ. Էյֆէլ։ Այս աշտարակը 300 մէտր բարձրութիւն ունի և չորս յարկից է բաղկացած, որոնք բուրգի ձև կուտան շէնքին և որոնց երեսը կլոր է։ Իւրաքանչիւր յարկ ներկայանում է քառակուսի



մաս, որ ներքևից դէպի վեր գնալով կնեղանայ և կարծես կազմում է վանդակապատ մի արկղ. որի յատակը 15 մէտր երկայն է, իսկ վերի գագաթը 5 մէտր։

**Աշխարհի գեղեցկագոյն պարտէզները** գտնւում են Անգլիայի մէջ։ Սրանք արքունական պարտէզներ են, և բռնում են 680 օրավարի չափ տարածութիւն։ Այստեղ ամենագեղեցիկ տարաշխարհիկ բոյսերի մի հաւաքածու է, ձմեռնային մի պարտէզ, մի մուզէյ, գիտանոց, և բուսաբանական վարժարան. ամեն տարի 1,500,000 այցելուներ են գնում տեսնելու։

**Աշխարհի մեծագոյն ծաղիկը.**—Սումատրա կղզու Ռաֆլէսիա Ռինօլտի կոչուած ծաղիկն է. Նրա կոկոնները խոշոր կաղամբի, իսկ ինքը կառքի առջևի անիւի չափ է. այս ահագին ծաղկի հինգ ճերմակ թերթերը անհամար մանիշակագոյն առէջքների բոլորտիքը առնում են։

**Աշխարհի մեծագոյն զանգակը.** – Ճապոնիայի Նառայ մայրաքաղաքի մեծ մեհեանի մէջ է գտնւում։ Մոսկւայի 68 ոտք շրջապատ և 24 ոտք բարձրութիւն ունեցող զանգակի քառապատիկ մեծութիւնն է։

# XVI. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

**Տները** մկներից ազատ պահելու համար փոխանակ կատուի և կամ զանազան թունաւոր միջոցներ գործածելու, հարկաւոր է հետեւեալ հասարակ միջոցը։ Այն տեղերը, որտեղ մկներ կան, պէտք է անկիւններում կամ արկղների, աթոռների տակ ցանել օշօշի (ռամաշկի) ծաղիկ. մկների համար բոլորովին անտանելի է այդ հոտը և միանգամայն փախչում են դրանից։

**Խալիչաների եւ բրդէ գործուածքների թանաքի բծերի հանելը.**—Քանի դեռ թանաքի բիծը թաց է ու չէ ծծուել, պէտք է աշխատել ծծողական թղթով կամ բամբակի ծայրով չորացնել թանաքը. յետոյ վերան պէտք է լցնել հում կաթ և բամբակով սրբել ու այսպէս շարունակել այնքան որ բիծը բոլորովին չորանայ, պէտք է դարձեալ կաթ լցնել վերան թողնել՝ և մի քանի ժամանակ վրան թողնելուց յետոյ բամբակով մաքրել։

**Դէմքը** աւելի սպիտակ պահելու համար, պէտք է լուացուել ջրով, հետը խառնած կորեկի (гречневая) ալիւր։

**Լայկօվի ձեռնոցները մաքրելու միջոց։**—Պէտք է վերցնել 1 մաս սկիպիտար և 2 մաս բենզին իրար խառնել և սրբել ձեռնոցները։



Սմբատ Շահազիզ

(Տես երես 213)

«ՇԻՐԱԿ» 1909 թ.

**Մաքուր** սկիպիտարի հետ խառնել խոզի ճարպը և ապակէ ամանով լամպայի վերայ տաքացնել մինչև խառնուիլը և մինչև չորանալը տրորել կուրծքը և մէջքը երբ մրսել է, կամ հազում է. մի երկու անգամ կրկնելուց մրսածները և ցաւերը բոլորովին կանհետանան։

**Միսը** մի քանի օր պահելու համար, պէտք է կտրտել մի քանի կտոր այնպէս, որ մի ֆունտը անել 3 կամ 4 կտոր, դնել կաւէ կամ փայտէ ամանի մէջ, վերան բարակ աղ անել, իսկ յետոյ մի կամ երկու մատի հաստութեամբ ածուխի փոշի ցանել վերան. այդ ձևով պահուած միսը եփելուց առաջ պէտք է լաւ մաքրել ածուխը։ Միսը այնքան թարմ մնացած կլինի, որ դժուար կլինի որոշել նոր մսից։

**Երբ մազերը** շատ իւղոտ են և փայլում են, պէտք է լուանալ թունդ թէյով հետը խառնած ռոմ կամ միայն թէյով։

**Շորերից կեղտերը հանելու միջոց։—** Վերցնել ամենալաւ կարտոֆիլի ալիւր և խառնել ջրի մէջ. այս խառնուրդը քսել շորի կեղտոտ տեղերի վերայ և թողնել մինչև չորանալը։ Իսկ իւղոտ կեղտերը մաքրելու համար ամենալաւ միջոցը հետևեալ խառնուրդն է. լցնել ամանի մէջ այրած մագնեզիա (жженная магнезія) վերան լցնել բենզին և խառնել, որ դառնայ մածուցիկ,

ոչ այնքան ջրի։ Այս խառնուրդը քսել կեղտոտ տեղերի վերայ և թողնել մինչև չորանալը։ Եթէ առաջին անգամ քսելուց կեղտերը չմաքրւին, պէտք է կրկնել և երկրորդ անգամ, որից յետոյ անմիջապէս մաքրւած կլինեն կեղտերը։

**Սպիտակեղէնը** կեղտից լւանալիս լաւ մաքրելու համար պէտք է շորերը եփելիս կէս փութ շորին խառնել մի հացի գդալ ֆրանսիական սկիպիդար։

**Մետաքսէ** գործւածքները մաքրելու համար պէտք է նախ լւանալ թէյի ջրի մէջ, յետոյ արաղով, որի մէջ պէտք է խառնած լինի մի քիչ շաքար. դեռ չըչորացած պէտք է հարթել։

**Բորբոսնելու դէմ.**—Այն պահարաններում, որտեղ վտանգ կայ բորբոսնելու, պէտք է հոտաւէտ որև է հեղուկ պահել բաց ամանով. սկիպիդարը աւելի լաւ է ներգործում։

**Ձուկը** հեշտ է մաքրւում, եթէ մի րոպէ տաք ջրի մէջ գցւի։

**Պինդ** միսը փափկանում է, եթէ այն ջրի մէջ, որի մէջ եփւում է, մի քիչ քացախ խառնւի։

**Մետաղներ մաքրելու բաղադրութիւններ։**—Մետաղներ մաքրելու համար նշանակւած օծանելիքը կարելի է պատրաստել հետևեալ ձևով։

Հալեցնում են 5 մաս դեղին վազելին կամ



խօզի ճարպ և խառնում են հետը 1 մաս կոլկոթար։

**Սևացած ոսկեղէն իրերը** ստանում են կրկին իրանց փայլը, երբ նրանց գնում են եփւած սապոնաջրի մէջը, լւանում են մաքուր ջրով և սրբում են մահուդով։

**Ոսկեզօծած շրջանակներ մաքրելու հնար։**—Ոսկեզօծած շրջանակները պէտք է մաքրել մեծ զգուշութիւնով, ըստ որում նրանց վրայի ոսկին շատ բարակ շերտ ունի։ Եթէ շըրջանակը կեղտոտել են ճանճերը, այն ժամանակ լաւ միջոցն է խառնել նաշատիրի ջրի 10 մասը 40 մաս ջրի մէջ հալեցրած սպանիական սապոնի հետ, 1 մաս սապոնի մանրուքը 3 մաս ջրի մէջ։ Խառնուրդի մէջ թաթախում են բամբակը և թեթև կերպով քսում են շրջանակի վրայ, մինչև որ նա մաքրւի և փայլ ստանայ։

**Ռետինէ կրկնակօշիկների տակը կպցնելու հնար։**—Պէտք է պատրաստել հետևեալ խառնուրդը. առնել 6 մինչև 8 մաս կաուչուկի կտորտանքներ կամ հին կրկնակօշիկների ռետին և 100 մաս քարածուխի բենզին։ Այդ խառնուրդը պահում են սրւակի մէջ, շուտ-շուտ ցնցելով։ Այդ խառնուրդով կպցնում են կաշին կրկնակօշիկների տակ։

**Նաշատիրը տնական գործածութեան համար։**—Նաշատիրի ցքիլ շատ թոյլ ջրախառնուրդով կարելի է ոչնչացնել հագուստի վրայ գտնուող իւղի բծերը, դրա համար այդ խառնուրդով թրջած տեղի վերայ դնում են սպիտակ ծըծողական թուղթ և նրա վրայ քսում են տաքացրած ութոն։ Նաշատիրի և սկիպիտարի հաւասարաչափ խառնուրդը հանում է մինչև անգամ շատ հնացած ներկի բծերը, սեղանի երեք գդալ նաշատիրը, խառնած մի վեդրօ գոլ ջրի հետ. ամենալաւ հեղանիւթ է դոներ և լուսամուտներ մաքրելու համար, նոյն խառնուրդը սրսկելով, կարելի է մաքրել գորգեր։

**Փայտոջիլից** (բաղլինջ) **ազատուելու միջոց։**—Սպիրտի մէջ լուի ծաղիկ (персидскій порошокъ) ածել ու ցնցող տալ բոլոր ծակուծուկների վրայ, ուր որ փայտոջիլ կայ։ Սկիպիտարն էլ լաւ է։ Լաւ է նոյնպէս նաւթը մէջը ազպեղ ածած։ Կարելի է նոյնպէս փայտոջիլ գտնուած տեղերը քսել բամբակի խառնուրդով։

**Ամենահեշտ միջոց դանակներ և պատառաքաղներ մաքրելու։**—Խոհանոցում պէտք է կաւէ մեծ ամանով լի հասարակ մաքուր աւազ դնել, որը մի փոքր թաց արած լինի ջրով։ Դանակներն և պատառաքաղները գործածելուց յետոյ պիտի ցցել այս աւազի մէջ մի քանի ան-



գամ քսելով աւազին՝ որ բաւական մաքրում են։ Յետոյ մնում է դրանց լաւ սրբել և մի սրբիչէ փոշիով մաքրել։ Որքան էլ աւազը շուտ շուտ փոխել—ամեն շաբաթ կամ ամիսը երկու անգամ—այնքան աւելի լաւ է, նայած թէ որքան շատ են դանակները և պատառաքաղները։

**Մետաքսէ գործուածներից իւղի բծերը հանել.**—Պէտք է վերցնել ձուի դեղնուցը և նրանով բծերին քսել, վրան ծածկել քաթանի փալաս և թաց անել այն եռացրած ջրով. իսկ յետոյ տրորել մի քանի անգամ կրկնելով, այսպէս և ամեն անգամ. քաթանը թաց անել եռացրած ջրով ու վերջն այն բծի տեղը սառը ջրով լուանալ։

**Պատուհանների քրտնելու դէմ հնարք.**—Պէտք է մի քանի անգամ տաք ջրով լուանալ, ջրի հետ շատ քիչ գլիցերին խառնելով։

**Լամպաների** լուսաւոր և մաքուր այրելու լաւ միջոց.—Ամեն մի ֆունտ նաւթին մի թէյի գդալ ամենահասարակ լաւ չորացած աղ պիտի խառնել։

## XVII. ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

### *ՄԱՏԹԷՈՍ ԱՐՔԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ*

Կ. Պօլսի նախկին պատրիարք Իզմիրլեանի գործողութեանց ընթացքը, և նրա բնաւորութիւնը որ չէր դադարում Սուլթանի երես առ երես ճշմարտութիւնն ասելու և իր պահանջներն անելու իր չարաբաղդ հօտի համար, պատկեր է բերում այդ հայոց ազգային բնաւորութեան և ծառայում է իբրև մի լաւագոյն գրաւական նրանց ապագայի համար, ասում է մի ամերիկացի միսիօնէր։

Իզմիրլեանը ծնւել է Կ. Պօլսում 1845 թ. իր ուսումն ստացել է ազգային դպրոցում։ 1867 թ. նա ձեռնադրւում է վարդապետ։ Աշխատասիրութիւնն ու ընդունակութիւնը նրան դէպի առաջ մղեցին և նա աստիճանաբար բարձրանալով ըսկզբում եղաւ պատրիարքի քարտուղար, յետոյ պատգամաւոր հայոց ազգային ժողովի, ապա հոգևոր անդամ նոյն ժողովի։ Նա նշանաւոր է նոյնպէս իբրև հեղինակաւոր քարոզիչ։

Իզմիրլեան 31 տարեկան ձեռնադրւեց եպիսկոպոս և ստացաւ Եգիպտոսի թեմի կառավարութիւնը։ Այստեղ նա շատ բարենորոգումներ մըտցրեց և իր գործունէութեամբ այնքան բարձրացաւ, որ բացի Սուլթանից Աբիսինիայի թագաւոր



Մենելիք ևս շքանշան շնորհեց։ Վերջին Էջմիածնի կաթողիկոսական ընտրութեան ժամանակ նա ընտրւեց երկրորդ թեկնածու։

1894 թ. դեկտեմբերին, երբ Սասունի կոտորածից յետոյ հայերը ծայրայեղ թշւառ դրութեան մէջ էին, Իզմիրլեանին վիճակւեց բարձրանալ պատրիարքութեան աթոռը։

Այդ օրւանից արդէն Իզմիրլեանը դարձաւ բառի բուն նշանակութեամբ ռամկապետ իր ժողովրդի, իր սրտին մօտիկ ունենալով իր հօտի բոլոր կարիքները, համարձակ պաշտպան դուրս եկաւ նրա բռնաբարւած իրաւունքների։ Նա օգտւեց բոլոր օրինական միջոցներով իր ժողովրդի պաշտպանութեան համար և ո՛չ մի սպառնալիք ահ և նոյն իսկ մահւան երկիւղ չը կարողացան թուլացնել նրա եռանդուն գործունէութիւնը։

Պատրիարք ընտրւելուց յետոյ, շուտով Իզմիրլեանը պահանջեց Թուրքերի բանտարկած եպիսկոպոսների տեղ նորերը նշանակել։ Դուռը պատասխանեց, որ իրան տւած տեղեկութիւնները սխալ էին և բանտարկւած եպիսկոպոսները կը արձակւին։ Իզմիրլեանը պատասխանեց. «Ձեր տեղեկութիւնը միանգամայն ճշմարիտ է, ես ես չեմ կարող թոյլ տալ անարդարութիւններ»։—Ոչ սպառնալիք, ոչ շողոքորթութիւններ չկարողացան նրան սասանել. նա հաւատարիմ հպատակ լի-

նելով սուլթանին, չստորացաւ մինչև ստրկութեան աստիճանը, ինչպէս որ ինքը անձամբ սուլթանին ներկայանալիս ասաց.—«Որքան թելադրում է իմ խիղճը, ասաց նա, ես պէտք է հպատակիմ Ձեզ, բայց միևնոյն ժամանակ ես պէտք է աչքի առաջ ունենամ իմ ժողովրդի բարեկեցութիւնը : Զարմանալի չէ, որ Սուլթանը սաստիկ բարկացաւ և հեռացրեց պատրիարքին և զրկեց սովորական շքանշանից: Բայց յետոյ կամենալով նրա սիրտը գրաւել, շնորհեց նրան ամենամեծ շքանշանը, որ տրւում է աշխարհական անձանց: Իզմիրլեանն ասաց.—«Ձերդ մեծութիւն, ինձ ինչ հարկաւոր են այդպիսի բաներ. ես մի հասարակ հոգևորական եմ, ես և կերակրւում եմ այնպէս, ինչպէս իմ ժողովուրդը. իմ տան մէջ այդպիսի թանկագին իրերի համար չկայ սեղան. խնդրում եմ չըստիպել ինձ ընդունելու այդ:

Մի ուրիշ օրինակ Իզմիրլեանի համարձակութեան, որ նա իր պաշտօնն ստանձնած միջոցին ասաց. «Երդւում եմ Աստուծոյ և ժողովրդի առաջ, որ ես հաւատարիմ կմնամ իմ կառավարութեանը, իմ ժողովրդին և Աբդուլ-Ազիզից շնորհւած սահմանադրութեանը. իմ հասկացողութիւնը հաւատարմութեան մասին այդպէս. հաւատարմութիւնը պայմանաւորւում է նրանով, որ կառավարութիւնը պաշտպանէ մեր իրաւունքները, կեան-



քը, ստացւածքը և պատիւը, առանց այս պայմանների կեղծ է ժողովրդի հաւատարմութեան զգացմունքի արտայայտութիւնը—դա կեղծաւորութիւն է և երկուստեք վտանգաւոր թէ ժողովրդի և թէ կառավարութեան համար: Ամեն ցանկութիւն, ճիգ, բողոք. որի նպատակն է ամրապնդել այդ իրաւունքները, ոչ միայն երդման դրժումն չէ, այլ ընդհակառակը պէտք է ապացոյց լինի հաւատարիմ հպատակութեան և անաչառութեան:—Ես միևնոյն ժամանակ պարտաւոր եմ հաւատարիմ լինել և իմ ժողովրդին, այսինքն եկեղեցուն, որովհետև մեր առաքելական եկեղեցու պարակքը մեզ չի բաժանում ժողովրդից, մեր ժողովրդի օրէնքները անփոփոխելի և սուրբ են: Ձեր պատրիարքը պէտք է նրանց պաշտպանը և թարգմանը լինի, որովհետև ներկայացնում է նըրանց պատասխանատու պաշտպան եկեղեցու և ժողովրդի առաջ»:

Պատրիարքը ոչ միայն քաջութիւն ցոյց տըւեց կառավարութեան դէմ. այլ և յեղափոխականների, որոնք շատ անգամ դիմում էին սպառնալիքներով: Նա ճշմարիտ հերոս էր ճշմարտութեան համար: 1896-ին Իզմիրլեան հրաժարւեց պատրիարքութիւնից և դատապարտւեց Տրիպոլի աքսորւելու, վերջը դեսպանների միջամտութեամբ այդ վճիռը փոխեց և նա աքսորւեց Երուսաղէմ:

## Դ Ո Դ Ո Խ Ե Ա Ն

Իր հայրենի Սիմֆէրոպօլ քաղաքում 1908 ի յունիսի 10—11-ի գիշերը խաղաղ վախճանուեց անմահ «Մրծեռնակ»-ի հեղինակ՝ Գէորգ Դոդոխեանը։

Նա ծնուեց 1830 թւի փետրւարի 18-ին Սիմֆէրոպօլում։ Սկզբնական կրթութիւնն ստանալով տեղական դպրոցում, 1842-ին մտաւ Մոսկւայի Լազարեան ճեմարանը, ուր աւարտեց իր ուսումը 1848 թւին։

Լազարեան ճեմարանում Դոդոխեանը յայտնի էր իբրև լաւ կոմիկ և նկարիչ-կարիկատուրիստ։ Նրա դասընկերներից մէկը, այսօր մի պատկառելի ծերունի—կարդալով իր վաղեմի ընկերոջ մահը՝ յիշեց նրա դասալսական «չարութիւններից» մէկը, որ աւելորդ չենք համարում տալ այստեղ։

Առաջել Փիլիպպիչ Ճաղուն (Ճահումեան) ազգանունով մի հայ, որ իր կրթութիւնը ստացել էր Եգիպտոսի Մահմէդ-Ալիի իր ժամանակին նշանաւոր արաբական դպրոցում, ճեմարանի արաբերէն և թուրքերէն դասատու էր։ Մի առաւոտ ուսուցիչը, իր սովորութեան հակառակ, մի փոքր ուշացաւ դասից։ Աշակերտները հարցրին, թէ ինչն է ուշանալու պատճառը. ուսուցիչը պա-



տասխանեց, որ իր փոքրիկ շնիկը ամբողջ գիշերը չարաճճիութիւններ արեց և ամբողջ գիշեր խանգարեց իր քունը՝ մինչև որ նա ստիպւած եղաւ ծեծել նրան։ Ցանկարծ նա մի փոքր աւել քնեց։

Հետևեալ օրը, Դոդոխեանը Ճաղունի դասից առաջ գրատախտակի վերայ նկարեց ուսուցչին գիշերւայ վարտիկ շապկում և կալպակում՝ ձեռքին փոքրիկ շնիկը, միւս ձեռքով նրան ծեծելիս։ Պատկերը վերին աստիճանի յաջող էր։ Երբ ուսուցիչը մտաւ դասատուն և գրատախտակին նայեց, հասկացաւ բանի էութիւնը. երէկւայ իր ուշանալու առթիւ պատմած տեսարանն էր։

—Кто это нарисовалъ? հարցրեց ուսուցիչը իր կոտրատւող ռուսերէնով, որով նա շատ էր սիրում խօսել։

—Я, դուրս սլծաւ Դոդոխեանը մանկական ժպիտը երեսին։

—А что это значитъ, շարունակեց ուսուցիչը։

—Это Геркулесъ убиваетъ льва. վրայ բերեց աշակերտը հեգնօրէն ժպտալով

Դասարանը փռտկաց։ Ուսուցիչը յօնքերը կիտեց և հրամայեց ջնջել՝

—Чтобъ Геркулесъ больше не убивалъ льва.

Լազարեան ճեմարանից յետոյ Դոդոխեանը

մտաւ Պետերբուրգի Դեղաբուժարից ճեմարանը, իսկ 1853 թ. այնտեղից անցաւ Դորպատ՝ ուր խմբուած էր հայ ուսանողութեան սերտը, հայ ժողովրդի ամբողջ սաղաղան: Աճա այստեղ գրեց նա իր անմահ «Ծիծեռնակը»:

Այն ժամանակ հայ ուսանողութեան մէջ աչքի էր ընկնում Վահան Ասկարեանը, որին շատերը համարում են «Ծիծեռնակի» իսկական հեղինակը: Հետաքրքիր է այդ մասին ժամանակակից Դորպատական ուսանողի կարծիքը: Աճա թէ ինչ ասեց յայտնի ծերունին այդ մասին.

Հանգուցեալ Ասկարեանը վերին աստիճանի օժտուած և ընդունակ անձն էր. նա մեր ուսանողութեան ամենանշանաւոր ու պարկեշտ դէմքերից մէկն էր: Աւարտելով համալսարանը, փայլուն կերպով, տալով մագիստրոսական քննութիւնը, համալսարանի վարչութիւնը առաջարկեց նրան մնալ Դորպատում պրիվատ-դոցէնտ:

Բայց բոլորովին անսպասելի կերպով նոյն տարին վախճանեց:

Չը նայելով որ Ասկարեանը ուժեղ ու յաղթանդամ կազմուածքի տէր երիտասարդ էր, այնուամենայնիւ չկարողացաւ յաղթել իր հիւանդութեանը. մրսելով՝ նա ստացել էր թոքերի բորբոքումն:

Հանգ. Ասկարեանին բոլորս ճանաչում էինք



իբրև բանաստեղծ, և իսկապէս նա բանաստեղծի տէմպերամենտ ունէր: Նրա բանաստեղծութիւններից մի քանիսը տպեցին հանգ. պրոֆ. Մկրտիչ Էմինի «Ընտիր հատուածներում»:

Յայտնի է, թէ ինչպիսի ոգևորութիւն էր տիրում այն ժամանակ Դորպատում. Դողոխեանը չէր կարող չենթարկուել այդ մթնոլորտի ճնշման հոսանքին, չնայելով իր աւելի սառը, կոմիկ՝ քան բանաստեղծի խառնուածքին: Դողոխեանի այդ ոգևորութեան արդիւնքն է «Ծիծեռնակը»:

Ես կարծում եմ, պատասխանելով հարցիս նկատեց յարգելի ծերունին, որ Դողոխեանն է գրել «Ծիծեռնակը», բայց կարծում եմ նոյնպէս, որ անցել է Ասկարեանի ձեռքի տակից, մանաւանդ որ այդ երգի մէջ կան բառեր, դարձուածքներ, որ Ղրիմի հայերը երբէք չեն գործածում. ինչպէս օրինակ՝ «կտուրի տակ», «կտուր»: Իսկ վաղամեռ Ասկարեանը բնիկ Վաղարշապատցի էր ժողովրդի զաւակ, ծանօթ նրա կեանքին ու լեզւին: «Ծիծեռնակը գրել է Դողոխեանը, բայց անցել է Ասկարեանի խմբագրութեան, որ անկասկած սրբագրել, ուղղումներ է կատարել:

1859 թ. Դողոխեանը թողեց Դորպատը: Նա ուսուցիչ դաստիարակի պաշտօնով հրաւիրեց Գէլսիս. Կովկաս, հարուստ կալուածատէր Քալանթարեանների ընտանիքը, ուր մնաց բաւական

տարիներ։ Ապա անցաւ իր հայրենիք՝ Ղրիմ, ուր Թաթարաց սեմինարիայի ռուսաց լեզւի պաշտօն վարեց շատ երկար տարիներ։ Եղել է նոյնպէս հայ դպրոցի հոգաբարձու։ Վերջին մօտ 10 տարին նա ապրեց կեանքից ու հասարակական ասպարիզից քաշւած՝ յարգւած ու սիրւած բոլորից։ Հանգուցեալը շատ ուրախ բնաւորութեան տէր մարդ էր, վերին աստիճանի սրախօս և հաճելի հասարակութեան մէջ։

Շատ քիչ է գրել Դոդոխեանը, բայց միայն «Ծիծեռնակը» բաւական է, որ հայ ժողովուրդը չմոռանայ նրա յիշատակը։ Դոդոխեանը թողել է անտիպ աշխատութիւններ, Սիմֆէրոպօլի հայ հասարակութեան բարոյական պարտքն է իր մեծ համաքաղաքացու երկերի տպագրութեան գլուխ անցնել։

Դոդոխեանի մահուամբ գերեզման իջաւ Դորպատեան փայլուն շրջանի վերջին շառաւիղներից մէկը եւս։

Ն. Ն.

---



# ՄՈՒՐԱՑԱՆ

1908 թ. օգոստոսի 30-ին Թիֆլիսի Միքայէլեան հիւանդանոցի հոգեկան հիւանդների բաժանմունքում կնքեց իր մահկանացուն նշանաւոր հայ վիպասան Մուրացանը—Գրիգոր Աստուածատրեան Տէր-Յովհաննիսեանը։

Գրիգոր Աստուածատրեան Տէր-Յովհաննիսեանը, որ հայ գրական աշխարհում յայտնի էր Մուրացան կեղծ անուան տակ, ծնւել է Շուշի քաղաքում 1854 թ. դեկտեմբերի 1-ին և կրթութիւնն ստացել է Շուշու թեմական դպրոցում, որտեղ 1874 թւին աւարտելով ուսման ընթացքը, սկսել է ուսուցչութեամբ պարապել։ Սկզբում նա ուսուցիչ հրաւիրւեց Խորէն վ. Ստեփանէի մասնաւոր դպրոցը, բայց երկու տարի միայն ծառայելով նա թողեց այդ ասպարէզը, անցաւ Թիֆլիս, որտեղ սկսեց ինքնակրթութեամբ զբաղւել և միևնոյն ժամանակ ծառայում էր որպէս հաշւապահ առևտրական հիմնարկութիւններում։ Այդ ժամանակւանից Գրիգորը նւիրւեց գրական պարապմունքներին և գիշերը ցերեկ դարձնելով սկսեց պատմական ուսումնասիրութիւններով զբաղւել, որի արդիւնքն էր իր առաջին գրաւոր վաստակը Հասան-Ջալալեանների պատմութիւնը, որ լոյս տեսաւ 1880 թ. «Փորձ» ամսագրի մայիս համա-

բում։ Այդ պատմական գրուածքին հետևեց նորա «Ռուզան» դրաման, որ 1882 թ. փետրուարի 4-ին առաջին անգամ խաղացւեց։ «Ես դրամատուրգ չեմ, ասում էր նա սրանից 10—11 տարի առաջ, և ես ստիպւած էի «Ռուզանիս» վերմկրտել ահա 16—17 տարի է կոկում եմ, բայց դեռևս ինքս չեմ հաւանում»։ Ուրեմն նա աշխատեց և հասաւ նպատակին և մենք տեսանք մի կատարեալ «Ռուզան», այս մէկը կարծում եմ, որ ոչ մի հայ չի կարող ուրանալ։

Նա կամաց-կամաց սկսեց երևան գալ ժամանակի հայ լրագրութեան մէջ և 188՛ թւից արդէն նա ստորագրում էր «Մուրացան». Նա երևաց նախ՝ «Մեղու Հայաստանի» թերթում, որտեղ մաս-մաս տպագրւեց նորա «Հայ բողոքականի ընտանիքը», յետոյ «Արձագանքում», որտեղ լոյս տեսան նորա «Մարդը մտադրում է, կինը կարգադրում», «Ցիկլին Փիրալեանի վիշտը», «Նախկին ազգասէրի գաղտնիքը» և վերջապէս նորա գրուածքների գլուխ գործոցը՝ «Գէորգ Մարզպետունի» յայտնի վէպը, որի կատարելութիւնն ուրացող դեռ ևս չէ եղել։ «Նոր-Դարում» Մուրացանը տպել է ահագին հարստութիւն և այդ վիպասանի աշխատակցութիւնն էր, որ «Նոր-Դարին» ահագին ընթերցողներ էր մատակարարում։ Այդ թերթում բացի մանր մունր պատկերներից



լոյս են տեսել «Հասարակաց որդեգիրը», «Հարուստները դւարճանում են», «Անպատճառ իշխանուհի», «Ինչ լայեղ է», «Իմ կաթոլիկ հարսնացուն», «Չհաս է», «Խորհրդաւոր միանձնուհի» «Լուսաւորութեան կենդրոնում» և «Սեօն» վերնագրով ուսումնասիրութիւնը։

«Լումայ» ամսագրի հրատարակութիւնը նոր ասպարէզ բացեց Մուրացանի համար և նրա մէջ երևաց Մուրացանն ու իրար հետևից լոյս տեսան «Պսակների բողոքը», «Նոյի ագռաւը», և Անդրէաս Երէցը», իսկ «Թատրոն» հանդէսի մէջ էլ «Ռուզան» և «Ցպահանջ»։

Մի քանի տարի առաջ նա տպեց իր երկասիրութեանց առաջին հատորը և լոյս պէտք է տեսնէին մնացեալ գրւածները նման հատորներով, բայց գիրքը մոռացութեան դատապարտւեց, հայ մամուլը գլացաւ խրախուսել վիպասանին։

Գրական ծովում պայքարող Մուրացանը եթէ ապրէր բարեյաջող հանգամանքներում, կըլինէր աւելի բեղուն, բայց նրա ընտանեկան ծանր հանգամանքները, որ քայքայեց նրա առողջութիւնը, չէր թողնում հանգիստ խեղճ վիպասանին։ Ընտանեկան դժբախտութիւնը չափազանց ազդեց վաստակաւորի վրայ և Մուրացանը յուլիսին լուրջ կերպով հիւանդացաւ հոգեկան ծանր հիւանդութեամբ, որը և գերեզման տարաւ վիպասանին։

Հ. Տէր-Աստւածատրեան

## ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

Համայն հայութիւնը ցնցուեց և խորապէս վրդովուեց մի գարշելի ոճրագործութեամբ. որին զոհ գնաց Թիւրքահայ գրականութեան պարծանք, քանքարաւոր հրապարակախօս և հասարակական գործիչ Արփիար Արփիարեանը, որ յայտնի եղաւ մեզ ռուսահայերիս, 1880 թուականից իր բազմակողմանի և ուշագրաւ թղթակցութիւններով տեղական «Մշակ» լրագրում Հայկակ և *** ծածկանունների տակ։

Քստմնելի ոճիրը կատարուեց 1908 թ. յունուարի 30-ին, երեկոյեան $9\frac{1}{2}$ ժամին, Կահիրէ քաղաքում, երբ անմեղ զոհը վերադառնում էր իր բնակարանը։

Սպանութեան շարժառիթն այն է եղել, որ հանգուցեալը, որ մի ժամանակ նետուած է եղել յեղափոխականների շարքերը, բայց յետոյ հիասթափուած շատերի հետ յետ է նահանջել,—երեւան հանելով կատարուած մի շարք խայտառակ և զզւելի սարքերը։

Սպանութիւնից մի քանի տարի առաջ էլ նրա վրայ մի քանի մահափորձ կատարուեց, սակայն խիզախ հրապարակախօսը շարունակում էր իր մերկացումները։

Արփիարը զոհ գնաց իր կեանքի միջօրէին,



նա մօտաւորապէս 58 տարեկան էր, նա ծնուած էր Սամսոն քաղաքում 1850 թ. նախնական ուսումն ստացել էր Պոլիս, Օրթայ գիւղի ազգային վարժարանում, յետոյ անցել է Վենետիկ Մուրադ Ռափայէլեան վարժարանը և աշակերտել էր Հ. Ալիշանին։ Նրա հասարակական գործունէութիւնը թիւրքահայ օրագրութեան մէջ անջնջելի կմնայ, նա ոչ միայն նշանաւոր գրականագէտ հռչակ է վաստակել, այլ և իր ակտիւ մասնակցութեամբ հանրային այլ և այլ գործերում նշանաւոր դեր է խաղացել։ Նա վարել է երկար ժամանակ ազգային երեսփոխանի պաշտօնը, այնուհետև հանգուցեալը Արարատեան Ընկերութեան հոգին էր, որի գործունէութիւնը—հիմնել վարժարաններ Հայաստանում և տարածել լոյս իր խաւար եղբայրների մէջ—բարոյական և նիւթական ջերմ համակրութիւն և օգնութիւն վաստակեց և ռուսահայերից։ Հրապարակախօսութեան ասպարիզում նա սկզբում մասնակցում էր «Արեւելք» լրագրին Հրազդան ծածկանուան տակ, այնուհետև 1890 թ. նա հիմնում է «Հայրենիք» անունով լրագիրը, որը արագութեամբ վաստակում է ժողովրդի ամէն խաւերում ընթերցողներ և համակրողներ և որի հրատարակութեանը օգնում է նիւթապէս Յ. Ճահնազար անունով կաթոլիկ հայը. այսպիսով մասամբ Արփիարը հեռացնում է դաւանութեան

խորութեան պատնէշները՝ ծառայելով ինքը որպէս միութեան օղակ։

Բացի «Հայրենիք» օրագրից, նա երկու տարի վարել է «Շիրակ» հանդէսի խմբագրութիւնը և վերջերս էլ խմբագրում էր «Լուսաբեր» թերթը։

Յատկապէս մեզ, ռուսահայերիս, նա յայտնի եղաւ 1880 թւից և տասը տարուց աւելի իր շահեկան և շնորհալի թղթակցութիւններով ու առաջադէմ մտքերով՝ բարոյական և հոգևոր փոխադարձ շփման և միութեան գրաւոր օղակ դարձաւ հայութեան այդ երկու մեծ հատւածներում։

Բազմերախտ գրագէտի ողբերգական մահը դաւադիր հայերի ձեռքով ամեն տեղ, հասարակութեան համարեա ամեն խաւերի մէջ բռնկեցըրեց զարշանքի և կատաղութեան բուռն զայրոյթ. հայութեան խիղճը մինչև այսօր շարունակում է ալեկոծւել այս ամարդի և ցած արարքից անէծքի և նզովքի առարկայ դարձնելով հայասպաններին։

Հանգուցեալի յիշատակը յաւերժացնելու համար՝ Կահիրէի և Ամերիկայի հայերի մէջ Յանձնախմբեր են կազմւած, որոնք պիտի ժողովրդական մահարձան կանգնեցնեն 30-ամեայ բեղմնաւոր նահատակ-գրագէտի շիրիմի վրայ և հրատարակեն նրա երկերի ժողովածուն։

Կ. Թէմ.



# ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶ

Ս. Շահազիզ ծն. հանգուցեալ Պ. Պռօշեանի հայրենիքում, Աշտարակ գիւղում 1841 թւին։ Իր կրթութիւնն ստանալով Մոսկւայի Լազարեան ճեմարանում, այնտեղ և նշանակւեց հայ լեզւի դասատու։ 30 տարի մնաց նա այս դպրոցում, ազգային լեզւի, ազգային ոգու ուսումը համարելով մի մեծ պարտք, իր ազգին մատուցած երախտագիտական մի սրբազան տուրք։ Ահա թէ ինչ կարծիք ունէր նա իր աւանդած մայրենի լեզւի մասին. «Եթէ լուսաւորեալ ազգերը ընդհանրաբար և իւրաքանչիւր մարդ առանձին սովոր են պատւել մի չնչին նշխարք հնութեան մի նշանախեց անցած գնացած օրերին, մենք ինչպէս մոռանանք մի լեզու, որ երբեմն խօսել է և խօսում է մի ազգ, ունի իր պատմական յիշատակները, և բոլոր իր մարդկային իրաւունքը. մեր հայերը կրակից, արևից, երկաթից փրկելով տւել են մեզ այն լեզուն. իսկ մենք, որպէս երախտապարտ որդիք, պիտի կտակենք դրան մեր թոռներին։ Այս է բուն և հարազատ առաքինութիւնը . . .» Արդէն հասկանալի է թէ ինչ սէր և համակրանք կարող էր զարթեցնել դէպի մայրենի լեզուն և գրականութիւնը բանաստեղծ-ուսուցիչը իր սաների մատաղ սրտերում։

Շահազիզ դեռ մանուկ հասակից, Լազարեան ճեմարանի աշակերտ, գրում էր ոտանաւորներ և տպագրում «Հիւսիսափայլի» մէջ։ Նա սնւեց ու մեծացաւ նոյն «Հիւսիսափայլի» շրջանի ազդեցութեան տակ։ Երիտասարդ բանաստեղծը ըսկզբում սէր և եսական զգացմունք էր երգում, սակայն այդ իր կոչումը չէր, նա շուտ զգաց իր իսկական կոչումը. նա զգաց, որ մի այնպիսի ժամանակ, երբ հրապարակի վրայ ազգային դատ կայ, ազգային վերածնութեան խնդիր, այդպիսի բանաստեղծները ազգին օգուտ բերել չեն կարող։ Նա փոխեց իր «թիւր գաղափարը», և ընտրեց «նախ քաղաքացի և ապա պօէտ» նշանաբանը։ Նա երգեց «Լևոնի վիշտը», հայի իսկական վիշտը, նա մերկացրեց մեր վէրքերը, մտրակեց մեր տրասները, թոյն ու կրակ թափեց մեր ազգային մոլութիւնների համար, և այս ամենի մէջ ծածկած արտայայտեց իր ազնիւ վիշտը։ Նա երգեց հայի վիճակը, մտաւոր և բարոյական կեանքը, նա լացեց, ծիծաղեց ճշմարիտ կերպով, տանջւեց ու տխրեց։ Նա երգեց իր հայրենիքը անդաւաճան սիրով, աւանդ տւեց ամենքին «գնալ նոյն շաւղով»։

Եւ ահա 1892 թւին, հայ հասարակութիւնը կամենալով վարձատրել բանաստեղծ—ուսուցչին, տօնեց նրա 30-ամեայ գրական գործունէութեան յոբելեանը, որտեղ միանգամ ևս ցոյց տւեց, որ



հասարակութեան մէջ գործ կատարելու համար Մ. Նալբանդեանի, Պատկանեանի և Շահազիզների նման բանաստեղծներ են հարկաւոր, որ սիրոյ հմայքների փոխարէն հնչեցնում էին—

«Յառա՜ջ հայութիւն, յառա՜ջ ազգութիւն,
Լուսաւոր դարուս գաղափարներով.
Ատիր, ազգ անգին, խաւար տգիտութիւն
Մի տար քեզ խաբել խարդախ խօսքերով։

1890 թւականին բանաստեղծը փորձեց նորից վերցնել իր քնարը, բայց աւա՜ղ նա հնչեց—

Մեռաւ իմ մուզան, հանգաւ և կրակ
Անտառը լցւեց չոր տերևներով,
Երկինքը ծածկւեց, փախաւ արեգակ,
Էլ ես չե՛մ ապրում ուրախ երգերով։
Եւ աստեղազարդ բոլորակ գմբէթ,
Եւ արծաթափայլ ջրերի խոխոջիւն
Այլ ես չէ խօսում բանաստեղծի հետ,
Եւ ոչ այցելում աւերւած իմ տուն,
Այժմ ինձ մնաց միայն փշրանքներ,
Մայր մտաւ ահա և նշոյլ վերջին,—
Հանում եմ զրահս և զէն և զարդեր,
Յանձնում եմ նրան մանուկ սերնդին։

Եւ բանաստեղծը յանձնելով իր քնարը մանուկ սերնդին, քաշւեց առանձնութեան մէջ, ուր և կնքեց իր մահկանացուն 1907 թ. դեկտ. 24-ին։

## ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆՑ

1907 թուի նոյեմբերի 30-ին գերեզման իջաւ մի պատկառելի դագաղ, մի նշանաւոր հայ գրող և հասարակական գործիչ, որի բեղմնաւոր գործունէութիւնը սկսել է 60-ական թուականներից և շարունակել անխոնջ մինչև մեր օրերը։ Դա Պռօշեանցն է, որի անունը հանրածանօթ է ամբողջ հայութեան մէջ։ Դժւար թէ գտնւի մի գրագէտ հայ, որին նրա վէպերը յուզեցրած ու ծիծաղեցրած չլինեն. վշտով համակած կամ խնդութեամբ ոգևորած։

Պռօշեանցը մէկն է այն մշակներից, որոնք 60-ական թուականներին հանդէս եկան հայութեան աւերակների մէջ կուլտուրայի մի անապատ աշխարհում և սկսեցին եռանդով, անհուն սիրով ընդհանուրի համար և փայլուն ապագայի աներկբայ յուսով։ Նրանց կեանքի պատկերը, նրանց չարքաշ օրերը և զրկանքները ցոյց են տալիս, որ նրանք գաղափարի կատարեալ նահատակներ են եղել։ Միմիայն հանգուցեալ Պռօշեանցի կենսագրութեան համառօտ ակնարկն էլ բաւական է ապացուցանելու մեր ասածները, որովհետև օրինակը ընդհանուր է մեր բոլոր հայ գրողների և հասարակական գործիչների նկատմամբ։

Նա ծնւել է գիւղական մի համեստ ընտանի-



քի մէջ (Աշտարակ գիւղում), սկզբնական կրթութիւնը ստացել է գիւղական խալիֆաների մօտ. հազար ու մի նեղութիւններով կարողացել է մտնել Ներսիսեան դպրոցը, որից դուրս գալուց յետոյ, նա մի կտոր հաց ճարելու համար, բաղդ է որոնել կեանքի ամեն ասպարէզումն էլ, եղել է և վաճառական, և գործակատար, և լուսանկար, և վերջերումս ուսուցիչ. Նա ուսուցչական ասպարէզումն էլ թափառել է շատ երկար. մեր գաւառական բոլոր քաղաքներումն էլ ուսուցչի պաշտօն է վարել. եղել է և թեմական տեսուչ և վերջը իւր մանկավարժական գործունէութեան ասպարէզը աւարտել է Ներսիսեան դպրոցի ուսուցչութեամբ։

Այսպիսի չարքաշ կեանքի մէջ նա կարողացել է և գրչով ծառայելու հայկական ազգային գրականութեանը, իւր բեղմնաւոր գրչով կարողացել է մի շատ պատուաւոր տեղ բռնել այդ ասպարէզումը։

Հանգուցեալ Պռօշեանցը, Աբովեանցի ստեղծած ուղղութեան հարազատ և անդրանիկ աշակերտն էր. նա մեր անդրանիկ վիպասաններից էր և համով—հոտով ժողովրդական գրող։ Նրա վէպերի նիւթը գիւղն է և գիւղացու կեանքը իւր բոլոր մանրամասնութիւններով և լուսանկարչական ճշտութեամբ։ Այդ վէպերի մէջ հանդէս է բե-

բած գիւղացու տխրութիւնն ու ուրախութիւնը, սովորութիւններն ու բարքը, պարապմունքը, զգեստը, կերակուրը եւայլն: Նա նկարագրել է այն կեանքը, որը հետզհետէ հեռանում է մեզանից և պատմութեան արխիւն ընկնում, և այդ տեսակէտից շատ մեծ է Պռոշեանի ծառայութիւնը. Նրա վէպերը «Սօս և Վարդիթեր», «Հացի խնդիր», «Կուածաղիկ», «Բղդէ», «Ցեցեր», «Ջահիլն», «Էս-կիզբն երկանց» եւայլն, եւայլն դեռ մինչև այժմ կարդացւում են հետաքրքրութեամբ որոշ հասակում: Նրանք թէև ժամանակի ընթացքում շատ բան են կորցրել գեղարւեստի տեսակէտից, բայց հետզհետէ աւելի գնահատելի կլինեն նրանք ազգագրական և պատմական տեսակէտից:

* * *



# ՍԱԹԹԱՐ ԽԱՆ

Ղարադաղը Ատրպատականի հիւսիսային կողմի լեռնոտ գաւառն է, Արաքսի աջ ափին, որտեղ ապրող ժողովուրդը տւել է ամբողջ Պարսկաստանին ականաւոր կռւիչներ:

Այս երկրում ապրող ցեղերը դարերով պահպանել են իրենց անկախութիւնն ու ազատութիւնը, կառավարւել են տոհմիկ իշխաններով, որոնք անւանական կերպով միայն Շահերի հպատակն են համարւել, բայց ոչ հարկ են վճարել, ոչ էլ տուրքի ենթարկւել: Միայն Նասր-էդ-դին Շահը կարողացաւ ի թիւս այլ գաւառների հպատակեցնել և Ղարադաղը:

1880 թւականներին Ղարադաղի սահմանապահ գնդի առաջնորդութիւնը ձեռք գցեց Ռահիմ խան աւազակապետը, որի կատարած յափշտակութիւնների բողոքը հասաւ ոչ միայն Թէհրան, այլ և տարածւեցաւ մինչև իսկ Եւրոպական թերթերում: Ռահիմ խանի աւերածութիւնների դէմ գլխւած երիտասարդների շարքն էր անցել 1888 թ. երիտասարդ Սաթթար խանը, որը նոյնպէս ենթարկւել էր Ռահիմ խանի շահատակութիւններին:

Հանգամանքներն այնպէս էին դասաւել, որ Սաթթար խանը այլևս չէր կարող ծննդավայրը

վերադառնալ մինչև իր հակառակորդին ընկճելը։ Այս պատճառով նա Թաւրիզում որոնում էր մի հովանաւոր, որպէսզի կարողանայ իր գոյութիւնը պահպանել և վրէժխնդիր լինել ինչպէս Ռահիմ խանին, նոյնպէս և ուրիշներին, որոնք անգթաբար տանջում էին Ղարադաղցիներին։ Սաթթար խանը իր անդորրութիւնն ու ապահովութիւնը փնտռում էր ընդհանուր ժողովրդի խաղաղութեան և ազատութեան մէջ։

Իր նպատակին հասնելու համար նա մտաւ Մուզզաֆէր-էդ դին Միրզայի այն ժամանակւայ գահաժառանգի անձնական թիկնապահ գնդի մէջ։

Սաթթար խանը աշխատում էր, որպէսզի պաշտօնական նշանակւի աւազակապետ Ռահիմ խանին կալանաւորելու և գլխատելու. բայց այդ բանը նրան չէր յաջողւում շնորհիւ կաշառակեր իշխանների, որոնք շարունակ օգտւում էին Ռահիմ խանի կատարած աւարառութիւններից։

Ահա այս բանից զզւած 1895 թ. Սաթթար խանը մտաւ Թաւրիզի ռուս վաճառականների աւագ Աղիլ խանի ծառայութեանը։ Պէտք է գիտենալ, որ ռուսական հիւպատոսարանի պաշտպանութիւնը այնքան ուժեղ էր, որ նոյն իսկ պարսկական գահաժառանգի մերձաւոր աստիճանաւորները իրենց կեանքի, գոյքի ապահովութիւնը պաշտպանելու համար, յաճախ մտնում էին նրա հո-



վանաւորութեան տակ։ Սաթթար խանը Աղիլ խանի ծառայութեանը մտնելով, ազատւել էր նրանց հալածանքից։

Յաճախ անձամբ պատահել եմ Սաթթար խանին, այդ նիհար, թխադէմ և մանրակազմ լեռնականին, միշտ պատահել եմ տխուր և իր ներքին յոյզերին անձնատուր եղած։

Ո՞վ կարող է գուշակել թէ այդ հալածւածի սրտում ինչ մտքեր էին տարուբերւում և ինչ տեսակ ալիքներ էին յուզւում նրա գլխում։

Սաթթար խանը ոչ խօսում էր, ոչ ծիծաղում, և ոչ էլ ուշադրութիւն դարձնում շուրջը գտնւող պաշտօնակիցների վերայ, այլ միայն նա ապրում էր ներքին աշխարհով, որտեղ բուն դրել էր իր կեանքի տխուր և զարհուրելի արկածները։

Այդ ժամանակները Սաթթար խանը հազիւ 30—32 տարեկան կար, նրա ածխի նման սև ու գլանաձև աչքերի մէջ և ոչ մի սպիտակ չէր կարելի նկատել, դէմքին ոչ մի ա՛յս չէին կարողացել փոխել տխուր արկածները. բայց նայւածքն ու արտայայտութիւնը — միայն տխուր յիշողութիւններ էին զարթեցնում հանդիպողին։

1905 թւին ռուսական սահմանադրութեան յայտարարութիւնից յետոյ, Պարսկաստանի հալածւած երիտասարդութիւնը ձեռք մէկնեց քաղաքների կեղեքւած ժողովրդին և գիւղերի կե-

դէքուած ռայաթին, մարմիններ կազմակերպեցին, բարձրացրին իրենց բողոքը։

1906 թ. Պարսկաստանի ժողովուրդը ընտրեց իր լիազօրների ժողովները — անջումանները։ Կազմակերպուեց ազգային միլիցիան — ջանֆիդաինների խմբեր, որտեղ անմիջապէս գնում գրւեցին բոլոր հալածուածներն ու կեղեքուածները, որոնց թւում և Սաթթար խանը, որ իր ընկերների հետ ուխտել և Ղուրանի վրայ երդուել ժողովրդի իրաւունքներին պաշտպան կանգնել և կռուել բռնակալների դէմ մինչև «մահ կամ ազատութիւն»։

Ամբողջ Պարսկաստանում ոչ ոք այնպէս հաստատ չմաքառեց բռնութեան դէմ, ինչպէս մարտնչել է Սաթթար խանը, որ այսօր դարձել է Իրանի ժողովրդի սիրելի հերոսը։

1906 թ. Մուզաֆէր էդդին շահը հրատարակեց ազգային ժողով հրաւիրելու հրովարտակը և հրամայեց որ գաւառներում բոլոր գործերը վարեն անջումանների աջակցութեամբ։

1907 թ. ընթացքում նրա որդի Մահմէդ-Ալի շահը ինչ միջոցների դիմեց չկարողացաւ ցրւել ոչ մէջլիսը, ոչ գաւառական անջումանները և ոչ էլ սրանց աջակից գնդերը։ Երբ նա փորձ արեց Թաւրիզի Արքում գտնուած արքունական զէնքերի մթերքն ու թնդանօթները դատարկել, առաջին անգամ Սաթթար խանը ընդդիմացաւ շահի



գործակալներին, և գիշերով յարձակւեց կառավարութեան պաշտօնակալների վրայ, խլեց դուրս հանուած զէնքերը և իշխանութեան տակն առաւ ամբողջ մթերանոցը։

Յունիսի 10 ին երբ Մահմէդ-Ալի Շահը ռմբակոծել տւեց Իրանի մէջլիսի հին պալատը և Սպահսալարի մզկիթը, որտեղ ապաստանած էին «Ատրպատականի Անջումանի» լիազօրները, երբ ցրւեց մէջլիսի պատգամաւորներին, անջումանականներին և ջանֆիդաիններին, երբ Լիախովի «կոզակները» ջարդեցին, խեղդեցին, կալանաւորեցին ու շղթայեցին Իրանի ազատութեան համար մարտնչողներին, չխնայելով նոյն իսկ լրագրողներին, հրապարակախօսներին և բանաստեղծներին, Թաւրիզում Միր-Հաշիմի առաջնորդութեամբ, կեղծ Միջթէհիդ Հաջի Միրզա Հասանի առաջնորդութեամբ Սուջայի Նիզամը շահի պաշտօնակալը ցրւեց Ատրպատականի — Թաւրիզի գլխաւոր անջումանը։

Սարսափն այնքան մեծ էր, որ Ատրպատականի Անջումանի անդամները իսկոյն փախան քաղաքից այլ և այլ գիւղեր, ուանները ու Կովկաս, բայց ջանֆիդաինների խմբակը առանց շփոթւելու իր ձեռքն առաւ քաղաքի կառավարութիւնը և սկսեցին Թաւրիզում մարտկոցներ շինել, որպէսզի դիմադրեն Դաւաջի թաղում բուն դրած

և կալւածատէր Մէլիքների կազմած «Իսլամիէ» կուսակցութեան։ Ջանֆիդաիների խումբը անմիջապէս իրեն առաջնորդ Սաթթար խանին Դիկտատոր նշանակեց և սկսեց ուժերը ամփոփել, որպէսզի կարողանայ բռնակալութեան դիմադրել։

Ջանֆիդաիների ուժը սկզբում այնքան աննշան էր, որ շատերը յուսահատւած ուզում էին անձնատուր լինել Ռուսական գեներալ-կօնսուլ Պախիտօնովի խորհրդով։ Բայց պայմաններն այնքան խիստ էին, որ Սաթթար խանն ու ընկերները վճռեցին և վերանորոգեցին իրենց երդումը-կռւել մինչի «մահ կամ ազատութիւն»։

Իրար ետևից նրանց գտած յաջողութիւնը այնպիսի ոգևորութիւն առաջացրեց Ատրպատականում, որ ամեն կողմից օգնութեան հասան Թաւրիզի ազատութեան զինւորներին և ամբողջ ազատասէր աշխարհի սէրն ու համակրանքը գրաւեցին և Սաթթար խանը դարձաւ Իրանի Գարիբալդին, իր հարիւրօրեայ անընդհատ քաջագործութիւններով և անվեհեր ճակատամարտներով։ Ոչ սպառնալիք, և ոչ էլ խոստումներ չկարողացան շեղել Թաւրիզի ջանֆիդաիներին իրենց բռնած ընթացքից և անվեհեր դիմադրութեամբ նորից ստորագրել տւին 1908 թ. Սեպ. 12-ին Մէջլիսի ընտրութեան հրովարտակը։

Ատրպէտ



Պերճ Պռոշեան

(Տես երես 216)

«ՇԻՐԱԿ» 1909 թ.

# XVIII. ԿԱՆԱՆՑ ՇՈՒՐՋԸ

## ՄԱՅՐԱԿԱՆ ՍԷՐ

*Կինը միշտ մայր է, մինչև անգամ և այն ժամանակ, երբ նա դեռ կոյս է։ Իւրաքանչիւր մի տկարկայ, ամեն մի արարած, որին սիրում է կինը, նրա համար երեխայ է։ Մանկութեան օրերում՝ խաղալիքը, երիտասարդութեան տարիներում՝ եղբայրը, կեանքի ընկերը—այդ բոլորը կնոջ համար միշտ նրա երեխաներն են։ Կնոջ ոչ մի խօսքը չէ արտայայտում այնքան հուր, կիրք, այնքան քնքշութիւն, որքան նրա «բալէս» կամ «զաւակս» բառերը։ Այն մարդիկ, որոնք կասկածում են, թէ իրանց այլևս չեն սիրում, կարող են այդ կարծիքի մէջ բոլորովին համոզուել, եթէ նրանց սիրած կինը դադարել է այդ բառը արտասանելուց։ Կինն ամբողջովին տոգորուած է մայրական սիրով և այդ սիրոյ սրբազան կնիքը դրոշմուած է նրա ամբողջ օրգանիզմի վերայ, որ արտայայտւում է նրա քայլուածքի, ձայնի, բոլոր թուլութիւնների և ոյժերի մէջ։*

*Երբ փոքրիկ աղջիկը գաղտնի հիացմամբ գրկում է իր խաղալիքն ու սեղմում է նրան կրծքին, որ դեռ նոր պէտք է զարգանայ, նա արդէն մութ կերպով զգում է մայրական սրտի բաբա-*

խումը և եթէ նա ուժերի լարումից քրտինքով ողողուած՝ բարձրացնում է յատակից երեխային, որը համարեա իրան մեծութիւնն ունի, նա երջանիկ է զգում իրան, որովհետև ապագայ մայր է ներկայացնում։

Երեխաներ չունեցող կինը կարող է մայր լինել միայն սրտով կամ մտքով և նա միշտ այդպէս էլ լինում է։ Նա սիրում է իր բարեկամների կամ ծանօթների որդոցը, սիրում դժբախտներին ու թոյլերին, սիրում է որբերին ու զրկուածներին, նա միշտ սիրում է որևէ մէկին, որին կարող է երեխայ անուանել։ Առանց ֆիզիքական կամ հոգեկան մայրական զգացման՝ կինը կարող է լինել ամուսին և մարդ, բայց նա կին չէ։

Կին, այդ բառի բուն նշանակութեամբ կարելի է կոչել միայն մայր-կնոջը։ Երիտասարդ, գեղեցիկ ու հարուստ կինը, որին նախանձում են միւս բոլոր կանայք և որին փափագում են բոլոր տղամարդիկ, կարող են լինել աշխարհի ու սրտերի թագուհի, բայց նա կարող լինել երջանիկ, եթէ չունի իր մէջ մայրական սէր։ Նա կըլինի ծաղիկ, բայց պտուղ—երբէք, կարող է լինել հեշտասիրութեան տարփայ, կամ բանաստեղծուհի կամ նկարչուհի, սուրբ կամ փիլիսոփայ, բայց երբէք կատարեալ կին, կատարեալ



իր վեհ պաշտօնը, որ հաւատացել է նրան բնութիւնը։

Մայրական զգացումը կիրք է և կոչումն. սէր է և զոհ, մտքի և զգացումների լարումն է, հաց է և գինի, սիրտ և ուղեղ. դա մի ամբողջ մարդ է, որը զոհում է իրան այն արարածների համար, որոնք պէտք է ապրեն իրանից յետոյ, դա մի ներկայ է, որը ծնում է ապագայ։

Հէնց որ նոր արարածի սրտիկը սկսում է բաբախել մօր արգանդում, երեխան դառնում է նրա մարմնի կենդանի անդամը. մարմին նրա մարմնից և արիւն նրա արիւնից, նոյն իսկ և այն ժամանակ, երբ պտուղն արդէն բաժանւում է իրան սնուցանող ճիւղից, նա դարձեալ դրանով չէ դադարում մօր անդամներից մէկը լինելուց։

Այժմ նրան գգւում են սիրող ձեռքերը, փայփայում են քնքոյշ շրթները և կաթը՝ երկրորդ արիւնը սնուցանում է նրան մայրական հիւթով։ Իսկ երբ ցամաքում է այդ աղբիւրը, երեխան մըտնում է մի նոր աշխարհ, աշխարհ մտքի և զգացման, որոնցով շրջապատում է նրան մայրը և տաքացնում։ Թէ սաղմ, թէ մանուկ, թէ երեխայ, թէ պատանի, թէ այրական և թէ ծերունի հասակում այդ բոլոր շրջաններում մարդը միշտ կրում է իր կաշու, սրտի և ուղեղի վրայ այն մայրական թաղանթի հետքերը, որ ինն ամսուայ ընթացքում պահ-

պանում և սնուցանում է նրան: Քանի կայ մեր մայրը, անտեսանելի նեարդերն ու ջղերը կապում են մեզ նրա հետ սերտ կապերով և մեր սրտի իւրաքանչիւր զարկը անդրադառնում է նրա սրտում, մեր հոգու ամեն մի տանջանքը արձագանք է գտնում նրա հոգու մէջ:

Մայրական սէրը իր մէջ պարունակում է ըզգացմունքի բոլոր ույժը, քնքշութիւնը, խղճալականութիւնը: Նա ունի առիւծի ճանկեր ու ձայն իր մանուկի պաշտպանութեան համար և միևնոյն ժամանակ լցւած է երջանիկ սիրոյ նուրբ քնքշութեամբ: Ունի թոյլերին յատուկ կասկածոտութիւն, կատւի կեղծաւորութիւն, զինուորի հերոսութիւն, դիպլոմատի խորամանկութիւն, կամակոր կրքի խանդոտութիւն և նահատակի անձնազոհութիւն, կրօնի միստիկականութիւն և սրտի ամբողջ բանաստեղծութիւն: Ով համարձակւում է պնդել, որ բնութիւնը կնոջը ենթարկեալ տեղ է տւել, նա զգացմունքի պատմութեան առաջին երեսն անգամ չէ կարդացել: Մայրական զգացմունքի մէջ այնքան կիրք կայ, այնքան վեհ աշխատանք, ստեղծագործութիւն, որ մարդկային զբաղմունքները, որոնք կրում են քաղաքականութեան, վաճառականութեան, կոմերցիայի, գիտութեան, արւեստի և այլն եայլն անունները, իրենց անհրաժեշտութեան տեսակէտից չեն գերազանցել:



Աշխարհիս բոլոր օրէնսգրքերը միշտ պատւիրել են մարդուն սիրել իր ծնողներին, եղբայրներին, ընկերներին, նրանք ցոյց են տւել դէպի արդարութիւն երջանկութիւն, դէպի փառք և գիտութիւն տանող ճանապարհը: Բայց ոչ մի օրէնսգիրք, լինի աստւածային թէ մարդկային երբէք հարկաւոր չէ համարել պատւիրել կնոջը սիրել իր զաւակին:

Այդպիսի մի մարդկային մի զօրեղ զգացմունք բնականաբար պէտք է ունենայ իր էքստազները և յիրաւի դրանք գոյութիւն ունին. արտայայտւում են բոլորովին տարբեր ձևերով և ամենաբարձր աստիճանի երջանկութիւն են պատճառում: Սակայն մայրական սիրոյ ամենաքիչ յափշտակումները երբէք չեն նկարագրւել, որովհետև կանայք մեզանից անհամեմատ քիչ են գրում, բայցի այդ կարելի է նրա համար, որ այդ զգացումները չեն ենթարկւում նկարագրութեան:

Դրանց հրճւանքի, սիրոյ անձնազոհութեան էքստազներ են, ուրիշի փառքի ցոլացումներ մեր մէջ, փայլուն ապոֆէօզներ, ուր սրտի իւրաքանչիւր ծալքին ունի իր գոյները, իր հոտը, ուրախութեան մաղթանքներ երկրիս վրայի ամենաերջանիկ արարածի հոգուց բղխած: Ոչ ոք չկայ երջանիկ մօրից աւելի:

Մանեվացյա

# XIX. ՀՆԱԳԻՏԱԿԱՆ

## ՄԱՐԴՈՒ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ

Բազմաթիւ գիտնական հետազօտութիւններով համարեա թէ ապացուցւած է, որ մարդկային այն ցեղերի մէջ, որոնք դեռ ևս բնական դրութեան մէջ են, նշանացի խօսակցութիւնն աւելի ազդեցութիւն ունի, քան իսկական լեզուն, որովհետև երևակայութիւնն այդտեղ աւելի ընդարձակ սահմանի մէջ է գործում։ Նոյն իսկ քաղաքակրթւած մարդիկ, խօսելու ժամանակ, ակամայ զանազան շարժողութիւններ են անում—նամանաւանդ գրգռւած միջոցին—թէև դրանք այլևս պէտք չեն. այդ շարժողութիւնները մնացորդներ են արդէն վաղուց անցած ժամանակների սովորութիւնների և մեքենայաբար կրկնւում են այսօր ևս։ Թէև քաղաքակրթութիւնը և դաստիարակութիւնն աշխատում են կասեցնել այդ ուժեղ շարժողութիւնները, սակայն այնուամենայնիւ դեռ ևս անկարելի է դրանց բոլորովին մոռացութեան տալ։

Այդպիսի արտայայտութեան նշաններ և շարժողութիւններ գործ են դնում նաև մանուկները, համր-խուլերը և միմեանց լեզու չհասկացող նոյն իսկ հասակաւոր անձինք։

Նշանացի խօսակցութիւնն էր այն միակ միջոցը, որով մարդկութիւնն իր մանուկ հասակում կարող էր արտայայտել իր գաղափարները, քանի որ դեռ ևս մարդկային լեզուն արտասանութեան չէր վարժւել և նոյն իսկ լեզուն գտնւում էր մանկական հասակում։ Նշանացի խօսակցութիւնը, որ բնութեան մայրենի լեզուն է, միջոց է տալիս մարդուն՝ իր միտքն արտայայտել անհրաժեշտ և կարևորագոյն իրերի և պահանջների վերաբերութեամբ։ Գիտնականներից ոմանք մինչև անգամ հաստատում են, որ մարդս իր ձեռքի, մատների, մարմնի և դէմքի շարժողութեան նշանների միջնորդութեամբ կարող է արտայայտել այն բոլոր մտքերը, որ մենք լեզւով ենք յայտնում։ Ամերիկացի հնդիկների նշանացի խօսակցութիւնն ուսումնասիրողներն ևս հաստատում են այն հանգամանքը, որ դրանց լեզուն այնպէս աղքատ չէ վերացական գաղափարներով, ինչպէս որ սովորաբար կարծւում է։



Մանուկը լեզուն սովորելուց առաջ գործ է դնում հասկանալի շարժումներ, նա [illegible]կանում է այդ շարժումների և նշանների միջնորդութեամբ։ Նոյն իսկ այն ժամանակ, երբ մանուկն արդէն սովորել է փոքր ինչ խօսել, միշտ հետևում է ծնողների դէմքի արտայայտութիւններին, կարծես թէ ցանկանում են նրանց խօսքերն այդ արտայայտութիւնների միջնորդութեամբ

ըմբռնել: Այն անձինք, որ լեզւի բաւականին պաշար չունին—նոյն իսկ քաղաքակրթւած երկրներում, ուր նշանացի խօսակցութիւնը վաղուց արդէն անյայտացել է—մի բառ պակասելու ժամանակ, իսկոյն դիմում են մարմնի շարժւածքի օգնութեան: Նոյն իսկ վարժւած ճառախօսները շատ անգամ դիմում են այդ միջոցին, որպէսզի իրենց խօսքերին աւելի ազդեն ունկնդիրների վերայ: Պատահել են դէպքեր, որ զանազան անհատներ զըրկւելով մարդկային յարաբերութիւնից, կորցրել են խօսելու ընդունակութիւնը և նշանացի խօսակցութեան միջնորդութեամբ կարողացել են կրկին՝ փոքր առ փոքր սովորել: Այս բոլորից պարզ երևում է, որ նշանացի խօսակցութիւնն ընդհանուր մարդկութեան յայտնի ընդունակութիւններից մէկն ու սկզբնականն է: Մարդս առաջ քան խօսելու կարողութիւն ձեռք բերելն, իւր գաղափարներն արտայայտել է շարժումով, նշաններով և բնութեան մէջ գտնւած առարկաներն օդի մէջ ձևակերպելով, որանից և յառաջացել է նշանացի խօսակցութիւնը: Սկզբնական մարդը մի որևէ գործողութիւն մի երկրորդ անձին հաղորդելու համար, պէտք է այդ գործողութիւնը կամ դրա ձևակերպութիւնը կրկնէր նրա առաջ:

Նշանացի խօսակցութիւնն արտայայտում է



մարդկային հոգու նախկին դրութիւնը. այդ դըրութեան հետքերը կարելի է գտնել նոյն իսկ քաղաքակրթւած ազգերի մօտ: Դա թէ սովորական խօսակցութեան ժամանակ և թէ ճառելիս՝ այն է ասելիս խօսքի զօրութեանը, որ ասել է թէ՝ աւելի ազդու է քան խօսքը, ուստի և աւելի մօտիկ մարդկային հոգուն, քան խօսքը:

Մինչև այժմ կարծւում էր, թէ նշանացի խօսակցութիւնը գործածական է միայն այն ցեղերի մէջ, որոնց լեզուն դեռ ևս զարգացման ամենաստորին աստիճանի վերայ է գտնւում. սակայն նոր հետազօտութիւնները ցոյց են տալիս, որ վայրենի հնդիկ ցեղերից շատերը, որոնք խօսում են նշանացի, առաւել զարգացած լեզու ունեն, քան շատ այլ ցեղեր, որոնց մէջ նշանացի խօսակցութիւնը գործածական չէ: Նշանացի խօսակցութեան այդ երկարատևութիւնը բացատրւում է հաղորդակցութիւնը դիւրացնելու հանգամանքով:

Ինչպէս որ գրի սկզբնական ձևն է առարկաների գծագրելը մի որևէ նիւթի վրայ, այնպէս ևս նշանացի խօսակցութեան նախնական ձևն է՝ առարկաների գծագրելը օդի մէջ: Եւ ինչպէս որ գիրը զարգանալով չեղւում է իւր սկզբնական ձևից և պայմանական նշան դառնում, այնպէս ևս նշանացի խօսակցութիւնը հետզհետէ կրճատում է առարկաների ձևակերպելու եղանակը և նշան-

ները կամ շարժողութիւնները պայմանական է դարձնում: Այդ պատճառով և այսօր նշանացի խօսակցութիւնը մի արւեստ է դարձել ամերիկական հնդիկների մէջ: Այդ արւեստի զարգացման նպաստել է նաև այն հանգամանքը, որ վայրենի ցեղերն իրանց կեանքի մեծ մասն անցնելով որսի և պատերազմի մէջ, նրանք պարտաւոր են եղել զգոյշ լինել աղաղակ բարձրացնելուց, որովհետև այն լուռ անտառներում և ամայի վայրերում, ուր դրանք բնակւում են, մի փոքրիկ աղմուկն անգամ կարող է բաւականին տարածութեամբ հեռու գտնուող թշնամու կամ որսի կենդանու ուշադրութիւնը գրաւել:

Նշանացի խօսակցութիւնն, ինչպէս արդէն ասացինք, ներկայացնում է առարկաների կամ գաղափարների արտաքին նշանների կոպիտ գծագրութիւնն, ըստ կարելոյն նմանութեամբ, ուստի և գաղափարի և դրան արտայայտող նշանի մէջ միշտ գոյութիւն ունի մի տեսակ ազգակցութիւն: Օրինակ եթէ մէկը նշանացի խօսակցութեամբ կամենում է հասկացնել մի երկրորդին, որ ինքը ցանկանում է քնել, գլուխը թեքում է աջ կամ ձախ ձեռքի ափի մէջ և աչքերը փակում, այսինքն ներկայացնում է քնելու եղանակը: Եթէ մի համր—խուլ իր երկու մատը պատառաքաղի ձեւով մեկնած՝ դնում է սեղանի վրայ և յառաջ



խաղացնում, դժուար չէ հասկանալ, որ նա կամենում է ման գալու գաղափարն արտայայտել՝ նմանեցնելով երկու մատը ոտքերի դրութեան և ընթացիկ շարժողութեան: Ամերիկացի հնդիկներն և համր—խուլերը կարողանում են այդպիսի անձայն նշաններով այնպիսի երկար պատմութիւններ անել, որ զարմանք է պատճառում:

Նշանացի խօսակցութիւնը կ[illegible] տեսակի բաժանել, ա. Մատնանիշ և բ. [illegible] գրող:

Մատնանիշ նշանացի խօսակցութիւնն առաւել ընդարձակ սահմանների մէջ է գործում քան նկարագրողը [illegible] ցոյց են տալիս բոլոր առարկաները և այդ միջոցն աւելի ապահով է: «Ականջ» կամ «լսել» արտայայտելու համար հնդիկը կամ համր—խուլը մատնանիշ է անում իր ականջը, «միս» ասելու ժամանակ նա բարձրացնում է ձեռքի մորթը կամ մկանունքը, «սիրտ» ասելու տեղը ցոյց է տալիս իր սիրտը և այլն:

Նկարագրող նշանացի խօսակցութիւնը տեղի է ունենում այն դէպքում, երբ կարելի չէ ուղղակի մատնացոյց անելով՝ միտք արտայայտել:

Բացի վայրենիներից և համր խուլերից նշանացի խօսում են այն անձինք, որոնք միմեանց լեզուն չեն հասկանում և այդպիսով փոխադարձաբար համրի դեր են կատարում:

Նշանագրի խօսակցութիւնն այն միակ միտք արտայայտող միջոցն է, որ պատկանում է ընդհանուր մարդկութեան. թէպէտ միևնոյնը մենք կրկնում ենք լեզուի վերաբերութեամբ, սակայն այդ բառացի ճիշտ չէ կարող լինել, որովհետև երկրիս վրայ գոյութիւն ունեն հարիւրաւոր լեզուներ, որոնք հասկանալի են մի որոշ ժողովրդի համար, իսկ այլոց համար—ոչ: Իսկ եթէ մէկը ձեռքը դնում է ականջին և տալս բացասական շարժողութիւն անում, ամէն ոք և ամենայն տեղ—թէ զարգացած և թէ վայրենի. թէ Եւրոպայում, Ասիայում և թէ Աֆրիկայում, Ամերիկայում և այլն—կհասկանան, որ նա ուզում է արտայայտել, որ ինքը կամ մի ուրիշը խուլ է, և չէ լսում:

Նշանագրի խօսակցութեան դասին պատկանում է նաև երաժշտական գործիքների միջնորդութեամբ խօսելը, որ գործածական է Աֆրիկայի վայրենի ցեղերի մէջ: Անձամբ դիտած և զարմացած ենք՝ տեսնելով այն ճարպկութիւնը, որ Աֆրիկայի գերմանական գաղթականութեան, Քամերունի բնիկները ցոյց էին տալիս թմբուկների միջնորդութեամբ հեռու եղող անձանց իրանց միտքը հասկացնելու համար:

Հայ ազգը ընդհանուր մարդկութեան մի փոքրիկ հատուածը լինելով, պէտք է նոյն միջոցներն



ի գործ դնել իր գաղափարներն արտայայտելու և իրեն հասկանալի անելու համար, ինչ միջոցներ որ գործ են դրել մարդկութիւնը կազմող այլ ազգերը: Ինչպէս տեսանք, այդ միջոցներից մէկն և անմիջականն է նշանագրի խօսակցութիւնը. հարկ չկայ ապացուցանելու, որ հայերն ևս սկզբնական ժամանակներում պէտք է գործ դրած լինէին այդ միջոցը, քանի որ դրանք ևս մի անգամ գտնւում էին քաղաքակրթութեան ամենաստոր աստիճանների վերայ:

Նշանագրի խօսակցութեան բազմաթիւ հետքերը դեռ այսօր ևս—հայ գրի զարգացման կատարելագործութիւնից մօտ 15 դար անցնելուց յետոյ—կարելի է գտնել հայ ժողովրդի մէջ: Այդպիսի հետքեր, որ համարեա թէ բոլորովին անյայտացել են եւրոպական ազգերի միջից, ուշադիր հետազօտողը մեր ժողովրդի մէջ հարիւրներով կարող է գտնել: Յայտնի է թէ ժողովուրդը նամանաւանդ վաճառական դասակարգը—միայն «աչքով-ունքով» անելով որչափ բան կարող է հասկացնել իր դիմացը նստողին: Փոխանակ այո ասելու. մենք շարժում ենք մեր գլուխը վերևից ներքև, իսկ աջ ու ձախ շարժելով՝ ուզում ենք ասել—ոչ. մէկին սպառնում ենք՝ մեր ցուցամատը յառաջ ու յետ շարժելով. փոխանակ դրամի անունը տալու, շփում ենք մեր ցուցամատը և

բութ մատի ծայրերը միմեանց հետ. ուսերը բար-
ձրացնելը նշանակում է—չգիտեմ, գլուխը մի փո-
քըր թեքելը և սուրբն շրթունքը կախելը նշան է
կասկածի. բութ և ցուցամատով բղի մօրթը քա-
շել՝ նշանակում է խնդրել. երկու բութ մատների
եղունգները միմեանց քսելը նշանակում է մէկին
ջղայնացնել։ Երբ մէկն իր մատն առնում է ա-
տամների մէջ, կամենում է հասկացնել, որ մի
բան յանկարծակի յիշեց կամ մտաբերեց, իսկ ե-
թէ նոյն գործողութիւնն անելիս նա հաւաքում է
և ճակատի կնճիռները, այդ նշանակում է որ նա
մոռացածը կամենում է մտաբերել։ Եթէ մէկը խօ-
սելու ժամանակ բռնուցք է չինում, նշանակում է
որ նա սպառնում է. եթէ ոտքով տրոփում է,
նշանակում է որ բարկացած է. գլուխը կամաց
շարժելը նշան է զարմանքի. կնճիռները հաւաքե-
լը տհաճութեան նշանն է։ Հայ կինն իր երկու ձեռ-
քը հակառակորդի դէմ վերևից-ներքև թափ տա-
լով՝ ցանկանում է ասել. «հողեմ գլուխդ» կամ
«թաղեմ քեզ», որ անէծքի նշանակութիւն ունի։
Ով եղել է բուն հայ ընտանիքի և ժողովրդի
մէջ, նա այսպիսի և այլ հարիւրաւոր օրինակ-
ներ կարող է առաջ բերել, որովհետև նշանացի
խօսակցութիւնը հայ ժողովրդի մէջ մի պատա-
հական բան չէ, ինչպէս շատ եւրոպական ազգերի
մէջ։ Մեր ժողովրդի մի ամբողջ դասակարգը բը-



տիպուած է՝ մի որոշ շրջանի մէջ, երկար տարի-
ների ընթացքում, նշանացի խօսակցութիւնն ի-
բրև միակ միտք արտայայտելու միջոց գործ դը-
նել։ Հայ ժողովրդագէտն իսկոյն կըմբռնէ, որ
մեր խօսքը վերաբերում է գիւղական հարսների
դասակարգին, որոնք երկար ու ձիգ տարիների
ընթացքում—հնազանդւելով սովորութեան աստ-
ուածուհուն,—իրաւունք չունեն իրանց սկեսրի,
սկեսրայրի, տագրների և ընտանիքի այլ մի շարք
անդամների հետ իսկական լեզուով խօսելու. դը-
րանք ոչ թէ վերոյիշեալ անձանց հետ չեն կա-
րող խօսել, այլ և դրանց ներկայութիւնն իսկ
բաւական է, որ հարսները համրի դեր կատա-
րեն։ Եթէ ի նկատի ունենանք, որ այս սովորու-
թիւնը շարունակւել է երկար դարերի ընթաց-
քում, հասկանալի կլինի մեզ համար, թէ ինչու
նշանացի խօսակցութիւնը այժմ չէ անհայտացել
հայ ժողովրդի միջից։

Ի. Յարութիւնեան

# XX. ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹԻՒՆ

## ԹՈՔԱԽՏԱՒՈՐ ՀՕՐ ԿՏԱԿԸ

*Ոչ ոք իրաւունք չունի թողնել յետագայ սերունդ, եթէ խելքը, գիտութիւնը և փորձը համոզում են, որ այդ սերունդի կեանքը կարճ, վշտագին և դժբախտ պիտի լինի։*

*Յոյսը և հաւատը հանդերձեալ կեանքի համար ողջամիտ են և սուրբ, երբ նրանք ծառայում են այն բանի համար, որպէսզի մարդուն բարձրացնեն վեհ զգացմունքների մթնոլորտը, որոնք ազնուացնում են նրա գոյութիւնը. իսկ նա՝ ով չի ընդունում մարդու մէջ կամքի, մտքի և գործի ազատութիւն, նա վիրաւորում է Աստծուն, արհամարում է բանականութիւնը։*

*Ոչ մի ցանկութիւն, ոչ մի սիրոյ կայծ չի կարող շեղել ճշմարիտ ճանապարհից այն մարդուն, որը պարտաւոր է և ուզում է կատարել իր պարտքը։*

*Պարտքը բարձր է մարդուց, պարտքից բարձր չկայ ոչինչ բացի միակ Աստծուց։*

*Կենդանի արարածին չարիք չը պատճառել, այս իւրաքանչիւր մարդու պարտականութիւնն է ինչ հասակի, ինչ դրութեան մէջ էլ լինի նա։*



*Այդ ընդունում են բոլոր ժամանակների ազգերի օրէնքները և կրօնները։*

*Ծնել տկար որդիներ, նշանակում է գործել մեծ չարիք, ամենամեծը, որպիսին միայն կարող է գոյութիւն ունենալ և նմանապէս այդ չարիքը պատճառել այն էակներին, որոնց մենք ամենից շատ ենք սիրում, «որոց մարմինք ի մարմնոյ մերմէ և ոսկերք յոսկերաց մերմէ» են։*

*Ծնել հիւանդոտ որդիներ իր անձնական մեղքի պատճառով աւելի վատ է, քան թէ սպանել մարդուն սաստիկ բարկութեան ժամանակ. այդ նշանակում է նենգութեամբ թունաւորել մեզ համար ամենաթանկագին ստեղծուածների կեանքը։*

*Հիւանդոտ լինել և արտադրել որդիներ, դա ապացոյց է բուռն եսականութեան. դա նշանակում է ինքն իրան ենթարկել խղճի խայթին ամբողջ կեանքի ընթացքում։*

*Այն մարդու պատճառած չարիքը, որը ծնում է հիւանդոտ որդիներ, չի վերջանում առաջին զոհով. յաճախ հիւանդութիւնը և թոյնը անցնում են երկրորդ, երրորդ և յետագայ սերունդին, նուազեցնում են ծնունդները և յառաջացնում են սարսափելի տանջանքներ ու անէծքներ, զոհերը նզովում են, ինչպէս իրենց սեփական կեանքը, նոյնպէս և նրանց, ով իրանց աշխարհ բերեց։*

*Ով հիւանդոտ է և չնայած դրան, ցանկա-*

նում է որդիներ ունենալ, նա վատ հայր է, որովհետև իր որդիներին թոյն է տալիս խմելու, վատ քաղաքացի է, որովհետև նա ազգին վատ քաղաքացի է տալիս. վատ մարդ է, որովհետև ոչնչացնում է մարդկային ընտանիքի ամենալաւ կարողութիւնը—առողջութիւնը և ոյժը:

Դիմել տմարդի և խիստ օրէնքների պաշտպանութեան, միևնոյնն է, թէ ընդմիշտ չը ցանկալ աւելի բարձր և մաքուր լինել սովորական մարդուց, որը ուտում, խմում և քնում է:

Չի կարելի, սքօղելով մահմետական փատալիզմով, իր բաղդը խաղաթղթի վերայ դնել, այդ նշանակում է տարուել այն բոլորը, ինչ որ ունի մարդս:

Բաղդը—դա զօրեղի բաժինն է, իսկ յաղթութիւնը պատկանում է նրան, ով գիտակցութեամբ է գործում: Չի կարելի որևէ մի փաստ առաջ բերել, որի հիման վերայ կարելի լինէր թոյլատրել լուսնոտիներին, գժերին և թոքախտներին ամուսնութեան միջոցով ընկնաւորութիւնը, թոքախտը և գժութիւնը փոխադրել յետագայ սերունդներին:

Սէրը երկրային կեանքի ամենասուրբ ուրախութիւնն է... արդեօք կարելի՞ է թոյլ տալ նրանից պատրաստել բաժակ, որի մէջ միայն խառնւում է թոյնը:

Սէրը մարդու ամենալաւ օրհնութիւնն է.



բայց արդեօք ցանկանու՞մ էք, որ նա անէծք սերմանէ:

Սէրը—կերոն է. որ բորբոքում է կեանքի լոյսը. ուրեմն ինչո՞ւ էք ցանկանում դուք դագաղի մօտ վառւող ագոյ լապտերը դարձնել նրան:

Ի՞նչն է ստիպում ձեզ, կենդանի նեխուածներ և թոյնով ծնուածներ, ծնել որդիներ, որպէսզի տեսնէք նրանց գերեզմանում անմեղ մանկական շրթունքների վրայ ժպիտը փայլելիս: Չէ՞ք կարդում արդեօք ձեր որդիների ծերացած և կնճռոտ դէմքերի վերայ անէծք այն ծնողներին, որոնք նրանց կեանք տուին:

Ո՛չ հարստութիւնը, ոչ կրթութիւնը, ոչ գիտութիւնը, ոչ կրօնը, ոչինչ չէ կարող փոխարինել անժամանակ կորցրած առողջութեանը:

Հագցրէք հիւանդին մետաքս, զարդարէք նրան թանկագին քարերով, նստեցրէք ոսկեզօծ կառքի մէջ, տարէք աղմկալի խնճոյք և պահանջեցէք նրանից ծիծաղել:

Հիւանդի, թոյլ և փթած օրգանիզմի կեանքը պահանջում է չարունակ ուշադրութիւն և բժշկութիւն, դա մի եղեսպակ է (шлафей) է, որ չի կարելի քաղցրացնել ոչ մի մեղրով, դա անմխիթար վիշտ է, յաւիտենական աքսոր է, որից միայն մահը կարող է փրկել:

Էմմա, իմ անգին Էմմա, դու միշտ սիրում

էիր ինձ, դու միշտ յարգում էիր քո հօրը։ Լսիր ինձ։ Այնքան որդիներս կորցնելով և շատ անգամ քեզ գերեզմանի դուռը տեսնելով, ես սկսում էի նզովել ինքս ինձ, իմ մեղքերը և աղքատութիւնը, ես սկսեցի նզովել բժիշկների աղքատութիւնը, որոնք չէին կարող փչացնել այն թոյնը, որից ես պէտք է մեռնէի, չտարածելու իմ անբախտ ընտանիքի մէջ։

Եթէ ես ծնւեցի հիւանդ, ապա պարտաւոր էի միայնակ կրել այդ հիւանդութիւնը և այն մի քանի տարիները, որոնք բաշխել էր ինձ բնութիւնը, նուիրել իմ բարեկամներիս և հայրենիքիս համար։

Բայց ես այնտեղ հասայ, որ սկսեցի նզովել ծնածս վայրկեանը. իմ վիշտը հարիւր անգամ մեծանում էր զաւակներիս տանջանքներից, իսկ տունս դառնում էր գերեզմանատուն։

Ես լալիս էի և գիշերները աչքերս չէի փակում, ոչ մեռնել էի կարողանում և ոչ էլ ներել ինձ իմ յանցանքի համար։

Սակայն իմ աղքատութիւնը չէ կարող ծառայել իբրև արդարացումն ուրիշների համար։ Ներկայ գիտութիւնը բոլորովին սահմանեց և որոշ հաստատում է թէ այն մարդը, որ կամենում է ընտանիք հիմնել, պէտք է առողջ լինի, նա որոշեց, որ թոքախտները և լուսնոտները փոխադր-



րում են այդ հիւանդութիւնը յետագայ սերունդին և ապացուցեց, որ հիւանդութեան յաջորդական անցումը բնութեան անողոք անցումներից մէկն է։

Եթէ մի հազւագիւտ և բարեբաղդ հանգամանքով, կամ թէ անչափ աշխատանքների շնորհիւ, հիւանդ ծնողներին յաջողւում է առողջ որդիք ունենալ, բայց և նոյնպէս նրանց մէջ կը գտնուի գոնէ մի մանուկ, որին անխուսափելի է դաժան բախտը և ժառանգական հիւանդութեան կնիքով այդ երեխի վերայ հիւանդ հայրը և թէ թոքախտոտ մայրը կը կարդան իրանց մեղքի պարզ անէծքը։ Էմմա, իմ բարի Էմմա, դու ամբողջ կեանքումդ հիւանդ էիր, դու ես իմ վերջին զաւակը, ես ոչինչ չխնայեցի քո առողջութեան և փրկութեան համար և կարծում եմ, որ դու կապրես, Աստուած ողորմած է և նա գուցէ չէ կամենում ինձ իմ բոլոր որդիների սպանիչը դարձնել։

Բայց քո օրգանիզմը փուխր է և թոյլ, այն եղէգնի նման, որը միայնակ ցցւել է անապատում և անկասկած կը կոտրուի, եթէ մէկը յենւի վրան։ Երբէք մարդու չգնաս, աղջիկս, առաջին զաւակդ քեզ գերեզման է կիջեցնէ և կամ թէ կունենաս որդիներ, որոնք մահւան դատապարտւած կլինեն իրենց կեանքի ամենաքնքուշ տարիքում, իրանց մանկութեան դալարքին։ Թոքախտի թոյնը չափազանց ուժեղ է. նա թափանցեց մեր արեան

մէջ և չի անհետանայ նոր սերունդով։

Ես մեռնում եմ, դու վերջին կենդանի շառաւիղն ես մեր ցեղի, քո մահով այս թոյնը պիտի կորչի և մեղքը պէտք է վերանայ։ Երդւիր Էմմա, որ դու միայնակ կապրես և միայնակ էլ կմեռնես։ Աստուած տայ, որ դու հանդիսանաս ազատիչ հրեշտակ քո հօրը և նրա մեղքերին թողութիւն բերես։ Այս դառնութեամբ լի երդումը քո հօր կտակը և ժառանգութիւնն է. վերջին խօսքը, որ ինչպէս հայր պարտաւոր եմ ասել քեզ իմ սիրելի զաւակիս, դա խղճալի դատակնիք է. համբերիր, տանջւիր և ապրիր մինչև վերջը։

Արդէն վերջացաւ ամենազարհուրելի պատիժը մեղքիս համար։ Նրանից յետոյ որ թաղեցի իմ բոլոր որդիներին ես պարտաւոր էի և վերջինին, որը կենդանի էր մնացել, ասել-համբերիր, կրիր քո հօր յանցանքը։

Մի նզովիր հօրդ։ Երբ նա երիտասարդ էր և ձեռքը առաջարկեց մօրդ, այն ժամանակ բժիշկները հասարակ արհեստաւորներ էին և միայն նշտար ու թունաւոր դեղեր էին ճանաչում։ Նրանք չէին հասկանում, որ պարտաւոր են քաջութեան քուրմ լինել և առողջութեան հովանաւորող։ Նրանք չգիտէին, որ իրանց վերայ պարտականութիւն կայ հիւանդին, թոքախտին և ըն-



կնաւորին (эпилептикъ) ասել. «Մի համարձակւիր սերունդ թողնել քեզանից յետոյ, աւելի լաւ է խրիր սուրդ քո ամենամտերիմ բարեկամիդ սիրտը»,

Հայրդ իբրև ժառանգութիւն քեզ թողնում է մի սոսկալի պարտք, որը դու պէտք է կատարես ապրիր, բայց երբէք մի սիրիր, եղիր կին, բայց ոչ մայր։ Ես մեռնում եմ խաղաղ, որովհետև հաւատացած եմ, որ դուստրս չի դրժի իր երդումը և կկատարէ այն բարի գործը, որը հայրը չը կարողացաւ կատարել։

Ես հաւատացած եմ, Էմմա, որ դու ձգտում ես այդպէս սուրբ լինել և այդ հաւատը ինձ խրախուսում է ինձ մահւան մահճում։

Մանտեգացցա

# XXI. ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՖՈՐԻԶՄՆԵՐ

I

— Եսը ամենամեծ շողոքորթն է։

— Կիրքը յաճախ ամենախելօք մարդուն դարձնում է յիմար և ամենամեծ յիմարին խելօք։

— Մենք միշտ ույժ ունենք դիմանալու ուրիշների դժբախտութեան։

— Մենք աւելի ույժ ունենք, քան թէ ցանկութիւն նրանից օգտւելու և միայն մեր խղճի առաջ արդարացնելու համար, յաճախ շատ բան անիրագործելի ենք համարում։

— Եթէ ինքներս պակասութիւններ չունենայինք ուրիշի մէջ պակասութիւններ որոնելը մեզ զուարճութիւն չէր պատճառիլ։

— Եթէ ինքներս հպարտ չլինէինք, այն ժամանակ չէինք գանգատւիլ ուրիշների հպարտութեան վերայ։

— Ով շատ է զբաղւում մանր-մանր գործերով, նա սովորաբար անընդունակ է դառնում մեծ գործերի համար։

— Մարդ յաճախ ենթադրում է, որ ինքն է իրան ղեկավարում, մինչդեռ ուրիշներն են, որ ղեկավարում են։



— Հասարակութեան մէջ դիրք ձեռք բերելու համար պէտք է այնպէս ձևանալ, որ արդէն ձեռք էք բերել։

— Անկեղծութիւնը սրտի պարզութիւն է։ Շատ քչերը ունեն այդ։ Իսկ այն անկեղծութիւնը, որ յաճախ տեսնում ենք, ոչ այլ ինչ է, եթէ ոչ խորամանկ կեղծաւորութիւն—որի նպատակն է գրաւել ուրիշների հաւատը։

— Լռութիւնը—ամենաապահով միջոց է նրա համար, ով ինքն իրան չէ հաւատում։

— Աւելի մեծ ամօթ է բարեկամներին չըհաւատալը, քան թէ նրանցից խաբւած լինելը։

— Ախր ինչպէս ես պահանջում, որ ուրիշը քո գաղտնիքը պահի, քանի որ դու ինքդ չես կարողանում պահել։

— Մարդիկ շատ առատ են խորհուրդներ տալու մէջ։

— Մենք այնքան վարժւել ենք կեղծելու ուրիշների առաջ, որ վերջ ի վերջոյ կը կեղծենք նոյն իսկ մեր առաջ։

— Միշտ խորամանկ լինել—կը նշանակէ պըստիկ խելք ունենալ։

— Մեծ մարդու յատկութիւնն է—քիչ խօսքերով շատ բան ասել, իսկ փոքրիկ մարդկանց յատկութիւնը—շատ խօսել և ոչինչ չասել։

—Բաւական չէ առաւելութիւններ ունենալ, հարկաւոր է դրանցից օգտուելն իմանալ։

—Մարդիկ աւելի գնահատում են թւացող առաքինութիւնները, քան թէ իսկականները։

—Լինում են չարութեան հերոսներ, ինչպէս և բարութեան հերոսներ։

—Միայն մեծ մարդկանց յատկանիշն է, ունենալ մեծ պակասութիւններ։

—Օրինաւոր մարդը նա է, ով ինքն իրան ոչ մի բանում կատարեալ չէ համարում։

—Ով իրան անընդունակ է համարում որևէ յիմարութիւն անելու, նա այնքան խելօք չէ, որքան կարծում է։

—Մեծ յիմարութիւն է միայն իրան խելօք համարել։

—Մեծ է այն իմաստութիւնը, որ կարողանում է թագնուել։

—Իսկական պերճախօսութիւնը նա է, երբ մարդ խօսում է այն, ինչ որ անհրաժեշտ է։

—Հազիւ թէ գտնուի մի մարդ, որը զգար այն բոլոր չարիքները, որ իր կեանքում արել է։

—Կեղծ պարզութիւնը — նուրբ երեսպաշտութիւն է

—Մենք միշտ սիրում ենք նրանց, որոնք զարմանում են մեզ վերայ, բայց ոչ նրանց, որոնց վերայ մենք ենք զարմանում։



—Կան մարդիկ, որոնց ճակատին գրուած է յիմար լինել։

—Միայն ատելութեան արժանի մարդիկ են վախենում ատելի լինելուց։

—Միայն նրա համար ենք խոստովանում մեր փոքրիկ պակասութիւնները, որ կարծեն թէ մեծ պակասութիւններ չունենք։

—Մենք ենթադրում ենք, որ առողջ դատողութիւն միայն նրանք ունեն, որոնք համակարծիք են մեզ հետ։

—Փոքրիկ մարդիկ վիրաւորւում են փոքրիկ բաներից. մեծ մարդիկ տեսնում են այդ բոլորը, բայց չեն վիրաւորւում։

—Չի կարելի բոցավառ կերպով ցանկանալ այն, ինչ որ խելքով են ցանկանում։

Ինչքան էլ հազուագիւտ լինէր իսկական սէրը, բայց և այնպէս նա այնքան հազուագիւտ չէ, որքան իսկական բարեկամութիւնը։

—Մենք յաճախ կամաչէինք մեր ամենալաւ արարքների համար, եթէ աշխարհն իմանար նրանց շարժառիթները։

II

## ՉՈՐՍ ԹԻՈՎ ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

—Չորս բան անգին են՝ —Առողջութիւնը, Գիտութիւնը, Առաքինութիւնը, Ազատութիւնը:

—Չորս բան ապականում է խոհեմութիւնը եւ ծռում է արդարութիւնը.—Սէրը, Ատելութիւնը, Երկիւղը, Շահասիրութիւնը:

—Չորս բանից է առաջ գալիս բարկութիւնը —Ծաղրից, Ատելութիւնից, Ապերախտութիւնից, Անիրաւութիւնից:

—Չորս բան խրատ չեն ընդունում.—Բարկութիւնը, Ագահութիւնը, Նախանձը, Մարմնի ախպաւմը:

—Չորս բանից ծնւում են աշխարհիս ամենի չարիքը.—Նախանձից, Ագահութիւնից, Հպարտութիւնից, Հեշտասիրութիւնից:

—Չորս գարշելի մոլութիւն կայ.—Աստծուն ուրանալը, Հայրենիքին դաւաճանելը, Ծնողներին սպանելը, Ընկերոջը խաբելը:

Չորս բան է անհրաժեշտ դաստիարակին.—Լինել գթածապէս, պատասխանել խոհեմապէս, նկատել մտերմապէս, Դատել յայտնապէս:

—Չորս տեսակ բարեկամութիւն կայ.—Բախտի բարեկամ, որ հրաժարւում է, երբ բախտը յետ է գնում, Սեղանի բարեկամ, որ անհետանում է, հէնց որ սեղանը հաւաքւում է, պաշտօնի բարեկամ, որ տեւում է, քանի որ պաշտօնի մէջ է. Հաւատարիմ բարեկամ, որ յարատեւում է մըշտապէս:



—Չորս մարդիկ թշուառ են.—Ով միշտ մեղքի մէջ է, Ով կարող է բարի անել, բայց չէ անում, Ով չը գիտէ ու չէ կամենում սովորել. Ով գիտէ, բայց չէ կամենում սովորեցնել:

Չորս բան խաբում են մարդուն.—Ճահատացութեան ցանկութիւնը, Խօսքի քաղցրութիւնը, Խելքի սակաւութիւնը, Կնոջ խորամանկութիւնը:

—Չորս բան վայել չէ իմաստունի բերանին—Չգովելին գովելը, Գովելին չգովելը, Չհասկացածին ներհակելը, Անամօթաբար կռւելը:

—Չորս բան համարւում են քիչ հարկաւոր, բայց շատ են հարկաւոր: Պատւել ամենքին խօսքով, Խօսել ճշմարտութիւնը, Չզայրացնել ոչ ոքի, Կենցաղավարել առաքինի մարդկանց հետ:

# XXII. ՔԱՂԱՔԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Այցելութիւնները լինում են զանազան տեսակ, գլխաւորները կարելի է համարել՝ այցելութիւն պարտաւորութեան, ուրախակցութեան, ցաւակցութեան և հրաւէրի: Հրաւէրի այցելութիւնը, այսինքն երբ գնում ես մէկին սեղանի կամ պարի հրաւիրելու, պէտք է լինի շատ կարճ և կէս օրից յետոյ: Ցաւակցութեան գնացողի հագուստը զարդարուն չպէտք է լինի: Պարզ բարեկամական այցելութիւնները կէս օրից առաջ ես կարող են լինել պարզ և վայելուչ հագուստներով:

Կէս օրից առաջ որևէ տիկնոջ այցելութեան գնալը վայել չէ. եթէ կէս օրից յետոյ ես գնում, չը պէտք է շատ մնաս. եթէ այդ ժամանակ մի ուրիշ այցելու ներս մտնի, շուտով մնաս բարև ասա ու գնայ: Իսկ եթէ տանտէրը կամ ներս եկող հիւրը քեզ հետ շատ մտերիմ են և խնդրում են որ մնաս, կարող ես մնալ:

Դուռը կամ սանդուխտների վերայ ում էլ որ պատահես պէտք է բարև տաս. նոյնպէս պէտք է բարևես քեզ ներս հրաւիրողին:

Եթէ ձեռքդ գաւազան ունես, ձեռքումդ չըպահես, պէտք է զգոյշ լինես, ոտնամաններդ ես



շատ ձայն չհանեն: Եթէ որ դահլիճից ներս այցելու է ներս մտնում, թէ որ տղամարդ է, տիկինները թեթև կռացով պէտք է շարժւին տեղից, իսկ եթէ տիկին է եկողը, բոլորը միասին պէտք ոտքի կանգնեն:

Զգուշացիր, որ այցելութեան ժամանակ ժամացոյցի չնայես կամ ժամը քանիսը լինելը չհարցնես. չլինի թէ գետնին թքես, այլ թաշկինակդ գործածիր:

Ներս որ մտար՝ գլխարկդ աթոռի կամ սեղանի վրայ դնելը մեծ ամօթ է, անկողնի վերայ դնելը աւելի ևս ամօթ է: ուստի կամ պէտք է վերարկուիդ հետ մօտի սենեակը թողնես, կամ ձեռքդ բռնած պահես, եթէ ասեն վար դիր, այն ժամանակ կարող ես դնել:

Ոտք ոտքի վերայ դրած նստելը մարդավարութիւն չէ, ոտքը երկարացնելը աւելի ևս անքաղաքավարութիւն է:

Տիկինները երբէք պարտաւոր չեն այցելութեան եկողին ոտքի կանգնելով ընդունել և ոչ էլ մինչև դուռը նրանց ճանապարհ դնել:

Եթէ դահլիճի մէջ տիկիններ կան, երիտասարդին վայել չէ թիկնաթոռի վերայ նստել. նաև վառարանի մօտ եղած աթոռը տարիքով կամ աստիճանով բարձր մարդկանց պէտք է թողնել:

Ցան մէջ եղած երեխաները պէտք է իրանց ծնողներին օգնեն այցելուներին ընդունելու ժամանակ, ավկնանց շալերն առնեն, նոցա աթոռ հրամցնեն, նոյնպէս պէտք է օգնեն նրանց ճանապարհ դցելու ժամանակ:

Ինչ ընկերութեան մէջ էլ որ լինիս, կնոջ առջև գլխարկ ծածկած նստելը մեծ ամօթ է:

Այցելուն երբ գնալու լինի, մինչև դուռը հետը պիտի գնաս և դուռը բանաս. իսկ եթէ գնացողը կին է կամ ծերունի, մինչև սանդուխտների գլուխը ճանապարհ դնելը աւելի լաւ է: Դռնից դուրս դրուած բերոցի կամ խսրի վրայ ոտնամաններդ մաքրելը չմոռանաս. չլինի թէ ցեխոտ ոտներով դահլիճ մանես:

Դահլիճի մէջ եղած կահկարասիների վերայ շարունակ նայելուց զգուշացիր, թէ չէ այն տպաւորութիւնը կթողնես, որ իբրև եկել ես այդ բաները փողով գնելու:

Այցելութեան ժամանակ ձեռնոցներդ չպիտի հանես. իսկ ձեռքով, գլխարկիդ մազերը ուղղելը կամ մաքրելը անքաղաքավարի մարդկանց պիտի թողնես:

Երբ որ մէկը դահլիճ մանի, պէտք է որ տան տէրը ոտքի կանգնի. միայն գրասեղանի առաջև նստած մարդը, որ աշխատութեամբ է զբաղւած՝ ազատ է այս պարտքից:



Սաթթար Խան

(Տես երես 219)

«ՇԻՐԱԿ» 1909 թ.

# XXIII. ԱՇԽԱՏԱՆՔ և ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ

## ԾԵՐ ՄՇԱԿԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԵՐԻՏԱՍԱՐԴԻՆ

*Մի մոռանաք, որ* ժամանակը արժաք է, *այն մարդը, որ միջոց ունի աշխատելու օրական երեք րուբլի, նա օրւայ կէսը պարապութեան մէջ է անցկացնում, թէ այդ միջոցում գուցէ նա մի քանի կոպէկից աւել չէ ծախսել, անկասկած նա իրանից գոհ կլինի, որ խոհեմաբար է վարւել, բայց նա մոռանում է, որ չափազանց շատ բան է կորցրել—մի քանի ազատ ժամեր, որոնց միջոցում նա կարող էր աշխատել մէկ ու կէս րուբլի։*

*Մի մոռանաք նոյնպէս,* հաւատարմութիւնը եւս արժաք է։ *Եթէ ձեր պարտատէրը յետաձգում է ձեր պարտքերի վճարման ժամանակը, նա դրանով ձեզ միջոց չի տալիս, որ օգուտ քաղէք նրանից. նա ինքը ի նկատի ունի իր օգուտը—տոկոսը։ Այն մարդը միայն կարող է փող աշխատել, որը մեծ կարողութիւն և համարումն ունի, միևնոյն ժամանակ և խոհեմութեամբ է բանեցընում։ Ի նկատի ունեցէք, որ փողը մի առանձին յատկութիւն ունի—ինքն իրան շատանալ։ Փողը խոհեմաբար բանեցնելով աշխատում է դարձեալ փող, տոկոսով տալով բերում է տոկոս և այսպէս նա շուտով շատանում է։ Որքան դէպի անտառե*

խորքը գնաս, այնքան փայտերը կը շատանան։

Այս կերպ գործ դրած մի րուբլին դառնում է տասն րուբլի և անդադար աւելացնելով տոկոսը իրար վրայ, մի ժամանակից յետոյ կը դառնայ հարիւրներ։ Քանի որ այս կերպով մեր փողերը իրար վերայ աւելացնելով գործ դնենք, նրանց շուտով կբազմապատկենք և մեծ օգուտ կը ստանանք։ Եթէ մէկը մորթում է յղի խոզը, նա ոչնչացնում է և նրանից ծնուելու բոլոր ձագերը։— Ով շռայլաբար ծախսում է դիցուք մի ոսկի, նա կորցնում է այն բոլոր օգուտը, որ կարող էր ստանալ նրանից՝ մինչև անգամ հարիւր ոսկի. մտածեցէք, որ եթէ օրական յետ ձգելու լինենք 15 կոպ. կարող էք տարւայ վերջում ունենալ 50 րուբլուց աւելի։ Այսպիսի չնչին գումարներ մենք շատ անգամ անտեղի կորցնում ենք։ Ամեն մարդ, որ փոքր ի շատէ կարողութիւն ունի, նա միշտ հազար րուբլի դրամագլուխը 5% կամ 6% տոկ. տալ։ Ի հարկէ չի կարելի ամեն մարդու խորհուրդ տալ այս անելու, քանի որ գործունեայ մարդու ձեռքին այդքան գումարը կարող է հրաշքներ գործել։

Այն մարդը, որ բարեխղճաբար է վարում իր վարկը (довѣрія) չի կորցնում, նա կարող է իւրաքանչիւր դիպուածում համարձակ դիմել իր ծանօթներին և բարեկամներին, նրանցից նիւթա-



կան օգնութիւն խնդրելու, եթէ հարկաւոր լինի, բոլորն էլ մեծ ուրախութեամբ կօգնեն նրան, քանի որ նրա ճշմարտութիւնը ճանաչում են—իմ կարծիքով սա փոքր բան չէ։—Տնտեսական աշխատանքից և խնայողութիւնից յետոյ ամենագըլխաւոր տեղը բռնում է ճշտութիւնը. ոչինչ բան այնքան օգուտ չի կարող տալ մարդուս և այնքան նրա համբաւը չի բարձրացնիլ, որքան տըւած խօսքը ճշտութեամբ կատարելը,—ճշտութիւն և ազնւութիւն ունեցէք ամեն գործում։ Եթէ դուք որոշել էք ձեր պարտքի վճարելու ժամանակը, մի ժամ անգամ մի ուշացնէք, եթէ ոչ ձեր բարեկամների գրպանը միշտ դատարկ կգտնէք ձեզ համար, կամ աւելի լաւ է ասել՝ կը կորցնէք ձեր համբաւը նրանց առջև, ձեր երկրորդ խնդրին բացասական պատասխան կստանաք։ Առևտրական գործերում ամենափոքր հանգամանքներին հարկաւոր է ուշադրութիւն դարձնել։ Երբ ձեր պարտատէրը տեսնի ձեզ միշտ պարապմունքի մէջ, անհոգ կլինի և մի քանի ամիս էլ աւելի կսպասէ, յուսալով, որ անպատճառ կստանայ։ Բայց եթէ նա տեսնի ձեզ թուղթ խաղալիս, կամ ձեր ձայնը լսէ գինետնից, և այն այնպիսի ժամանակ՝ երբ դուք պէտք է պարապէիք ձեր գործերով, նա վաղը իսկոյն կգայ ձեզ մօտ և կպահանջէ իւր փողերը։ Ձեր նոր սկսած գործերում, մանաւանդ

որոնց մասին քիչ տեղեկութիւն ունէք, շատ ըզգուշութեամբ վարուեցէք, սրանից կարելի է եզրակացնել, թէ որքան ճիշտ և ազնիւ կը լինէք ձեր ապագայ գործունէութեան ասպարէզում, հակառակ դէպքում ձեր պարտատէրերն էլ չեն հաւատայ ձեր խօսքերին և սրանով կը կտրուի ձեր վարկը։

Մի սխալուէք և մի շլանաք շատ միամիտ մարդկանց նման, թէ այն բոլոր ապրանքը կամ փողը որ ուրիշները ձեզ հաւատ ընծայելով տուել են, ձեզ է պատկանում և անհեռատեսութեամբ շռայլաբար մի ծախսէք։ Որպէսզի այսպիսի սխալանքի մէջ չընկնէք, գրեցէք ձեր բոլոր մուտքն ու ելքը, այն ժամանակ բոլորը ձեզ ճիշտ յայտնի լինելուց յետոյ, ձեզ իրաւունք չէք տայ աւելորդ ծախսեր անելու. որքան պակասեցնէք ծախսերի թիւը, այնքան կաւելացնէք ձեր մուտքը և հետեւաբար կազատուէք չքաւորութիւնից։

Այս ընթացքը բռնելով՝ դուք կգտնէք ձեզ համար հարստանալու ամենահաստատ ճանապարհը.—բոլորը բովանդակւում է երկու խօսքի մէջ— աշխատանք եւ խնայողութեան։ Մի վատնէք ոչ ժամանակը և ոչ փողը, բայց աշխատեցէք որքան կարելի է օգուտ քաղել թէ մէկից և թէ միւսից։ Առանց աշխատանքի և խնայողութեան դուք ինքներդ ձեզ կկորցնէք, իսկ ունենալով այդ երկուսը՝ աշխատանքը և խնայողութիւնը, կարող էք ձեզանից հեռացնել բոլոր անյաջողութիւնները։ Ով ազնիւ միջոցով որևէ բան է ձեռք բերում, ով խնայողութեամբ է ծախսեր անում, նա անպատճառ վաղ թէ ուշ կհարստանայ։



**Սուլիչ**։ Իմ կարծիքով, մենք շատ բաներում կարող էինք բարելաւել մեր կեանքը և հեշտութեամբ տանել մեզ պատահած անբախտութիւնները, եթէ միշտ մեր ամեն գործերում զգուշութեամբ վարուէինք և թանգ չվճարէինք մեր սուլիչի համար, որովհետև եթէ շատերը դժբախտանում են, այդ իրանց անուշադրութիւնից և անկանոն կեանք վարելուցն է։ Դուք ի հարկէ ինձ կհարցնէք, թէ սրանով ես ինչ եմ ուզում ասել։ Ես այս րոպէիս ձեզ կբացատրեմ՝ պատմելով մի անցք այս սուլիչի մասին, որը պատահել է ինձ հետ։ Մէկ տօն օր, երբ դեռ ես 5—6 տարեկան էի, իմ բարեկամներս ինձ բաւականին փող նուիրեցին։ Ես հէնց նոյն րոպէին շտապեցի դէպի խաղալիկ ծախողի խանութը, բայց ճանապարհին ինձ պատահեց մի երեխայ, որը սուլիչ էր ծախում. Նրա սուլիչի ձայնը այնքան ինձ ախորժելի թւաց, որ ես վճարեցի նրան իմ ունեցած բոլոր փողերս, մինչև վերջին կոպէկն անգամ։ Ուրախացած յետ վազեցի տուն և սկսեցի անընդհատ սուլել, այնքան, որ շատ զզւացրի մեր ըն-

նեցոց։ Եղբայրներս և քույրերս իմանալով, որ ես
այդ անպիտան խաղալիկի համար վճարել եմ իմ
բոլոր փողերս, հաւատացրին ինձ, որ ես խաբ-
ւել եմ, իմ վճարած փողերը տասն անգամ աւելի
էր սուլիչի արժողութիւնից։ Այս բանը ինձ սաս-
տիկ ղայրացրեց. մանաւանդ երբ ինձ հասկացրին
որ եթէ ես չը շտապէի և այնքան անզգոյշ չը
վարուէի, այնքան փողով ես կարող էի շատ խա
ղալիկներ առնել. բացի սրանից բոլորն էլ ինձ
վերայ ծիծաղում էին, իսկ ես բարկութիւնից լաց
էի լինում. այս բանը ինձ սաստիկ տխրութիւն
պատճառեց քան թէ զւարճութիւն։ Այս հանգա-
մանքը ինքն ըստ ինքեան մի չնչին բան է, բայց
այնպէս մեծ ներգործութիւն արեց ինձ վերայ և
այնպիսի մեծ օգուտներ տւեց, որ նրանից յետոյ
երբ ես ցանկանում էի այնպիսի մի չնչին բան
առնել, իսկոյն յիշում էի այս անցքը, ասելով
ինքս ինձ՝ «ես շատ չեմ վճարիլ սուլիչի համար»
և այսպէս պահում էի ձեռքս ընկած փողերը։
Հասնելով երիտասարդական հասակիս և
կեանքի ասպարէզ մտնելով, ես սկսեցի ուշադ-
րութեամբ նկատել մարդկանց բռնած գործերը...
ես անդադար պատահում էի այնպիսի մարդկանց,
որոնք թանգ էին վճարում մի սուլիչի համար։
Պատահելով շատ անգամ այնպիսի մարդկանց,
որոնք ձգտում էին հասնելու մի բարձր պաշտօ-



նի և սրա համար զոհում էին իրանց ժամանա-
կը, ազատութիւնը և մինչև անգամ իրենց բարե-
կամներին, ես ինքս միշտ մտածում էի,—«այս
մարդը թանգ է վճարում իր սուլիչի համար»։
Երբ մի ուրիշը մտնելով շռայլութեամբ պա-
րապող մի խմբի մէջ, նրանց հետ խօսում ու ժա-
մանակ էր կորցնում, միևնոյն ժամանակ մոռա-
նում էր իր սեփական գործերը, ես ասում էի,—
«սա նոյնպէս թանգ է վճարում իւր սուլիչին»։
Մի ուրիշ անգամ պատահելով մի ժլատի, որը
զրկում էր իրեն ամենահարկաւոր բաներից, ա-
մեն ուրախութիւններից հեռանում էր ժլատու-
թեան պատճառով. ոչ ծանօթ ունէր և ոչ բարե-
կամ, և այս նրա համար, որ միայն փող ժողո-
վէ, «խեղճ մարդ» ասում էի ես, «դու և թանգ
ես վճարում քո սուլիչին»։
Երբ պատահմամբ հանդիպում էի մի մարդու,
որ ուշադրութիւն չը դարձնելով իւր առողջա-
պահական կանոնների վրայ, հետևում էր միայն
զգայական զւարճութիւններին և որը խղճի ազ-
նիւ զգացմունքները թողած, չէր հոգում իր բա-
րեկեցութեան համար, «մեծ է քո սխալը» ասու-
էի ես այն ժամանակը, «դու ուրախութեան փո-
խանակ դժբախտութիւն ես ստանում և նոյնպէս
թանգ վճարում քո սուլիչին»։
Երբ ինձ պատահում էր տեսնել մի գեղեցիկ

համեստ ու խելօք աղջիկ, որի ճակատագիրը ձրգել էր նրան մի խելառ և աղէտ մարդու ձեռք, և նա իր կոպիտ ու անքաղաքավարի վարմունքով ամեն րոպէ տանջում էր նրան. «Ինչքան ցաւալի է», ասում էի ես, «այս խեղճ աղջիկը նոյնպէս թանգ վճարեց իր սուլիչին»։

Վերջապէս ես համոզուեցի, որ մարդկանց դժբաղդութիւնների ամենամեծ մասը ծագում է նրանից, որ մենք իրականապէս չենք նայում գործին և մի չնչին սուլիչի համար ահագին գներ ենք վճարում։

Այնուամենայնիւ, ես գրում եմ, որ այդպիսի մարդկանց հարկաւոր է կարեկից լինել և չընայելով այն բոլոր հեշտ միջոցներին, որ ես բաղդ ունեցայ ձեզ առաջարկելու, կան և երկրիս վրայ այն աստիճան դայթակղեցուցիչ բաներ, որ եթէ նրանք էլ աճրդախօսութեամբ ծախուէին, շատ կարելի է որ ես ևս ընկնէի այդ փորձանքի մէջ և իմ կեանքում մի անգամ էլ թանգ վճարէի որևիցէ մի սուլիչի...



# XXIV. ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ

## ՊԱՐՍԻՑ ՇԱՀԻ ՊԱԼԱՏԸ

Պարսկաստանում տեղի ունեցած վերջին դէպքերը առանձին ուշադրութիւն են գրաւում այս երկրի առանձնայատուկ կեանքի ու սովորութիւնների վերայ։ Բայց ամենահետաքրքրականը ներկայացնում է շահի պալատը։

Պարսից շահի իսկական մայրաքաղաքը ոչ թէ Թէհրանն է, այլ Արկ կոչւած տեղը, ուր տեղաւորւած է և շահի պալատը։ Այնտեղ կան մօտ 1000 մարդիկ ամենաբարձր պաշտօնեաներից մինչև անձեռոցիկների պահապանները։

Արկի կենտրոնում տեղաւորւած է Վարդ այգին (Գիւլստան) ներկայացնում է ծաղիկների հրաշալիքներ։ Նրա շուրջը յախճապակեայ պատեր են. հազւագիւտ ծառերը լցնում են նրան զովութեամբ։ Նրա հողը կազմում է ինչպէս գորգ ամենահրաշալի ծաղիկներից։ Շատրւաններն ու աւազանները սկիզբն են առնում բիւրեղային ջրերից։ Ամբողջ այգին ներկայացնում է մի հրախաղ։ Ըստ հնդկական սովորութեան այգու գանազան մասերում առաւօտից մինչև երեկոյ հնչում է երաժշտութիւնը։

Ամեն անգամ այս կանաչների և ծաղիկների

ծովի մէջ դուրս է գալիս պարսից շահը, ուղեկցութեամբ իր փայլուն շքախմբի, որն հեռանում է միմիայն երբ շահը մօտենում է անդերունի չէմքին: Անդերունը շահի հարեմն է։ Ոչ մի տղամարդ բացի շահից ու նրա ներքինիներից ոտք չէ դրել շահի կանանց՝ այդ ամբողջ աշխարհին անյայտ կացարանը: Այնտեղ գտնւում են մօտ 1000 կին, որոնք կազմում են մի բարդ պետութիւն: Շահը սովոր է բոլորին պաշտօններ տալ, այստեղ է մեծ կառավարչուհին, մեծ գանձապետուհին, և այլն:

Չնայելով իր պալատական ահագին շքախմբին, նա ճաշում է միայն մի քանի արտօնեալների հետ: Բոլոր կերակուրները ծառաները շարքով իրար ետևից բերում և դարսում են սեղանի վերայ: Շահի ճաշելուց յետոյ՝ աստիճանաբար ըստ իրենց աստիճանի ճաշում են պալատականները: Շահի ընդունելութիւնը լի է շլացուցիչ փայլով։ Նա նստում է գահի վերայ իր ադամանդազարդ զգեստով։ Նրա ուսադիրները և տունիկան փայլատակում են կապոյտ եաղուտից, սափիրի և զանազան թանկագին քարերից, իսկ ճակատի վերայ է հռչակաւոր ադամանդը, որը աշխարհիս ամենամեծն է համարւում և կոչւում է «լոյսի սար»:

Թէև շահի գանձարանը միշտ դատարկ է,



բայց թանկագին քարերի, արժէքաւոր կտորների, հնութիւնների հարստութիւնը լցնում է պալատը։ Առանձնապէս աչքի է ընկնում աշխարհի քարտէզը, որը շինած է զուտ ոսկուց, որի վերայ ամեն մի երկիր նշանակւած է թանկագին քարերով, իսկ Պարսկաստանն ու Թէհրանը խոշոր ադամանդներով։ Բայց աչքի է ընկնում մեծ Մողոլի հռչակաւոր գիրքը, որի երեսների շրջագծերի ծաղկանկարները ամրացրած ադամանդ և թանկագին քարեր են ու գիրքը կոչւում է «ոսկու գահ» և գնահատւում է մօտ 75—80 միլ․ րուբլի։

Շահի ամենասիրելի զբաղմունքը որսն է։

## ՄԱՐՕԿԿՕԻ ՍՈՒԼԹԱՆԸ

Ներկայումս Մարօկկօի Աբդիւլ-Ազիզ սուլթանը ոչ միայն զրկւած է իր քաղաքական իշխանութիւնից, այլ և դեռ իր բոլոր հարստութիւնից։ Ոչ միայն նրա հօր թողած ահագին կարողութիւնը, այլև եղած թանկագին քարերն ու զարդերը գրաւ են դրւած Փարիզի լոմբարդներում։ Իսկ այժմ, իր այդ ծանր րոպէներին ինչո՞վ է արդեօք զւարճանում սուլթանը։ Ամենից շատ նա հրճւում է իր ամենագեղեցիկ ութը հար-

ճերի ատամներով։ Այս բանը սուլթանի համար տարօրինակ չէ, բանը նրանումն է, որ հարճերի ատամների մէջ մի բան կայ ուշադրութեան արժանի։ Սուլթանի ունեցած արժէքաւոր իրերի թւում կան հազւագիւտ ջուր ու փայլ ունեցող 6 բրլիանտներ, որոնք սուլթանի ցանկութեամբ թաղած են իր հարեմի 8 կանանց ատամների մէջ։ Երբ որ նրանք ժպտում են, նրանց ատամները արձակում են շլացուցիչ փայլ։ Այս բանը բաւական մխիթարում է սուլթանին իր անյաջողութեան ժամին և նա ստիպում է կանանց օրական մի քանի անգամ ժպտալ։ Բայց դրանից նա այդ անում է և ստուգելու համար, թէ բոլոր բրլիանտները իրենց անգ՞ում են, թէ ոչ. քանի որ նրա միակ հարստութիւնը այդ քարերն են կազմում։

Աբդիւլ-Ազիզի երկրորդ սիրելի տաւրկան նրա հրաշալի Նժոյգն է, դեղին սաթի գոյնի, բարակ Նուրբ բաշով, որոնք մարգարտաշար թելերի հետ թափւում են պարանոցի վերայ։ Ձիապանները կարող են մօտենալ այդ հեքիաթային նժոյգին միմիայն սպիտակ ձեռնոցներով, և այն օրական երկու անգամ փոխելուց յետոյ։

---



## ՄԱՐԴՈՒ ԱՐԺԷՔԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ՃՈՐՏՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ

1780 թ. «Москов. Вѣдомости» լրագրում տպւած է հետևեալ յայտարարութիւնը։

«Ծախւում է 17 տարեկան մի խոհարար, 2 արշ. 2½ վերշոկ բոյը, գինն է 6000 ռուբլի։ Տեսնել կարելի է պ. Ալէքսէեվի մօտ, Սպասսկի դեկտատան կողքին։

«Մի տիկնոջ մօտ վաճառւում է Արաբկա անունով մի շնիկ. և երկու աղջիկներ, որոնք պէտք կգան ամեն տեսակ գործի»։

«Զուբովի քաղաքամասի 13 բաժնում № 354 տան մէջ ծախւում է մարդկանց մի ընտանիք. մարդը 26 տարեկան, կինը 32, տղան 2, և մի աղջիկը, 17 տարեկան. Նոյն տեղում ծախւում է ամենալաւ ֆրանսիական տրաղ, վերջոն 9 ր. ցանկացողները կարող են փորձի համար գնել շափը 1 ր. 19 կ.»

«Ծախւում է անգլիական ձի, և երկու աղջիկներ Լեոնգեվեան փողոցում, տիկին Նատիշջի մօտ։ Նոյն տեղը ծախւում է անգլիական կինի մի կով»։

Հարիւրից քիչ աւելի տարի է անցել այդ ժամանակից, և մենք դժւարանում ենք հաւատալ, որ այս բոլորը հանաք չէ։

## ՉԻՆԱԿԱՆ ՄԱՐՍԵԼԻԵԶ

«Օ՜, ազատութիւն, դու երկնքի նուէրներից մէկն ես, խաղաղութեան հետ դու այս երկրի վերայ կիրականացնես տաս հազար նոր հրաշքներ։ Կառքի փոխարէն՝ ամպերի վրայ, և ուղեկցի փոխարէն՝ քամու հետ, դու պիտի գաս իշխելու մեր երկրի վրայ, և խղճալով մեր ստրկութեան մռայլ դժոխքը՝ պայծառացնես մեր կեանքը տևևի, գէթ մի ճառագայթով։

«Օ, սպիտակ Եւրոպա, դու իսկապէս երկնքի սիրասուն աղջիկն ես։ Հաց ու գինին ունիս դու առատօրէն։ Իսկ իմ առաջը—միայն հայրենիքիս դժբախտութիւններն եմ տեսնում, իմ եղբայրները—ստրուկներ են։

«Քամին փայփայում է լռութիւնը, ցօղը փայլում է, ծաղիկները բուրում են։ Բայց ժողովրդի տանջանքները մոռանալ անկարող եմ ես։ Աւա՜ղ, մեռել է ազատութիւնը։ Մեծ Ասիան—մի մեծ անապատ է դարձել։

«Քսաներորդ դարում բոլորն էլ պիտի աշխատեն՝ նոր դարաշրջան ստեղծելու։ Թող էլ միաբերան պահանջեն երկնքի ու երկրի վերստեղծութիւնը։ Վաշինգտոն և Նապոլէօն, դուք ազատութեան երկու որդիներդ, յարութիւն առէք մեր հայրենիքում։ Մեր նախահայր Նին-Իւն, կառավարիր մեզ։



## ԳՐՔԵՐԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Բաբելոնի թագաւոր Նաբուգոդոնոսորի մասին պատմում են, որ իր թագաւորութեան փառքը բարձրացրած լինելու համար, ոչնչացնում է իր թագաւորութեան մէջ եղած բոլոր գրքերը, որով անցեալ պատմութեան մասին ոչինչ չէր մնայ և պատմութիւնը կսկսուէր միմիայն իրանով։ Նոյն տեսակ վարուեց և չինական կայսր Չե-Խըվանդ-Տէ, որը անյայտ պատճառով ոչնչացրեց իր պետութեան մէջ եղած բոլոր գրքերը։ Մեծ Գրիգոր պապը հրամայեց այրել անթիքայ գրականութեան ամբողջ գրադարանը, որ իր քրիստոնեայ հօտը ուղիղ ճանապարհով առաջնորդուի։ Բիւզանդիոյ Լևոն թագաւորը այրեց Կ. Պօլսի ամենալաւ գրադարանը։ Կարդինալ Կղեմենէս հրամայեց այրել Իսպանիայում 5000 կտոր գիրք, գլխաւորապէս չքեղ և Ղուրանի թանկագին հատորներ։ Մաքսիմիլիանոս կայսրը նոյն խաղը խաղաց հրէական բազմաթիւ գրքերի հետ։ Օքսֆորդի յայտնի գրադարանը ոչնչացուած է Կրոմֆէլի ժամանակ։ Պատկերամարտներից մէկը Դոուսինգ, որ նոյնպէս ոչնչացրեց շատ սրբերի պատկերներ, այլ և հանդիսաւոր իրգեցողութեամբ կրակին տուեց թանկագին ձեռագիր։ Կ. Պօլսի առման ժամանակ սուլթան Մահմէդ 2-դ այրեց աւելի քան 120,000 մանուսկրիպտ։

## ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԶՕՐՔԸ

Ամերիկական զօրքը բաղկացած է մօտ ամբողջովին կամաւորներից, բայց և այնպէս ամերիկացիները հպարտութեամբ են համեմատում իրենց փոքրաթիւ զօրքը եւրոպական պետութիւնների բանակների հետ։ Զօրքի քանակութեամբ Հիւսիս-Ամերիկայի Միացեալ Նահանգները յետ են մնացած միւս բոլոր պետութիւններից. «Զօրքի թւով մենք վերջինն ենք, բայց մենք առաջինն ենք օգտակար աշխատանքով և հայրասիրութեամբ» ասում են ամերիկացիները։

Սակայն իւրաքանչիւր ամերիկական քաղաքացի իր պարտքն է համարում զէնք վերցնել և դուրս գալ հայրենիքի պաշտպանութեան համար, երբ նա ենթարկւում է վտանգի։ Սրա համար իւրաքանչիւր ամերիկացի մանուկ փոքր հասակից սովորում է զէնք գործածել։ Երեխաները դպրոցներում կազմակերպում են զինուորական խմբեր և հրաւիրում են վարժեցնելու զինուորական արւեստին ծանօթ որեւէ անձի։ Շաբաթը երկու անգամ մի ժամ, նրանք պարապում են զինուորական վարժութիւններով.քայլափոխութեամբ,(маршировка) հրացանի գործածութեամբ և սրախաղութեամբ (фехтованіемъ) և ամեն տարի ամառը գնում են որեւէ զօրաբանակ, առաւելապէս ծովափ և այն-



տեղ վարժւում են հրացանաձգութեամբ և լողանալուն։

Միացեալ Նահանգներում զէնքի վաճառումն և կրելը օրէնքով չեն արգելւում և իւրաքանչիւր քաղաքացի կարող է ունենալ զէնք, միայն թէ դա յայտնի լինի, հակառակ դէպքում նա կվճարէ տուգանք։

Զինուորական ծառայութեան ընդունակ բոլոր ամերիկա քաղաքացիները, նմանապէս այն նորեկները, որոնք ցանկութիւն են յայտնել դառնալ ամերիկա քաղաքացիներ, 18—45 տարեկան հասակում գրւում են միլիցիայի մէջ։ Միլիցիօնէրական ծառայութիւնից ազատւում են պետական ծառայութեան մէջ գտնւողները, երկաթուղու ծառայողները, նմանապէս և այն մարդիկ, որոնց կրօնական համոզմունքները թոյլ չեն տալիս պատերազմել և կամ ծառայել զինուորական հիմնարկութիւններում։

Միլիցիան լինում է կազմակերպւած և չկազմակերպւած։ Առաջինում գտնւում են այնպիսի մարդիկ, որոնք յօժարակամ համաձայնել են 5 տարի ծառայել։ Սրա համար նրանք պիտի ժողովեն տարեկան ոչ պակաս 24 անգամից սովորելու համար և բացի այդ ամեն տարի հինգ օր պիտի անցկացնեն լագէրում։

Միլիցիօնէրները կազմելով ուրոյն զօրաբա-

նակով խմբեր, ռոճիկ ստանում են միայն այն ժամանակ, երբ նրանք մասնակցում են պատերազմի։ Իսկ մշտական զօրքը (ընդամենը 30,000) որը ցրուած է Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների ընդարձակ տարածութեան վրայ, բաղկացած է միմիայն կամաւոր վարձուած զինուորներից։

Երբ միլիցիոնները կոչւում է ծառայութեան, սովորաբար հայրենի երկրում ծառայում է իր երկրացիների հետ։ Հասկանալի է, որ սա վերաբերում է միայն խաղաղ ժամանակին։ Պատերազմի միջոցին այլ կերպ է գործը։

Պիմէնով



## ՎԵՐՋԻՆ ՎԱՅՐԿԵԱՆՆԵՐ

Մաթեմատիկոս Լանեի անձայն մեռնում էր։ Սգաւոր ընտանիքը մի խօսք անգամ չէր կարող իմանալ նրա բերանից։ Մօբէրտուիս հարցրեց։

— Ինչպէ՞ս է։

— Աւա՜ղ, ոչ լսում է, ոչ էլ պատասխան է տալիս։

— Կացէք, ասաց Մօբէրտուիս, ես իսկոյն կը խօսեցնեմ նրան։

Եւ դառնալով հիւանդին ասաց.

— Պարոն դը-Լանեի տասներկուսի քառակուսի՞ն։

— Հարիւր քառասունըչորս, պատասխանեց Մաթեմատիկոսն ու մեռաւ։

—

Հալլէր բուսաբանը ձեռքով բազուկները բռնած իր մահն էր ուսումնասիրում։

— Զարկերակը խփում է... դեռ խփում է, էլ չի խփում՝

Ու հոգին տւեց։

—

Լանգարտ, դիմանկարիչը, որ հիւանդանոցի մէջ մեռաւ, ուրախ զւարթ էր։ Քահանան երբ վերջին օծումն էր տալիս, գովում էր նրան իր վայելելիք յաւիտենական երջանկութիւնները.«Որ-

դիս, քիչ յետոյ պէտք է գնաս ու դէմ առ դէմ պիտի տեսնես Աստծուն մինչև յաւիտեան»։

—«Վա՜յ, պատասխանեց նկարիչը, միշտ դէմքից պիտի տեսնեմ, ու երբէք կիսադէմքից»։

—

Մի վաշխառու հոգեվարքի մէջ էր։ Քահանան արծաթէ խաչելութիւնը ներկայացրեց։ Հիւանդը ձեռքը առաւ, կշռեց ու եզրակացրեց.

—Տէրտէր, նիրի՛ր որ մեծ բան չեմ կարող փոխ տալ սրա վրայ»։ Ու ոտները երկարացրեց։

—

Տիկին Տուպլէ իր քահանային գանգատւեց.

Զգոյշ եղէք մի քիչ տէր հայր, ասաց, որովհետև տէր հայրը անզգոյշ շարժումով նրա երեսի կարմիր ներկը թափել էր. և մտածեցէք որ Տիկին Տուպլէ 94 տարեկան էր և երկու վայրկեանից մեռաւ.

—

Կասէնդի, վերջին սրամտութիւնն անելով մեռաւ.

—Ծնայ առանց գիտենալու թէ ինչու, ապրեցի առանց գիտենալու թէ ինչպէս, և կը գնամ առանց գիտենալու թէ ինչպէսը և թէ ինչուն։

—

Ս. Դիւմայի մայրը նրա գլխու վերևը նստած հսկում էր և աշխատում փոքր ինչ մխիթարու-



թիւն ներշնչել նրան։ Դիւման մեղմով դիտում էր արևի այն գեղեցիկ ճառագայթը, որ բնութեան առաջին ժպիտն է կարծես ու բռնելով մօր ձեռքը ասաց.

—Սիրելի մայր, մենք ինքներս մեզ կը խաբենք, մի՛ ջուրը վար չի գնում, ջուրը վար չի գնում, կաթը վար չի գնում, պէտք է ուրեմն որ ես գնամ։

—

Լուի XIV-ի սիրելի զբաղմունքներից մէկն էր իր Լա Ռօշ-Գիյեօն բարեկամին մեռելների ծամածութիւնները ընդօրինակել տալը։ Լա Ռօշ-Գիյեօն մեռնելու վայրկեանին, քաջութիւն ունեցաւ իր արքայական այցելուին ասելու.

—Շատ անգամ օգնեցի ձեզ ուրիշների նմանութիւնը անելու ու ահաւասիկ կարգը ինձ եկաւ, լաւ նայեցէք երեսիս. տէր արքայ, սրանից աւելի լաւ ոչ մի ժամանակ չը պիտի կարողանամ յարմարացնել։

—

Օգոստոս Հռոմայեցին, զգալով որ վախճանը մօտ է, մի հայելի ուզեց, մազերը յարդարել տւեց և խնդրելով իր բարեկամներին ասաց.

—Լաւ կատակերգու չե՞մ։

Այս Գէօթէի նշանաւոր խօսքը մեռած վայրկեանին արտասանեց.

—Միչա աւելի լոյս... ու մեռաւ:

—

Նշանաւոր Արէթէն, որի գանկը բացել էր աթոռին դիպչելով, վերջին օծումը ընդունելուց յետոյ խելագարի պէս գոռալ սկսեց.

—«Պաշտպանեցէք ինձ մկներից, հիմա որ իւղոտեցին ինձ»:

—

Ռապլէ էլ նոյն կատակը արաւ, վերջին օծումը ընդունելուց յետոյ—ասաց—«Լրացաւ վերջապէս, կօշիկներս իւղոտեցին մեծ ճամբորդութեան համար: Աստուած աչքիս առջև է գալիս Երուսաղէմ մտած օրւայ ձևով, յաղթական էշ հեծած»:

Մի վայրկեան յետոյ աւելացրեց

Կոպէկ չունիմ, շատերին էլ պարտք ունիմ. մնացածներն էլ աղքատներին կտամ»:

Յետոյ ծիծաղից թուլանալով ասաց. «Քաշեցէք վարագոյրը, կատակախաղը վերջացաւ:

—

Ալֆէրտ դը Վինէի գեղեցիկ ու խորհրդաւոր բանաստեղծը ասաց մեռած վայրկեանին.

—Վերջին դատաստանի օրը այն պիտի լինի, երբ Աստուած ներողութիւն պիտի խնդրէ մահից կեանքը ստեղծած լինելու համար·

Ն. Պ.



# XXVI. ԶՒԱՐՃԱԼԻՔ

## ԳԼԽԱՓՈԽ

Ես շատ քաղցր եմ և ում մօտ գալիս եմ—հանգստացնում եմ: Փոխեցէք գլուխս ու մի հրաշքով կը սկսեմ աւազակներից պահպանել. փոխեցէք էլի գլուխս՝ կը սկսեմ նրան փոթորկից և վատ եղանակից պահպանել. էլի մէկ անգամ նոր գլուխ տուէք ու թևաւորներին կսկսեմ պահպանել:

---

## ՇԻՇԵՐԻ ԽՆԴԻՐ

Մի պարոն գինու համար շինել էր տուել մի քառակուսի արկղ, որ բաժանւած էր ինը մասերի, միջինը թողել էր դատարկ շիշերի համար, իսկ 60 լիք շիշերը տեղաւորել էր մնացած ութը բաժանմունքների մէջ, այնպէս որ անկիւնի բաժանմունքներում վեց-վեց հատ էր, իսկ միջիններում ինը-ինը:

| | | |
|---|---|---|
| 6 | 9 | 6 |
| 9 | | 9 |
| 6 | 9 | 6 |

Ծառան գողացաւ և ծախեց նախ չորս շիշ, իսկ մնացածները տեղաւորեցրեց այնպէս, որ ամէն կողմի երեք բաժանմունքների մէջ այնուամենայնիւ 21 շիշ էր։ Տանտէրը այդ տեղափոխութիւնը նկատեց, բայց ամէն կողմից հաշւելով և կրկին 21 ական գտնելով, կարծեց թէ շշերի թիւր նոյնն է մնացել։ Ծառան օգտւեց տիրոջ միամտութիւնից ու էլի չորս շիշ գողացաւ և կրկին այնպէս դասաւորեց շշերը, որ քառակուսու ամէն կողմում 21 շիշ էր։ Այսպէս նա մի քանի անգամ գողացաւ, մինչև որ անհնարին էր այլևս մնացած շշերը դասաւորել այնպէս, որ ամէն կողմում լինի 21։ Ի՞նչպէս էր նա տեղափոխում և քանի՞ շիշ կարողացաւ գողանալ։



Այս փոքրիկ քառանկիւնների մէջ գետեղեցէք մի-մի տառ այնպէս՝ որ ա տողում ստացւի մի



բառ, որ նշանակէ մի սարի անուն։
բ. տողում մատենագրի անուն։
գ. » Մի գոյական անուն, որ թռչունի շալիկն է։
դ. » Մի հրամայական բայ։
ե. » Եղջերաւոր կենդանիներ։
զ. » Երկու հրամ. եղանակով բայեր և-ով միացրած։
է. » Ցայտնի կաթողիկոսի անուն, այնպէս որ սկզբնատառերը եթէ վերևից ներքև կարդալու լինենք, ստացւի մի հայ վիպասանի ազգանունը, իսկ վերջին տառերը՝ նոյն հեղինակի անունը։

Մի կախարդական խօսք եմ ես երկու վանկանի։ Կուզես ամբողջ օրը կարդայ թէ աջից ձախ, թէ ձախից աջ, դարձեալ քեզ կասեն, որ անգործ ես։

Սենեակիդ մէջ թէ փողոցում,
Ամենուրէք ես լոյս եմ սփռում.
Բայց թէ անխիղճ վարւես հետս
Ու մի տառս պակասեցնես՝
Շատ կը խռովեմ ես քեզանից
Ու շատ հեռու կը փախչեմ։

| | | |
|---|---|---|
| 7 | 5 | 2 |
| 9 | 6 | 8 |
| 4 | 3 | 1 |

ՀԱՐՑԵՐ

Ա. ~~Որքա՞ն կապրեմ [illegible]~~:

Բ. ~~Հաւատա՞մ կնոջս~~:

Գ. ~~Հաւատա՞մ ամուսնոյս~~:

Դ. ~~Ե՞րբ բախտաւոր կը լինեմ~~:

Ե. ~~Ե՞րբ կը հասնեմ նպատակիս~~:

Զ. ~~Զինուոր կը գնա՞մ թէ ոչ~~:

Է. ~~Ի՞նչ պիտի լինի իմ վերջս~~:

Ը. ~~Ընտանեկան կեանքում բախտաւոր կլինե՞մ~~:

Թ. ~~Կհարստանա՞մ արդեօք~~:

Ժ. ~~[illegible] խորհում արդեօք նա ինձ~~:

ԲԱՆԱԼԻ

Ընտրեցէք հարցերից որը կամենաք և մտքներդ պահեցէք նրա ձախ կողմում գտնուած տառը։ Քառակուսիների մէջ մատով նշանակեցէք որ և է թւանշան (աւելի լաւ է աչքերդ խփած) ապա



պատասխանների մէջ գտէք մտքում պահած տառի համապատասխան սիւնեակը և այնտեղ կարդացէք ձեր նշանակած թւանշանի դէմ գրւած պատասխանը։

---

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ա.

1. Յոյսդ մի կտրիր, կունենաս։
2. Այնքան ունենաս, որ գլուխը մոլորւես։
3. Կունենաս, բայց քանիսը Աստուած գիտէ։
4. Բարեգործութիւն արա, որդի չես ունենայ։
5. Մի տղա և երկու աղջիկ։
6. Կունենաս 12 տղայ։
7. Կունենաս 12 աղջիկ բոլորն էլ տգեղ։
8. Ուշ է որդէն, առաջ պէտք է մտածէիր այդ մասին։
9. Մի տղայ և այն էլ շատ բախտաւոր։

Բ.

1. Լաւ կանես չը հաւատաս։
2. Հաւատա՛, նա սրտանց պաշտում է քեզ։
3. Մի՛ հաւատայ, կնոջ սիրտը օդաչափի պէս փոփոխական է։
4. Կուզես մի հաւատայ, նա որ մինչև հաւատացնում է քեզ։

А. МЯСНИКЯНА

5. Հաւատայ, նա աւելի անկեղծ է, քան դու։
6. Վայն եկաւ քեզ, երբ հաւատացիր։
7. Հաւատայ և երջանիկ կլինես։
8. Եթէ ուզում ես կեանքդ դառնացնել, հաւատայ
9. Հաւատայ, բայց ոչ ամեն դէպքում։

Գ.

1. Հաւատայ և չես փոշմանի։
2. Մի՛ հաւատայ։
3. Հաւատայ, նա սրտանց է քեզ սիրում։
4. Նա քեզ պիտի խաբէ. դու նրան, վա՛յ վերջը խաբուողին։
5. Եթէ ուզում ես որ կեանքդ դառնացնես․ հաւատայ։
6. Պարտական ես հաւատալու, յիշիր երդումդ։
7. Եթէ ասէ ձիւնը սպիտակ է, մի՛ հաւատայ։
8. Նա իր գործը գիտէ։ կուզես մի հաւատայ։
9. Մի հաւատայ։

Դ.

1. Մի տարի յետոյ, երբ գործիդ եղանակը կը փոխես։
2. Երբէք մի յուսայ։
3. Ով է կատարեալ բախտաւոր զոհ եղիր վիճակիդ։
4. Միայն քնածդ ժամանակ, երբ զարդ ու հոգս մոռացած կլինես։



5. Բախտաւոր լինելու համար հարկաւոր է առողջ միտք և ազնիւ սիրտ, ունիս այդ ամենը։
6. Ոչ երբէք և դրա պատճառը դու ես։
7. Համբերութիւն, համբերութիւն և մի միայն համբերութիւն։
8. Ո՞ր մահկանացուն այս երկրի վերայ երջանիկ ժամեր վայելել կընայ։
9. Երբ ամուսնացնես թոռներիդ։

Ե.

1. Երբ բնաւորութեանդ կոպտութիւնը թողնես։
2. Չես հասնի. ծանր տեղդ նստիր։
3. Երբ մի հարուստի հետ ամուսնանաս։
4. Յիշիր գիտնականի այն խօսքերը—«Ես կամենում էի, կամենում էին այնքան, մինչև որ հզօր դարձայ»։
5. Միայն դու չես, որ կես ճանապարհին կը մնաս։
6. Քեզանից է կախուած, կամեցիր և կհասնես։
7. Դրա համար խելք ու շնորհք է հարկաւոր, ունիս արդեօք։
8. Մի վախենար, առկուն եղիր։
9. Չես հասնի, մի էլ մտածիր։

Զ.

1. Չես գնայ։
2. Կը գնաս և այդ քեզ օգուտ է։

3. Կհանես բարձր №, բայց կըգնաս:
4. Չես կնայ. բարձր № հանելուդ համար:
5. Կգնաս, բայց պատւով յետ կը գաս:
6. Չես գնայ, շատ մի վախենայ:
7. Ես չգնամ, դու չգնաս, ապա ո՞վ պիտի գնայ:
8. Կհանես 2 №, բայց չես գնայ:
9. Չափդ պակաս է, չես գնայ:

### Է.

1. Շատ բախտաւոր կլինես:
2. Մեծ դժբախտութիւն կը պատահի:
3. Մեծ հարստութեան կտիրանաս:
4. Մեծ բարեգործ կդառնաս:
5. Որդւոցդ մօտ երջանիկ կապրես:
6. Հող էիր և ի հող պիտի դառնաս:
7. Ապագան ոչ ոքի յայտնի չէ:
8. Բարեգործութիւն արա, թէ չէ ամենաթըշ-ւառ օրի կմնաս:
9. Պառերի տակը պիտի մնաս:

### Ը.

1. Այո, և շատ բախտաւոր:
2. Ընտանեկան բախտաւորութիւնը քչերին է վիճակւած:
3. Այնքան բախտաւոր, որ օրը հազար անգամ մահ կը խնդրես:
4. Աղամը դըախտում բաղդաւոր չեղաւ, ո՞ւր



մնաց դուն լինիս:
5. Այո՛, և իմացիր, որ քչերին է վիճակւած:
6. Մտքիցդ հանիր բախտաւորութիւնը աշխար-հում գոյութիւն չունի:
7. Կլինես, եթէ միայն բնաւորութիւնդ փոխես:
8. Բախտաւոր ես ու կաս. էլ ինչ է քեզ պա-կաս:
9. Շատ մեծ դժբախտութեան կհանդիպես:

### Թ.

1. Գործիդ նայիր, բոլորն էլ հարուստ չեն կարող լինել:
2. Աստւած հոգևորից չը զրկէ. մարմնաւորը ինչ պէտք է:
3. Հոգով և ոչ փողով:
4. Ո՛չ, ո՛չ, հազար անգամ ոչ:
5. Եթէ ամուսնանաս, և եթէ ամուսնացած ես, երբ որդիք ունենաս:
7. Անպատճառ և շատ շուտով:
8. Կհարստանաս, բայց կդժբախտանաս:
9. Եթէ գանձ էլ գտնես, դարձեալ չես հարս-տանայ:

### Ժ.

1. Չի խաբում, հանդիստ եղիր:
2. Ոչ դու առաջինն ես, և ոչ էլ վերջինը:
3. Եթէ դու հաւատաս նրան, նա չի խաբի քեզ:

4. Էլ ինչ ես հարցնում, դու նորան ես խաբում, նա էլ քեզ։
5. Անպատճառ և այն օրական մի քանի անգամ։
6. Ո՛չ, ո՛չ, հազար անգամ ոչ:
7. Երնէկ նրան. քեզ էլ որ չը խաբէ, բաս ո՞ւմ խաբէ:
8. Ոչ, էլ երկրորդ անգամ չը հարցնես, եթէ ոչ կը փոշմանես:
9. Հեռու կաց, նրանից հեռացողը Աստծուն կը մօտենայ։

16-66

Լոյս տեսաւ և վաճառւում է

**1909 Թ.**

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

## ՊԱՏԻ «ՇԻՐԱԿ» ՕՐԱՑՈՅՑ

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.

ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԸ պարունակում է իր մէջ բոլորովին նոր ծիծաղաշարժ առակներ՝ թէ մեր թէ օտար ազգերի կեանքից, ժողովրդական [illegible] երգեր, զւարճալի հանելուկներ, զանազան հիւանդութիւնների վերաբերեալ բժշկական տեղեկութիւններ, առողջապահական կանոններ, տնային տնտեսութեան վերաբերեալ կարևոր խրատներ, աստղաբաշխական, տնտեսական, աշխարհագրական և այլ հետաքրքիր տեղեկութիւններ:

Տախտակը, գմագոյն սքանչելի մի նկար է «Յանութեան խորտակումը» — Տաճկահայերի ազատութիւնը:

---

**ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.**

Դիմել՝ Александрополь,
Карапету Ананянцъ

Գումարով գնողներին լինում է զեղչ

Չդիմել Ալէքսանդրապոլում ուրիշ ոչ մի հասցէով

6647, 6648, 6649

2013 2002

ՀՀ Ազգային գրադարան
NL0032821

ՀՀ Ազգային գրադարան
NL0032820

ՀՀ Ազգային գրադարան
NL0032819